

553

808

S-66

II-44
51.

2011



ԱՐՈՒԵՍ

ՏԱՂԱԶԱՓՈՒԹԵԱՆ

3.4.2. 17
808
5-66

1922
1215
W R

ԱՐՈՒԵՍ
ՏԱՂԱԶԱՓՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԴԱՍԱԳԻՐԲ
ԳՐԵՑ

Հ. ԱԹԱՆԱՍ Վ. ՏԻՐՈՅԵԱՆ

ՄԻԹԱՐԵԱՆ



2003

1913

ՎԵՆԵՏԻԿ. — Ս. ՂԱԶԱՐ

ԱԶՆՈՒԱՍԻՐՏ

ԵՒ

ԲԱՆԱՍԷՐ ԲԱՐԵԿԱՄԻՍ

ՊՐ. ԿԱՐԱՊԵՏ ԳԱԼՃԵԱՆԻ

ԴՈՅԶՆ ՆՈՒԷՐ

ՄԵԾԱՐՈՒ ՍԻՐՈՑ ԵՒ ԸՂԶԱԼԻՐ ՍՐՏԻ

Հ. Ա. Վ. ՏԻՐՈՑԵԱՆ



3772 - 73

8

ՆԱԽԱԲԱՆ

Գերպ. Նդուարդ չիւրմիւզեան հրատարակած է 1839ին, իրեն Արուստ Բանաստեղծութեան զրքոյկը, որ կրկին տպագրուած է 1867ին. Գրաքար ըլլալով՝ մոյմը հիմայ շատերուն անհասկանալի է, և որչափ ինծ ծամօթ է՝ մոյմ միւթիմ վրայ ուրիշ գրողներ եղած չեն. ուստի փափաքողներուն կ'ընծայեմ մերկայ համառօտ դասագիրքս աշխարհաքար լեզուով, որուն մէջ հետեւելով չիւրմիւզեանի՝ քացատրեր եմ հայերէն ոտանաւոր շինելու արուեստը, կոչելով մոյմը Յշդագոյն ամուտով Արուստ Տաղաչափութեան. որովհետև ոչ ամէն տաղաչափ՝ բանաստեղծ կրնայ ըլլալ և ոչ ալ ամէն բանաստեղծ՝ տաղաչափ, ընդհակառակն՝ կրնայ ամենշամ բանաստեղծ մը քաջ տաղաչափ ըլլալ, ինչպէս քաջ բանաստեղծ մ'ալ՝ թերի տաղաչափ:

Ներկայ դասագիրքս շինած եմ յատկապէս տարիներով առաջ իմ խմամբիս յամծնուած աշակերտաց համար, և մոյմը ամփոփոխ կը հրատարակեմ հիմայ՝ չուզելով զայն ծանրաբեռնել տա-

դաշափութեան արուեստին վերաբերեալ աւելի կամ պակաս օգտակար հմտութիւններով՝ կամ զարտուղութիւններով, որոնք աւելի մասնագէտներու կարևոր են, Այս վերջիններու համար զըրոյկիս վերջը իբր Յաւելուած զետեղեր եմ առ այժմ երկու յօդուածներ, որոնք այլ և այլ տարիներու մէջ լոյս տեսած են Բազմազգիւմ մէջ, երկրորդ տպագրութեան մը վերապահելով Յաւելուածին յօդուածներու թիւը շատցնել դեռ աւելի ցոխագոյմ և մոր յօդուածներով:

ՏԱՂԱԶԱՓՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

ՏԱՂԱԶԱՓՈՒԹԻՒՆԸ բան մը կանոնաւոր վանկերով գրելու արուեստն է:

Տաղաչափութիւնն արծակ գրութենէ կը զանազանի ոչ միայն կանոնաւոր վանկերու կազմութեամբ, այլ նաև կը տարբերի գլխաւորապէս բացատրութեանց մէջ, եթէ՛ ըստ բերականական կազմութեան, (զոր օրինակ հոլովմանց, լծորդութեանց, խնդրառութեանց մէջ, և այլն), և եթէ՛ ըստ համաձայնութեան մասանց-բանի և գործածութեան բերականական ձևերու և բառերու. վասն զի կան բառեր որ խորթ և անսովոր են արծակ գրութեան մէջ, մինչդեռ տաղաչափութեան կամ ոտանաւորի մէջ ընտիր կը համարուին, և դարձեալ ասոր հակառակը: — Ըսածնիս օրինակով մը բացայայտենք, թէ՛ արծակ և թէ՛ չափեալ նկարագրութիւն մը դնելով խաչակիր զօրաց Արեւելք դիմելուն:

Իբր ըզծովու ալեաց կուտակ
 Բորբորելով զան խիստ ու բարկ.
 Ափան ծովու ալի գունակ.
 Կամ զերդ աստեղս երկնից ի կարգ.
 Լընուն զամէն երկրի աստակ,
 Որպէս ըզծին ասարքատակ — Շնորհալի:

Գան սրտմտեալ բարկութեամբ հանդույն կուտակելոց
 ալեաց ծովու, բազմութիւն յոյժ, որպէս զաւազ առ
 ամեն ծովուն, և որպէս զաստեղս երկնից բազմութեամբ.
 և ծածկեն զերեսս երկրի որպէս զծին՝ սպիտակ իբրեւ
 զասոր: — Ե. Հիշումիդ:

Տաղաչափութիւնը կամ Ոտանաւորն եր-
 կու կերպ ունի. Թուական կամ Յանգաւոր
 և Չափական կամ Հայկական. որոնց վրայ
 պիտի խօսինք յաջորդ երկու գլուխներով:

ԾԱՆՈԹ. — Դասագրքի մը պարտաւոր յատկութիւն-
 ներն ըլլալով համառոտութիւն և պարզութիւն, մենք
 աւանդենք պիտի հոս Տաղաչափութեան միայն սովո-
 բական և ընդհանուր կանոնները, ի բաց թողլով ամէն
 անսովոր և խափանեալ զարտոգութիւն, որոնք ծանրա-
 քննութիւն և կամ թերեւ փնտասկար իսկ ըլլան նոր-
 ուաներու մտքին, հարեանցի միայն յիշեցնելով հոս թէ
 Հայանեաց գործածած ո՛ր և իցէ զարտոգութիւն՝ հի-
 մակուան ժամանակս անխորի գործածելը ոչ օրէնք է և
 ոչ ալ ներելի:

Գ Լ ՈՒ Խ ԱՌԱՋ ԻՆ

ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ

Թ ՈՒ Ա. Կ Ա. Ն Կ Ա. Մ Յ Ա. Ն Գ Ա. Ի ՈՐ

ԹՈՒԱԿԱՆ և կամ ՅԱՆԳԱՒՈՐ կ'ըսուի
 այն ոտանաւորն, որ հաւասար վանկերու
 համբանքով և տողերու նմանաձայն վեր-
 ջաւորութեամբ շինուած է:

Թուական Տաղաչափութեան մէջ ո՛ր և
 իցէ վանկ մը կը կոչուի նաև ոտք, որով
 ոտք և վանկ մի և նոյն նշանակութիւնն
 ունին:

Քանի մը ոտքերու միութիւնը կը կազմէ
 Անդամ մը, և քանի մը անգամներու միու-
 թիւնը կը կազմէ Տող մը, և քանի մը
 տողերու միութիւնը կը ձևացնէ Տուն մը.
 որով ոտանաւորի մը մասերը կ'ըլլան.

1. Ոտք, 2. Անդամ, 3. Տող, 4. Տուն:

1. ՈՏՔ

Տաղաչափական ոտքի կանոնները լաւ
 կերպով ըմբռնելու համար՝ հարկաւոր է
 գիտնալ այբուբենի իւրաքանչիւր գրերուն

փափկութեան կամ խստութեան աստիճանը: Հայերէն գրերը երկու դաս կը բաժնուին՝ Չայնաւոր և Բաղաձայն: Ստանաւորի մէջ ձայնաւորի զօրութիւն ունին նաեւ յ և հ հազագային ըստած՝ գրերը: Իսկ բաղաձայններն հինգ տեսակի կը վերածուին հետեւեալ կերպով.

1. Չայնաւորը

Պարզ. ա, ե, է, ը, ի, ո,ւ, օ (աւ, ով).
Երկրարբառ. . . աւ, եւ, իւ, ու, եաւ, ուա, ուե,
ուէ, ուի, ուո, այ, ոյ. ով.
Հագագ. յ, հ:

2. Բաղաձայնը

Լերկ (նորք, բարակ). ալ, կ, տ, ծ, ճ, գ, ժ.
Միջին (միջակ). բ, գ, դ, ձ, ջ, —, —, վ.
Թուշ (յոյր, խաժ). փ, ք, թ, ց, չ, ս, շ, ֆ.
Նայ (փափուշ). լ, մ, ն, ը, ո.
Կոկորդային. խ, զ.

Բաղաձայնները կը բաժնուին դարձեալ հետեւեալ կերպով.

Խոշոր կամ Անձայնը

Լերկ. ալ, կ, տ.
Միջակ. բ, գ, դ, վ.
Թուշ. փ, ք, թ, ֆ.
Նայ. լ, մ, ն, ը, ո.

Կիսաձայնը կամ Շփոյր

Լերկ. ծ, ճ, գ, ժ.
Միջակ. ձ, ջ.
Թուշ. ց, չ, ս, շ.
Կոկորդային. խ, զ.

Գրերուն մէջէն Անձայնները փափուկ և անուշ գիր կը համարուին, իսկ Կիսաձայնները դժուարահնչիւն և անախորժ: Ներդաշնակութեան համար ջանալու է, ինչպէս արձակ գրութեան, այսպէս մանաւանդ ոտանաւորի մէջ այս վերջինները բովէ բով չհանդիպեցնել, և ըստ կարելոյն խորշիլ բովէբով գործածելու այն բառերն՝ որոնց մէջ խիտ առ խիտ կը գտնուին այս գրերը, ինչպէս են խղիւսայր, խողխողումն, խողբարտիւն, ղողակ, ղողուն, շրջըշուն, ժիտր, խժոժական, անձկացուցիչ, ձնէլէր, ձողողեր, զածած զագրարորմի, զպարտաւորու, զպարտակ, զսկզբնագարդ, սաքեղ ինչ ո՛չ մերձեցիկ, ձեղ ոչ տեւեցաց՝ ցանայք ի նակիր, և այլն:

Տաղաչափութեան մէջ ոտքերու կազմութեան կանոններն հետեւեալներն են.

1. Չայնաւոր մը առանձինն և կամ բովը գտնուած բաղաձայններով մէկտեղ՝ մէկ վանկ կամ ոտք կը կազմէ, ի բաց առեալ 2 ձայնաւորը:
2. Երկբարբառ մը առանձինն և կամ բովը գտնուած բաղաձայններով մէկտեղ՝ մէկ ոտք կը կազմէ:
3. Չայնաւորներէն ը գիրը բառերու մէջ երբեմն ոտք կը կազմէ և երբեմն չի կազմեր, կամ տաղաչափական բա-

ցատրութեամբ ըսելով՝ երբեմն կ'երկարի և երբեմն կը սղոյի. այս ը գրին երկարիւ և սղուիւ կ'ըսուի քանակ բառից:

4. Ուս, ուն, ուի երկրարբառներն բազմավանկ բառերու մէջ կը սղուին, իսկ միավանկ բառերու մէջ՝ եթէ նախդիր չունին՝ սովորաբար երկրարբառը երկու վանկի կը վերածուի՝ ո գրին տեղ ը գրուելով, զոր օրինակ լուս, զուարթ, նուազ, և այլն, կ'ըլլան լուս, զուարթ, նուազ, և այլն:

5. Երբ երկու ձայնաւոր քովէ քով գան՝ սովորաբար մի և նոյն տեսակ ձայնաւորները կը սղուին, իսկ մէկմէկէ տարբեր տեսակ ձայնաւորներն ազատ են սղուելու կամ թէ ոչ. զոր օրինակ.

Զի մի՛սոցունց արկցիս տապաստ,
Ապ'եթէ ոչ տալ կամիցիս,
Բարունական սիրոյն տիպար
Կացուցանե անմիջաբար. ևն:

Սովորութիւն եղած է սղմունքներն ապաթարցով նշանակել:

6. Ոչ շաղկապը յաջորդ ձայնաւորին հետ միանալով՝ մէկ ոտք կը կազմէ միշտ, զոր օրինակ.

Վասն իմ ի լաց նիստ ուի սըզի,
Կականալիւ ուողորմելի:

ճատ անգամ ալ ո գիրը մէկդի թողլով՝ ապաթարցով կը նշանակուի, զոր օրինակ.

Հայել վերջին օրն և ի մահ,
Ի՛ր սպանալեացն երկիւղ և ահ,
Մասնէ զզերիս իմ ի յապտակ,
Սուր է՛ր զընդան ձեր փխաճակ, ևն:

Ըսինք որ ը գիրը բառերու մէջ երբեմն կ'երկարի և երբեմն անհետ կ'ըլլայ, որով բառից քանակը կը փոփոխէ: Բառից քանակը կը փոխէ ը գիրը 1. զ նախդրի առջև, 2. զիմօրոջ յօդերու առջև, 3. ըստ և ընդ նախդիրներու մէջ, 4. նայ տառերու մէջ, 5. քանի մը բաղաձայններու զուգադրութեանց մէջ:

Ծանօթ. — Սովորութիւն եղած է՝ երբ ը գիրը չի սղուիր՝ ոտանաւորի մէջ նիւթապէս գրելու. այսպէս. գըլիաշոր, մեքընտու, շըրըրբըլ, ևն:

2 ՆԱԽԴԻՐ

2 նախդրին սղուելու կամ երկարելու կանոններն հետեւեալներն են.

1. Թէ որ զ նախդրէն առաջ կամ վերջը ձայնաւոր գիր կամ հագագ գտնուի՝ միշտ կը սղուի, զոր օրինակ.

Լուսաւորեա՛ զխաւարս անձին,
Ում թէ սըրտիւ լինիս ի յոյզ,
Զհոգիդ մաքուր պահէ և լոյս, ևն:

2. Թէ որ զ նախդիրը երկու նայ գրերու

մէջ գտնուի՝ սովորաբար կը սղուի,
գոր օրինակ.

Նարդոս քրքբում զմուռ ընդ հալուին:

3. Թէ որ զ նախորէն առաջ կամ վերջը մէկ նայ զիր միայն գտնուի, երբեմն կը սղուի և երբեմն կ'երկարի, նայ զրին քովի բաղաձայններուն անուշու թեան կամ խստութեան համեմատ: Իսկ երկու բաղաձայնից մէջ ընտրելագոյն է միշտ երկարել՝ խստութեանէ խորշելու համար. զոր օրինակ.

Կոչել զգրաքցիս զերաշխարհին,
Զի կատարեալ էառ զքնութիւն,
Գեր ի վերոյ քան ըզքնութիւն,
Որպէս ըզգին աստաքատակ:
Եւ հարկանէ՝ պինդ ըզքարի. հն:

4. Բայց միավանկ բառերու մէջ՝ թէ որ
զ նախդիրէն վերջը կրկին բաղաձայն
ըլլայ՝ հարկ է միշտ երկարել. գոր օրի-
նակ.

Ըզտղայսն ի ստեանցն քեցէին,
Ծածկեալ ըզգլուխըդ կըռփէին. ևն.

Ծանօթ. — Այս կանոններն հաստատարւոյն կը զօրեն նաեւ այն բառերուն համար, որոնց մէջ չ'ը բառին սկզբնա-
գիրն է և ոչ թէ նախդիր, զոր օրինակ, զարդ, զորավար,
զինաւոր, ևն. — Բայց ընդհանրապէս ուր որ ապտան է
սկիզբ կամ երկարելով, լաւ է միշտ երկարել քան սղել.
վանս զի արդէն սիւր բառերուն մէջ բաղաձայնները
բազմաթիւ են, և ստորաջափը պէտք է ուշ զնե անոնց
թիւը զեռ հսկել չլսացողներու:

ԴԻՄՈՐՈՇ ՅՕԴԵՐ

Դիմորոշ յօգերուն սղուելու կամ երկարելու կանոններն հետևալներն են.

1. Թէ որ Ղըմորոշ յօղէն առաջ կամ վերջը ձայնաւոր կամ հազագ գտնուի՝ կը սղուի, զոր օրինակ.

Զանկեալս ի մեղս անդրնդային:
Ըզքեզ որ զանձդ ես երկնային.
Այլ որ նըստիսդ յերկնից երկին:

2. Թէ որ դիմորոշ յօդ մը երկու նայ
գրեբու մէջ գտնուի՝ կը սղուէի, զոր-
օրինակ.

Առ դրունս շուտոյ անաւօտիդ:

3. Մէկ նայ գրի բով միայն՝ գիմորոշը
բովի եղած բաղաձայններուն անուշ
շութեան կամ խստութեան համեմատ
կը սղուի կամ կ'երկարի. բայց ընդ-
հանրապէս լաւ է երկարել քան թէ
սղել. զոր օրինակ.

Ընդ սանդղածե բանքս քոյին,
Մինչ ի յականջս հրնչեալ ուժդին:

4. Բայց երբ սղելով՝ կրնան բառերը ու
րիշ նման բառերու հետ շփոթիլ՝ այն
ատեն հարկ է միշտ երկարել: Այս-
պէս են զոր օրինակ՝ բանդ, շանդ,
մարդդ, վարդ, պարսկ, արքայդ, բա-

Արոշեան Տաղաչափ.

ZUZH-Apm.CCP

М. А. Мясникян
ГЕИШЬИЗИШЬ ИШИШЬ

սրև, ուշիւ, և այլն, որոնք կրնան նմա-
նաձայն բանի, շանդ, մարդ, վարս,
պարս, գորս, լուռն, ուշիւ բառերուն
հետ շփոթուիլ:

Ծանօթ. — Ինչ որ դիմորոշներուն համար Եւֆրատ,
կը պատշաճի նաև յորենակի կազմող և տառին, և կամ
երբ և, դ, ն, զրեք բառին մասն ըլլան և ոչ յօդ, զոր
օրինակ հետեւեալ բառերուն մէջ զադքերս, զճարսունս,
ցիրդ, բոյս, բունն, են:

ԸՍՏ ԵՒ ԸՆԴ ՆԱԽԴԻՐՆԵՐ

Ըստ և ընդ նախդիրներուն սղուելու
կամ երկարելու կանոններն հետեւեալներն
են.

1. Երբ ըստ և ընդ նախդիրներէն առաջ
կամ վերջը ձայնաւոր գտնուի՝ կը
սղուին, զոր օրինակ.

Ձի'նդ փեսայիդ ի յառազատ:
Գ'առաջ նորա թըռչիս ամպով:
Գարձեալ ասեմք'ստ անառակին. են:

2. Երկու նայից մէջ լաւ է երկարել քան
թէ սղել, թէպէտ և նախընթաց կամ
վերջընթաց վանկին փափկութեան հա-
մեմատ կրնայ նաև սղուիլ վայելչա-
պէս, մանաւանդ մ և ն տառից առջև,
զոր օրինակ.

Առեր մարմին 'ստ մերոյ բնութեան:
Միշտ ընթանան 'ստ մասին աճման:
Իսկ յարուցեալ 'ստ բանին խոստման:

Ծանօթ. — Ըստ և ընդ նախդիրներուն նկատմամբ
ըսածնիս կը պատշաճի նաև ըստ, ընդ և ը գրով սկսած
բառերու, զոր օրինակ. ընտանի, ընդհանուր, ըստանձնել,
ըստգտանել, են:

ՆԱՅ ՏԱՌԵՐ

Նայ տառերուն սղուելու կամ երկարե-
լու կանոններն հետեւեալներն են.

1. Նայ տառերը բազմավանկ բառերուն
սկիզբը՝ բաղաձայնէ մը վերջը դրուած՝
կը սղուին, թէ որ իրենցմէ վերջը չը-
յաջորդեն ուս, ուէ, ուի, ուո կրկնակ
երկրարբառները. զոր օրինակ.

Վրիպեաց սնապարծ խրով բանիս:
Այլ երբ ճրագ ընդ գրչուանին:
Ըզզրդուութիւն կըռռասիրին. են:

2. Նայ տառերը միավանկ բառից սկիզբը՝
թէ որ իրենցմէ առաջ զ կամ ի նախ-
դիր ունին՝ կը սղուին սովորաբար,
զոր օրինակ.

Եւ ոչ տըստ տըղայն ի նմին:
Ծածկեալ ըզգրուիւրդ կըռփէին. են:

Բայց թէ որ նախդիր չունին՝ ազատ
են սղուելու կամ երկարելու՝ նախընթաց
վանկին փափկութեան կամ խստութեան
համեմատ. բայց ընդհանրապէս լաւ է եր-
կարել քան թէ սղել:

3. Բառերուն վերջը գտնուող նայ տա-
ռերը թէ որ բաղաձայնի նախընթաց

են՝ կը սղուին, զոր օրինակ. բանտ, զոռնդ, զարդ, արբ, ամբ, տռնր, եղր, ոռնպ, խռնր, Լն. բայց վերջընթաց բաղաձայնի՝ չեն սղուիր, թէ որ նախընթաց կամ վերջէն ձայնաւոր կամ հազագ չունենան, զոր օրինակ.

Յօդէր արտօսար ցաւաղին
Մայր Տեանն որ կայր մերձ առ խաչին:

4. Թէ որ բառերու վերջը՝ նայ գրէն վերջ դիմորոշ յօդ գտնուի, նայ գիրը կը սղուի, դիմորոշը չի սղուիր, զոր օրինակ.

Բախեմ ըզդուռնդ երկնային:
Դուռն բանայ քեզ դիտութեան:

ԶՈՒԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԲԱՂԱՁԱՅՆԻՑ

Չուգադրութիւն բաղաձայնից ըսելով կը հասկըցուի երկու կամ աւելի բաղաձայն գրերու քովէքով հանդիպիլը, որոնց սղուելուն կամ երկարելուն կանոններն հետեւեալներն են.

1. Սովորաբար բազմավանկ բառերու ըսկիզբը հետեւեալ չուգադրութիւնները կը սղուին. ստ, սք, սկ, սպ, սք, սփ, սի, կտ, պս, քս:
2. Միավանկ բառերու մէջ չեն սղուիր՝ թէ որ առաջ կամ վերջը ձայնաւոր գիր չունենան. զոր օրինակ.

Քանդի և սկիզբն իմաստութեան:

Այսպէս նաև կըտակ, պըտակ, ըսփիռ, ըսպառ, և այլն, կը սղուին՝ առջևնին նախդիր ունենալով, զոր օրինակ. ի կտակ, ի պսակ, ի սփիռ, ի սպառ, և այլն:

3. Թէ որ հնչման մէջ ը գիրը չուգադրութեան սկիզբն է, ինչպէս ըսփիռ, ըսպառ, ըսկիզբն, և այլն, եթէ չուգադրութեան վերջը ուրիշ նայ տառ մ'ալ աւելցուի՝ դարձեալ կրնայ սղուիլ, զոր օրինակ. ի ստրակ, ի ստռակ, և այլն. բայց թէ որ ը գիրը երկու բաղաձայնից մէջ գտնուի, այն ատեն նայ տառը չի սղուիր, զոր օրինակ. կըտրատել, սըխրայի, սըփռել, և այլն: — Ասոնցմէ զատ ուրիշ որ և իցէ բաղաձայնից չուգադրութիւն ներելի չէ սղել՝ թէ որ առաջ կամ վերջը ձայնաւոր չունենայ:

2. ԱՆԴԱՄ

Քանի մը ոտքերու միութիւնը, ըսինք, կը կազմէ Անդամ մը, և քանի մ'անդամներու միութիւնը Տոյ մը. իսկ տոդի մը զանազան վանկերը այլեայլ կանոնաւոր մասանց բաժնելը կ'ըսուի Անդամատուրիւն:

Տողի մը անդամները կը բաժնուին Շեշտով և կամ Հանգիստով:

Հայերէն բառերը բոլոր բառեր են, այսինքն ձայնը կ'երկընցուի կամ կը հանգչի բառերուն վերջին վանկին վրայ. ուստի երբ այս վերջին վանկին յաջորդէ այնպիսի բառ մը՝ որ իր նախընթացին հետ տրամաբանական սերտ յարաբերութիւն ունենայ, (որով իբրեւ թէ մէկ իմաստ բացատրող բարդ բառ մը կազմեն երկու բառերը), այն ատեն առաջին բառին վերջին վանկը բոլոր շեշտի տեղ՝ սուր շեշտ կ'ունենայ, զոր բանական շեշտ կը կոչենք տաղաչափութեան մէջ. զոր օրինակ. երկիր պագանեկ, այցելո՜ւ լինեկ, շոյտ վազվազեկ, առաւել՝ աղերսեկ, և այլն. այսպիսի պարագայից մէջ անդամատուծիւնը շեշտով կը ըլլայ, և կարգալու ժամանակ պէտք չէ ձայնին հանգիստ տալ. իսկ ուր շեշտ չկայ՝ ձայնը հանգիստ կ'առնու, և անդամատուծիւնը հանգիստով կ'ըլլայ:

Չոր օրինակ շեշտերով անդամատուծ տողեր են հետեւեալները.

Աստ չէ՛ պարտ քեզ ասե՛լ ոճով զեղեալ ըսքանչիւն.
Անդ կարմիր ծովըն հերձեալ լինէր, դիզան ջուրքըն
(կային.
Ճեղքեալ մածեալ ուրբոք խորոց երթեալ պատուէին.
Ձի է պարծանք ըստոյդ և թանգ արքունական,
Որպէս զըրէ՛ Պաշուս, անթ' թն այն ընտրութեան.
Տխրութեո՛ս որդեակ' լիցիս ի խրախուժեան,
Անամոթ քարոզ խաչի՛ն վրկայութեան:

Հանգիստով անդամատուծ են հետեւեալ տողերը:

Մերկ ելաք / յորովայնէ / և մերկ գրնիմք / ի տապանին,
Խորհուրդ մեծ / և սքանչելի / որ յայսմ աւուր / յայտնեցաւ,
Հովիւքն երգեն / ընդ հրէշտակս / տան աւետիս / աշխարհին,
Գըլխոյս, ասէ, / չէ ինչ պիտոյ / լուսցումըն ջրոյ, / զի
(լուսցեալ է,
Ո'վ Պետրէ / լուր ձայնի / զոր հարցանես / պատասխանի,
Լոյսն առաջին / հայր կոչի / և յետ նորա / որ ի կարգի,

Շեշտով—հանգստով խառն անդամատուծ են հետեւեալ տողերը.

Նորահրա՛շ պրտակաւոր / և զօրագո՛ւն առաքինեաց,
Վառեցար / զինու հոգւոյն / արիարար / ընդդէմ մահու.
Վարդան քաջ նահատակ / որ վանեցեր / ըզթընամին,
Վարդապետն արեամբը. քո / պրտակեցեր / զեկեղեցի.
Աղբիւր կենաց / բաշխող շնորհաց / Հոգիւ իջեալ / ի
(բարձանց,
Չանապական պարզեւր քո / բաժանեցեր / յառաքեալսն.
Ուրախացի՛ր, սրբորոհի, / Գարբիւլի՛ աւետեքն,
Որ քարոզեացն / ըզգալուստ արքային տեան / ի յերկնից:

Հայերենի մէջ կան սակաւաթիւ բառեր, որոնց շեշտը վերջին վանկին վրայ չի հանգչիր, այլ նախընթաց կամ դեռ աւելի առաջ եզոզ վանկին վրայ: Երբ շեշտը բառին վերջընթեր վանկին վրայ ըլլայ՝ բառը յարաշեշտ կ'ըսուի, և նախադարձեշտ կը կոչուի՝ եթէ շեշտը զբառնուի վերջընթերէն առաջ եզոզ վանկին վրայ: Այս տեսակ բառերը բարդ և կամ ածանցեալ բառեր են զրեթէ բոլորն ալ: Այս բառերուն առաջին մասը՝ ուր շեշտը

կը հանգչի՝ իրմէ նախընթաց անդամին
մասն կը կազմէ, և մնացածը յաջորդին
կ'անցնի, զոր օրինակ:

Որպէս և յայն՝ ժամ ըզնոսին,
վարեն մինչ յայն՝ կոյս անընակ:

Ըստ Նախնեաց գրութեան և ըստ այժ-
մեան հնչման՝ ընտրեւագոյն և հասարակ
եղած յարաշեշտ բառերն են հետեւեալները.
Այսպէս, այդպէս, այնպէս. — Սոյնպէս,
դոյնպէս, նոյնպէս. — Այսչափ, այդչափ,
այնչափ. — Սոյնչափ, դոյնչափ, նոյն-
չափ. — Այսքան, այդքան, այնքան. —
Սոյնքան, դոյնքան, նոյնքան. — Այս-
գոյն, այլազգ, պէսպէս, այսինքն, այսօր,
յայնժամ. — Քանի՛օն, գրեթէ, թերեւ,
տինա, հապա, բաբէ. — Ո՞րպէս, ո՞րչափ,
ո՞րքան, յայսկոյս, յայնկոյս, և այլն:

Նախադարաշեշտ են հետեւեալները.
Ահաւիկ, ահադիկ, ահանիկ. — Ահաւասիկ,
ահաւադիկ, ահաւանիկ. — Մանաւանդ,
նոյնժամայն, վասն այսորիկ, յաղագս
այնորիկ, (բայց այսորիկ աղագաւ, են):

Բառերու վերջին վանկին մէջ գտնուած
ը գիրը կամ հնչումը բնաւ չի կրնար
բառին հետ մնալով՝ անդամի մը վերջին
վանկը կազմել, այլ միշտ յաջորդ անդա-
մին կ'անցնի, զոր օրինակ.

Անձինք / նըլերեա՛ / լըք սիրո՛յն / Գրեառոսի.
Ղեկավա՛ / ըք ճարտարք / հողեո՛ր / կենցաղոյս,
Թեթեալե՛ / ոքն մարմնով / և մըտօք / սըլացեալ, են:

Այսպէս նաև եթէ տողի մը վերջին
անդամին մէջ գտնուի՝ ըստ Նախնեաց ա-
զատութեան, որ հիմայ խափանուած է և
նեւերի չէ, կ'անցնի յաջորդ տողին, զոր
օրինակ.

Հողիք հրեղէնք / և սպասաւո՛ /
ըք Հրեշտակաց / զխնուորութիւնք,
Աթոռք անե՛ղ / աստուածութեա՛ /
նրն Համազոյ՛ / երբօրգութեան, են:

Ծանօթ. — Անդամի մը մէջ գտնուիլէ վանկերուն
թիւը, կամ անդամի մը քանի՛ ոտքէ բաղկացած ըլլալը՝
կախումն ունի տողերու բաժանումէն, զոր հիմայ պիտի
տեսնենք:

Յ. ՏՈՂ

Մեր լեզուին մէջ տող մը սովորաբար
երկու կամ երեք և կամ չորս անդամներէ
կը ձեանայ, և կ'ըսուին երկանդամ, եռան-
դամ և քառանդամ տողեր. բայց կան նաև
միանդամ հնգատնեան տողեր, ինչպէս Ժա-
մագրքի մէջ եղած Առաջօտ յաւայ և անոր
նմաններն. նաև ամենաքիչ անգամ զոր-
ծածուած կը տեսնուի հնգանդամ տողեր,
զոր օրինակ.

Այսօր / զիմանալի / լուսոյն ծագոյն / ի խաւարի / նըս-
տեւոյս,
Այսօր / զանտանեւի / Բանիդ բարձոյն / ըզբերովքէն / հո-
ղեղէն, են:

Տողի մը իւրաքանչիւր անդամին մէջ
զտնուելիք վանկերուն թիւը կախումն ունի
տողի մը անդամներուն թուէն. զոր օրինակ.

Միանդամ տողի մ'անդամն ճնդունեան է.

Երկանդամ տողի մ'անդամն եռոտնեան կամ քառոտնեան
կամ ճնդունեան է.

Եռանդամ տողի մ'անդամն եռոտնեան կամ քառոտնեան
կամ ճնդունեան է.

Քառանդամ տողի մ'անդամն եռոտնեան կամ քառոտ-
նեան է.

ՄԻԱՆԴԱՄ ՏՈՂԵՐ

Այժմ մեռանիմ	Յառաքինազարդ
Տերեւոյ հանգոյն	Թէ զընաս ուղիղ
Եւ ես մահ ըզնոյն.	Որդեակ, ընդ շաւիղ,
Սուղ իսկ են կեանք իմ:	Անմահ քաղես վարդ.
Այլ նա ի յերկիր	Թէ սիրտ քո մատաղ
Անկանի արժգոյն,	Իցէ անբառացիւտ,
Յաւերժ ի յաճին	Ո՛հ, չէք քան ըզբոյր
Դառնալ մահակիր.	Շուշանիկ չըքնաղ
Իսկ ես ընդ եթեր	Բայց յո՛ւշ քեզ, որդեակ,
Յայնժամ ի թեթե	Ձի զձեռն անըզդոյշ
Սաւանեալ ի թե	Խոցէ քրտամափուշ
Ճախր առնում ի վեր:	Եւ վարդին դաստակ

Եղ. Հիւրմիշ:

Անիւան:

ԵՐԿԱՆԴԱՄ ՏՈՂԵՐ

Եռոտնեան

Այլ շու զգօն / Գրիգորէ
Ի ախ յայդ / զարնայնի
Զուզուլթինս / զոր բերէ
Շնորհաց հոյլ / զհեղանի,
Մի՛ միայն / ընդ երեսս,
Այլ և խոր / ի սըրտիդ
Այժմէն քաջ / սրտիտեսցես,
Գոլ զարուն / մըշտափթիթ:

Անիւան:

Քառոտնեան

Տուք ձեռն ի ձեռն / հապա մանկունք
Հրաւեր ի դաշտ / կարդան ծաղկունք.
Գեղեցկազոյն / տարւոյ ամիս
Ան հասեալ / է միջ Մայիս.
Զաստուածային / աստ տեսէք սէր,
Եւ օրնեցէք / մանկունք ըզՏէր:

Անիւան:

Եռոտնեան եւ Քառոտնեան խառն

Աւք զեղեցիկ / ցօղազին
Լացէք ըզմահ / սոխակին.
Վայ և եղուկ / ինձ հիբիս,
Սուգ և ի յիմ / սիրելիս.
Զամենեսին / մի խաւար
Դընէ յարտօսր / անդազար,
Մի՛ զիս, մի՛ զիս / բափփէք,
Մի՛ դիւր սըրտիդ / տալք երբէք.
Ձի սէր սոխակն / իմ լրտեսց
Սան իմ սիրուն / երզասաց,
Ձի սէր հաւիկն / իմ մեռաւ,
Սան իմ սիրուն / անպարտաւ:

Բագրատունի:

Հապա, առ ձեզ / բարբառիմ,
Յոյս հայրենեա / ցըր ձերոց
Մանկաթ ըզգօն / և ուշիմ.
Զեզ ծերունին / արդ ի մուշլ
Աղիողորմ / ի հառաշ
Մընայ դէտա / կըն կալեալ.
Լուցէք, լուցէք / ժիրաժիր,
Եւ զվառ ի ըոց / խմաստից
Բարձեալ ըզձահ / լուսածիր,
Սուցէք ի բնիկ / ի յաշխարհ,
Մերժել ի բաց / ի նմանէ
Նըսեմաստուէր / ըզխաւար:

Հիւրմիշ:

Ճնդունեան

Բայց արքայ զարթնու, / զէն, զէն մըրքնէ.
Ո՛ր ախոյեան կայ, / կամ առ նա տայ ձայն:

Տեսանեմ րդհետս / անազին հրբոյ,
 Որում թըշնամի / տեղի տացեն գունդք.
 Ձիարայեւեան գէնս / համակ հասարակ
 Անթըլիատ արեամբ / հայիմ թըխացեալ,
 Շանդեռանդ փայլակն / անա սըլանայ,
 Քար ի պարսատիկէն / ոչ այնչափ երազ
 Եւեալ սըլասցի, / որչափ խորտակէ
 Երկաթ ի ձեռին / յաղթողն հըզօր:

Բագրատունի:

Բաց ի այս սովորական երկանդամ տո-
 ղերէն՝ կան նաև ուրիշ քանի մ'անսովոր
 բաժանմունքներ, և կամ կիսուած եռոտ-
 նեան կամ քառոտնեան անդամներ, զոր
 օրինակ հետեւեալներն.

Երկոտնեան եւ Հնգոտնեան խառն

Ձի սուրբ / զի օրհնեալ, զի մեծ
 Անուն / դրոշմեալ յայտս աստեղց.
 Ո՛վ լի / խորհրդով անհաս,
 Անճառ / սքանչելեօք զեղուն,
 Որ բնաւ / զըրկածես դաշխարհս
 Խընկեալ / պաշտեցեալ անուն,
 Մանկիկ / ընդ անուան մօրն իւր
 Ըզկոյս / Մարեմու տալ զուր:
 Եւ մայրն / և որդեակ և հայր,
 Գերի / ազատ, ձուխ ուաղքատ,
 Մարտիկն / ի մահուն իսկ վայր
 Կարգան / զՄարիամ անհատ:

Արիւն:

Կիսուած քառոտնեան

Այս հանդոյն Այլ նա ծնանի իսկ փախըստեալ
 Առջգդ հասակ Վերակնցաղ Քոյդ մանկութիւն
 Ի դարնայնոյն Ամի ամի Ոչ ևս դառնայ
 Ո՛ւ պատանեակ. Պերճ և չըքնաղ. Ի տիս ի նոյն,
 Հիշրմիզ:

ԵՌԱՆԴԱՄ ՏՈՂԵՐ

Եռոտնեան

Իմաստուն / սուրբ կուտան / զերարգոյ,
 Հրով բանին / ի յերկր / արկելոյ
 Վառեցեր / ըզլապտեր / հաւատոյ,
 Հըրեշտակ / հրաշագեղ / Հոխիսիմէ,
 Սիրանունդ / սիրամարդ / սըլարալի,
 Նըրբափայլ / ոսկէթէլ / տարփալի,
 Եռապսակ / իւղազուխ / ցանկալի,
 Հըրեշտակ / հրաշագեղ / Հոխիսիմէ,
 Ի գունեղ / թաթաւեալ / ի բոսոր,
 Սաղարթուն / կարմրորակ / զերդ խընծոր,
 Հարսն ազնիւ / դու արեամբ / քօղաւոր,
 Հըրեշտակ / հրաշագեղ / Հոխիսիմէ:

Շնորհալի:

Քառոտնեան

Ծարաւեցաւ / Տէրն ի խալին / որպէս ըզմարդ,
 Սյն որ արար / զովկիանոս / ծով գեղեցիկ.
 Սամարացւոյն / ջուր խընդրելով / աղբերն Տէր,
 Սյն որ արբոյց / տիեզերաց / զանմահութիւն:

Շնորհալի:

Եռոտնեան եւ Քառոտնեան խառն

Ոչ, ամբարիշտք, / աչք Բարձրելոյն / ոչ նընջին.
 Եւ հազար ամ / արդարութիւն / թէ լրուէ,
 Ձանդարձ վըճիւն / յոր հատտաթին / բաղդք ամէն,
 Հրապարակել / մահացուաց ոչ / յամեացէ...
 Շենդաւորի / չըյաջողեաց / յաւիտեան.
 Ոչ վայելէ / զաւոզ ի դան / անկասկած.
 Ձըկան երկինք / իսկ զըրկելոցն / առ ի ձայն,
 Հող ոչ ծըծէ / զարիւն, զարտօսր / անմեղաց:

Արիւն:

Հնգոտնեան

Բանան դրունք ողջոյն / թափ ի դուրս ոստի / հրոսակ
 (ամբոխին,
 Հետի ու այրուծի, / և չոխդըն ճայթեաց / ամպրոպ
 (ահագին,
 Մինչ ուաղ՝ արարեալ / ի մի համագունդ / զըրդէին ի
 (վայր:

Ճակատ առ ճակատ / միմեանց ի դիմի / բախէին զու-
 (պար,
 Կիզակ և վաճան / և սրբամիտութիւն / քաջաց կորովեաց,
 Կուռ կարծրածակութիւն / սպառնալէն վառեալ / բուռն
 (ախոյանաց,
 Անդէն կըմբաւոր / ասպարաց կոփին / ընդ իրեաք
 (խեթկէր,
 Եւ որոտընդոստ / բոմբին խաղմարար / թընդայր դը-
 (զըրդէր,
 Անդ զոյժ խառնաձայն / անկեղց մընչին / զուր նա-
 (հատակաց,
 Եւ յատակք երկրին / վիժեալ խոխոջէր / յապաժոյժ
 (արեանց,
 Բագրատունի:

Եռանդամ անսովոր տողեր

Երկոտնեան եւ Հեգոտնեան խառն

Կոր ծընաւ Փըրկիւ / օծեալ / ի քաղաք Դաւթի,
 Երկինք երկնայնօք / ասոնն / ըզծընունդ Փըրկիւին,
 Սոսկացեալ խըմբից / մոզուցն / ընդ փայլունն աստեղ,
 Ի յերկըրպաղել / ծնելոյն / եկեալ ընծայելու,
 Սարսեալ Հերովդէս / զողայր / ընդ լուր արքային,
 Ի խընդէր մահու / շարժեալ / կենաց կենսատունի,
 Արեամբ անմեղաց / մանկանց / լընոյր զԲեթղէնէմ,
 Յառաջեալ տըղայք / վըկայք / տըղայացելոյն,
 Շնորհալի:

Քառոտնեան եւ Հեգոտնեան խառն

Տէր փառաց անճառ / ծընեալ յառաջ / քան զյախտահան,
 Կոյն ծընաւ ալսօր / ի Բեթղէնէմ / քաղաք Դաւթի,
 Կրտսեան ի քրովբէս / յաթոս փառա / ցըն հինաւորցն,
 Ի զերկըս Կուսին / տըղայապէս / բառնի մանուկ,
 Շնորհալի:

ՔԱՌԱՆԴԱՄ ՏՈՂԵՐ

Եռոտնեան

Ո՛հ, ուսայ / չուսուութեամբ / և անդ յայն / ժամ Ա-
 (տուած,

Յայնժամ մեծ / բարկութեամբ / ի կառավար / իմ հնար,
 Եւ ընկէց / զիս, եղճիւ / ի վայրագ / ճանապարհս,
 Կործանեալ / արացի / զխընդութիւնս, / ո՛հ, աւաղ...
 Ո՛հ, միւս ալլ / ևս աղէտս / եղկելիս / տեսանեմ,
 Զինչ ևս ալլ / զինչ ինձ բաղդ / ճանդերձեալ / կայ
 (մընայ,
 Պի ձեռին / ունիմ արդ / ևս զորդին / իմ մեռեալ,
 Վա՛հ, և զմիւ / սըն՝ մեռեալ / տեսանեմ / յանդիման,
 Բագրատունի:

Քառոտնեան

Երջանիկ / յառաջընթաց / եկիր մաքրողդ / ի Յորդանան,
 Քարոզեցեր / Գառն Աստուծոյ՝ / որ զայ բառնայ / զմեղս
 (աշխարհի,
 Տէրն զայր / ի Յորդանան / ի լուանալ / զմեղըս մարդ-
 (կան,
 Հրածարէիր / Զայնդ ի Բանէն, / ինձ ի քէն պարտ / է,
 (չեմ արժան,
 Ի ձայն անեղ / Հայր վըկայէր, / և Հողին սուրբ / անդ
 (Իշանէր,
 Դա է որդի / իմ սիրելի, / լուարուք որդիք / նոր Սիրնի,
 Կորոզողին / տիեզերաց / զու հայցէիր / յառաջընթաց,
 Երթեմ ասեմ / ևս նախախալց / անդ ի ժողով / մար-
 (զարեաց,
 Տէր նահապետք / և մարգարէք / զոր ասացիք / զայ
 (տեսանէք,
 Աւետիս տամ / տեսանողացն, / արիք ելէք / բանաւդ
 (մեղաց,
 Սագիստրոս:

Քիչ անգամ կը գործածուի նաև եռոտ-
 նեան և քառոտնեան խառն քառանդամ
 տողեր, ինչպէս են վերջի օրինակիս ա-
 ուղին և երրորդ տողերն, որոնք իրենց
 առաջին անգամին մէջ եռոտնեան են, ուր
 ձայնը ընթերցման ատեն բնական երկա-
 ռութիւն կ'առնու, և երկարելով ոտքին
 պակասը կը լեցընէ, չափական տողերոշ

նմանութեամբ, որոնց վրայ յաջորդ գըլ-
խոյն մէջ պիտի խօսինք:

Ծանօթ. — Չափազանց և թերեւ փնասակար իսկ
կ'երևի ինծի ոմանց զգուշութիւնը, որոնք կը պատուի-
րեն տողի մը մէջ սկսած իմաստ մը՝ յաջորդ տողին
չանցընելու, մինչդեռ անթիւ են այս աղատութեան՝
Նախնեաց դորձածած օրինակները, որոնք այսպիսի
դիպուածոց մէջ տողին վերջին վանկը սովորաբար շեշ-
տաւոր կը ձգեն, և քիչ անգամ հանգիստ:

ՅԱՆԳ

Տաղաչափութեան մէջ երկու կամ ա-
ւելի տողերու նմանաձայն վերջաւորու-
թիւնն Յանգ կ'ըսուի:

Յանգը կրնայ աղքատ կամ ճոխ ըլ-
լալ. աղքատ կ'ըլլայ յանգը երբ տողերու
վերջաւորութիւնը վանկով մը միայն նմա-
նաձայն են իրարու հետ, իսկ այնչափ
աւելի ճոխ կ'ըլլայ յանգը՝ որչափ որ
բազմաթիւ ըլլան տողերուն ծայրերը նմա-
նաձայն վանկեր: Գիտնալու է որ յանգ
կազմելու համար կարեւոր է գէթ տողերու
վերջին վանկից ձայնաւորաց նոյնութիւն,
թէպէտ և քովի բաղաձայն գրերը լծորդ ալ
ըլլան իրարու: Այս կանոնով են Շնորհա-
ւոյն բազմաթիւ յանգերը, զոր օրինակ.

Ո՛ւր են դաճոյք թափաւորի,
Աղարչապատ քո քաղաքի, են:

Իսկ եթէ բաղաձայնով վերջանայ տողը,

հարկ է որ նաև յաջորդ տողին վերջը՝
նոյն կամ լծորդ բաղաձայնով աւարտի
խօսքը, զոր օրինակ.

Նորող, ասէ, երիտասարդ,
Չիմաստութիւն զգեցիր քեզ զարդ,
Եւ թէ մըսօք ես բուժ և գոշ,
Չանիւ զիմաստըս կէր և կոշ,
Նախնայ և տէս, ասէ, զՅովսէփ
Ըզրեշտակաց նրմանն ի դեպ,
Ում թէ սրբախ լինիս ի յոյզ,
Չհոգիդ մարտըս պահէ և լոյս,
Չի մի կրեցես՝ զոր սաաց Տէր,
Չտանջեն ի հուրն մահաբեր,
Սէր աշխարհիս այս ախտաշարժ
Ատել խրատէ զաղակոյր զարշ, են:

Գիտելու է որ յանգերը կազմուած չըլ-
լան մի և նոյն հոլովով կամ ածանցով
կամ լծորդութեամբ, և կամ մի և նոյն
բառով և բարդութիւնով և մի և նոյն
ածականով, որ թէպէտ և Նախնեացմէ
գործածուած է, բայց և այն քիչ տեղ և
մի և նոյն յանգի վերջաւորութեամբ հա-
րիւրաւոր և երբեմն նաև հազարաւոր տո-
ղերու մէջ, ինչպէս են Շնորհաւոյն տա-
ղաչափութիւններէն հետեւեալներն.

Չբանս բարիս հեղ ի յեզակդ,
Չսորմութիւն ի ձեռանդ,
Մինչդեռ յիշում զօրն անագին,
Եւ զսառաւորն մըրսգին:
Չայնս անգինսու հընկէին,
Մինչ զի վերկիր դըրըրդէին,
Ծովուն հրաման Մովսէս քե տայ,
Բայց Տէրն քե խրախոյս մեզ տայ:

Արտեստ Տաղաչափ.

Փոխի ի ցօղ զըւարթարար
 Որ անյուսիցն է արբամարար:
 Որպէս ալիք ողկուզալի,
 Կամ ձիթենի պըտող ի յի. են:

Այլ է՝ թէ որ ածանցը և կամ հօղով-
 մանց և բայից վերջաւորութիւնքը աւել-
 ցուած ըլլան այնպիսի վանկերու վրայ,
 որոնք առաջուց իսկ նմանաձայն են իրա-
 րու, զոր օրինակ եթէ ըսելու ըլլանք.

Յաւերժական կացցէ բաժնի գեեքնի
 Որ որ երկիր եպագ ի պիղծ մեքենի:
 Ո՛վ ընդ պայծառ թերթիւ վարդից
 Չանէ խրտիր և սին յարդից:
 Մի՛, Արիստ, մարդ սոսկ առել զհան կռւածին,
 Չի է ծնունդ անմահ յերկինս Հօր լուսածին:
 Ինքըն յինքեան յոյժ պատկառէր,
 Չաւէրն իւր ի խաչ նայել չկարէր:
 Չի որ դարան մանուած ալոց անկանէ,
 Չինքն յիւրակերան անդր յորովայթ արկանէ:
 Աստէն թէ ոչ ողորքես,
 Անդէն առ ո՛վ բողոքես:
 Մէն մի հասակ ունի զանձնիւր քերութիւն,
 Մանկութիւն խակ է և կըծծի ծերութիւն:
 Չուկն ի ծովու պանծայ լողալ,
 ()ձ ի բընի իւրում սողալ,
 Եւ սուր վատին ի տան լողալ. են:

4. ՏՈՒՆ

Երկու կամ աւելի տողերու միութիւնն,
 որ պարբերութիւն մը կազմէ՝ Տուն կ'ը-
 սուի:

Տան կազմութիւնն ոտանաւորի մէջ
 էական բան մը չէ. կան ոտանաւորներ

որ տուն տուն բաժնուած են, կան ալ
 որ առանց տան են:

Տան մը տողերը հարկ չէ որ ամէնն
 ալ հաւասար թուով անդամներ ունենան,
 այլ ընդհակառակն շատ գեղեցիկ և ներ-
 դաշնակ կ'ըլլայ եթէ զուգայարմար տո-
 դեր իրարու հետ խառնուին, ինչպէս 4-
 4-4-3 քառանդամն 5-5 երկանդամի հետ,
 կամ 4-4 երկանդամն 4-3 ի հետ, կամ
 5-5 ընդ 4-3 ի, կամ 3-3 ընդ 4-3 ի
 և 4-4 ի, և այլն, իւրաքանչիւր տաղա-
 չափի ճաշակին և աւանջի փափկութեան
 աստիճանին համեմատ:

Ազատ ոտանաւոր կ'ըսուի՝ երբ խառն
 անդամով կազմուած տողերու բազմութիւն
 մը՝ առանց որոշեալ կարգ մ'ունենալու՝
 իրարու կը յաջորդեն, զոր օրինակ.

Այդ սովեալ

4-4-4-3 Արջ ի մայրիս եթէ երեք ոչ զրտանէ իւր
 3-4-3 ի ծովափն ուրեք դիմեալ ի ժայռուտ, (ճարակ,
 4-3 Եւ զկայ առեալ ի վիտի,
 4-4-3 Տակաւ ըզսրունսն միխըրճէ անդր ի հուն.
 3-4-4-3 Եւ ի գալ խեչափառից կըռուել յոտիցն ի
 4-3 Անդէն ընդոստ ի ցամաք (մուշտակ,
 4-4-3 Չաւարառեալ ժրմական ի բաց թօթափէ,
 4-4-4-3 Եւ ըմբշխնէ ննդախառնէն եղեալ նոցին հաս
 (և խած.
 4-4-3 Այսպէս քաղցոյ և զանմարտին սրկով զուշ:
 Փեղորս:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Գ

ՏՍՂԱԶԱՓՈՒԹԻՒՆ

Զ Ա Փ Ա Կ Ա Ն Կ Ա Մ Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

Թուական և Չափական ոտանաւորներն ըստ տարրերութիւնն յայսմ կը կայանայ, որ նախ՝ Չափական ոտանաւորը Թուականին պէս յանգաւոր չէ, այլ առանց յանգի կը շինուի. և երկրորդ՝ որ Չափական ոտանաւորին մէջ ոչ թէ վանկերու, այլ միայն անդամներու թիւը կը հաշուուի և հաստատուն կը պահուի:

Չափական ոտանաւորը կրնանք սահմանել այսպէս. Նոյնարիւ եւ զուգաչափ անդամներոյ յարմարաւոր ներդաշնակութիւն:

Ծանօթ. — Չափական ոտանաւորն եղած է մեր հին Նախնեաց գործածածը, և այս չափով շինուած են մեծաւ մասամբ Շարականին մէջ ոտանաւոր երգերն: Անծանօթ էր Նախնեաց թուական գուգալանի և յանգաւոր տաղաչափութիւնն, որ Արաբացւոյցմէ մեզի անցած է, որ իննեւորդ դարուն մէջ սկսելով՝ երկոտասաներորդին մէջ սովորական և տիրող ոտանաւորն եղած է, որուն զլիւստոր ծաղկեցնողն եղած է Ներսէս Շնորհալի, թէպէտ և նոյն իսկ Շնորհալին շատ երգեր, մանաւանդ Շարականներէն՝ Հայկական չափով շինած է:

Բուն չափական կամ հայկական ոտանաւորն է՝ Նախնեաց մեծ կամ դիւցազնական ըսած տաղը, որուն ամէն մէկ տողերը չորս անդամէ բաղկացած են, և այս անդամոց վանկերուն գումարը 13 էն մինչև 16 կրնայ փոփոխուիլ, այնպէս որ տողերու վանկերուն թիւը տասուրեքէն պակաս պիտի չըլլայ, և ոչ ալ տասնուկէցէն աւելի:

Բաց ի այս դիւցազնական չափէն՝ կրնայ նախընթաց գլխոյն մէջ աւանդուած որ և իցէ թուական չափերով ալ հայկական ոտանաւոր շինուիլ. ինչպէս են, զոր օրինակ, երկանդամ հնգոտնեանը, եռանդամ քառոտնեանը, քառանդամ եռոտնեան և քառոտնեանները, և այլն:

Ծանօթ. — Այս դիւցազնական տողն է՝ որ շատ անգամ կ'անուանուի նաեւ վեցոտանի կամ երկոտասանուկեան, Չափական ոտանաւորի մէջ երկու չափը կամ երկար վանկը (ըստ Յունաց և Հռովմայեցոց) մէկ ոտք կը կազմէ (հակառակ թուականին), որով մեր այս դիւցազնականն՝ որ 12 վանկ ունի՝ վեց ոտք կ'ունենայ. իսկ ըստ արգելաց, որոնք չափ կամ երկար վանկ և ոտք նոյն կը համարին, մեր դիւցազնականը կ'ըլլայ երկոտասանոտնեան:

Դիւցազնական տողի մը առաջին անդամն ազատ է 1 էն մինչև 4 վանկ փոփոխութիւն կրելու: Երկրորդ անդամն՝ միայն եռավանկ կամ քառավանկ կրնայ ըլլալ. այն առեն միայն եռավանկ կրնայ

ըլլալ՝ երբ որ առաջին անգամը միավանկ
չէ։ Երրորդ և չորրորդ անգամները սովու-
րաբար և ըստ կանոնի քառավանկ միայն
են. բայց երբեմն ազատ է չորրորդը եռա-
վանկ դնելու, միայն թէ այն ատեն նաև
երկրորդ անգամն ալ եռավանկ չըլլայ և
կամ առաջինը միավանկ. վասն զի առա-
ջին դիպուածին մէջ՝ մէկ տողը երկու եօթ-
նոտեան գուգավանկ տողերու կը վերա-
ծուի, իսկ երկրորդին մէջ՝ տողին վանկե-
րուն թիւը տասուրեքէն պակաս կը մնայ։
Այս օրէնքներով տասը տեսակ նոյնաչափ
դիւցազնական տողեր կը ձևանան հետեւեալ
կերպով բաժնուած, որոնք իրարու հետ
խառն կրնան գործածուիլ.

- 4-4-4-4 Ինձ զանպատում / սրն նորոգել / գըշտոյ,
ըզվիշ / տըս հրամայես։
3-4-4-4 Նոր դարուն / մինչ զալևոր / լերանց հաւ /
զսլազեալ ծորանս։
2-4-4-4 Ուռնով / առնուն անդէն / ի մէտ ի մէտ / սա-
հուն կոհակս։
1-4-4-4 Ո՛վ / լուսադայծաւ / վեհ դերարփիք / տիեզե-
րաց։
4-3-4-4 ԶԵՐԻԴԻԿԷ / գետեղերք / բոլոր ընդդէմ / կըր-
կնէին վանդ։
3-3-4-4 Ի՛ւ զըւարթ / առնիցին / բոյսք արմըտեաց /
ո՛վ Մեկնաս։
2-3-4-4 Եւ ոչ / յորոգայթ / ըմբռնիցիս / պարզ զի-
շերոյ։
4-4-4-3 Եւ մըմըտեալ / խուլ մըմընչին / թանձրանայ
թաւ / անտառաց։
3-4-4-3 Անմահին / ես ի տաճար / իւր դամ երկիր /
պազանել։
2-4-4-3 Ըզվիւ / ժըս իւր Աստուած / զըրէ յարձա /
նըս կըճեայս։

Որովհետև մենք ուրիշ ազգաց պէս (Յու-
նաց, Հռովմայեցոց) ի բնէ հաստատուն
սուղ կամ երկար վանկեր չունինք, այլ
թուով են միայն մեր բառերուն վանկերը,
որոնք իրարու քով գալով՝ բնական ար-
տասանութեան օրէնքով կը սղուին կամ
կ'երկարին, անոր համար Նախնիք ոչ թէ
իւրաքանչիւր վանկերու սղութեան կամ
երկարութեան վրայ հաստատած են ոտա-
նաւորին էութիւնն, այլ իւրաքանչիւր ան-
գամոց իրարու քով պատշաճ կերպով շա-
րեւուն վրայ, ըստ օրինաց ուղիղ արտա-
սանութեան։ Այս պատճառաւ է ահաւա-
սիկ որ եռավանկ անգամ մը՝ քառավանկի
տեղ կը դրուի, իրեն մէկ վանկին պակասը՝
նախընթաց անգամին վերջին վանկին բը-
նական երկարութենէն լեցընելով. զոր
օրինակ հետեւեալ տողը կարդացած ժա-
մանակնիս՝

ԶԵՐԻԴԻԿԷ գետեղերք բոլոր ընդդէմ / կըրկնէին վանդ
բնական արտասանութիւնը կը պահանջէ
որ առաջին անգամին վերջին ձայնաւոր ե
զիրը երկընցընենք, զրեթէ երկու ե հնչե-
լու չափ. որով հարկ կ'ըլլայ երկրորդ ան-
գամը եռավանկ դնել փոխանակ քառա-
վանկի, իբրև թէ հնչուէր.

ԶԵՐԻԴԻԿԷ / է գետեղերք / բոլոր ընդդէմ / կըրկնէին
վանդ.

Այս օրէնքով բառավանկէն պակաս կ'ըլլան նաև միւս անդամները: Եւ որովհետեւ Չափական ոտանաւորի կանոնով՝ տողերու վերջին վանկերը միշտ երկար կը համարուին, անոր համար ալ աւելի ազատութիւն տրուած է տողերու առաջին անդամին վանկերու թիւին նկատմամբ:

Բայց երբ որ եռավանկ անդամը երկու բառէ բաղկացած է, հարկ չկայ որ միշտ իրեն պակաս անդամը նախընթաց վանկին երկարութենէն լեցընէ, այլ շատ անգամ կրնայ նաև զինքը կազմող երկու բառերուն առաջինին վերջին վանկին բնական երկարութենէն լրանալ, զոր օրինակ.

Զօնեցան / զենամար սրոյ / ի բանաւոր / ողջակիզումն:

Ասոնք են ահաւասիկ զիւցազնականին էական սկզբունքներն, որուն կազմութեան հիմունքը՝ վանկերը երկարելու կամ սղելու օրէնքը, մինչև հիմայ ըսածնուս համեմատ՝ բնական ուղիղ արտասանութիւնն է, և երբեմն ալ տաղաչափին ազատութիւնը, լսելեաց փափկութեան աստիճանն ներդաշնակութեան մէջ և լաւ տաղաչափութեանց յաճախ ընթերցումն:

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Նախաբան. 7

ՏԱՂԱԶԱՓՈՒԹԻՒՆ

Նախազիտելք 9

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Տաղաչափութիւն թուական կամ յանգաւոր . . . 11

1. ՈՏՔ 11

— Դասակարգութիւն տառից 12

— Կանոնք կազմութեան Ուրբերու 13

— Զ նախդիր 15

— Գիմորոշ յօդեր 17

— Ըստ և ընդ նախդիրք 18

— Նայ տառեր 19

— Զուգադրութիւնք բաղաձայնից 20

2. ԱՆԳԱՄ 21

3. ՏՈՂ 25

— Յանդ 32

4. ՏՈՒՆ 34

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Տաղաչափութիւն չափական կամ հայկական . . . 36

ՅԱՆԿ ՅԱԻԵԼՈՒԱԾԻ

1.

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Բանաստեղծական լեզուն և հայկական չափին դրա- ւած տեղը	1
— Ա. Բնութեան լեզուն և անոր կապը բանա- ստեղծութեան և երաժշտութեան հետ: — Տաղաչափութիւն. զանազան չափերու ծը- նունդը	1
— Բ. Բանաստեղծութեան տեսակներ և անոնց համադրողական չափեր: — Պարզ կամ տար- րական տողեր	4
— Գ. Բարդ կամ զարգացած չափեր.	6
— Դ. Խստն չափերով քերթուածներ. անոնց նը- պատակը	8
— Ե. Խմաստներու տողանցումներ. անոնց նպա- տակն և արդասէրը	12
— Զ. Հայկական չափ	15
— Է. Հայկական չափին կազմութիւնը	18
— Ը. Շէշտ չէշտերու տեսակներ և զանազանու- թիւններ, անոնց գործածութեան կերպերը	22
— Թ. Կոր առաջարկուած չափ մը, Հայկական մետասանտոնեան	32
— Ժ. Բաղդատութիւն հայկական չափին՝ իտա- լական մետասանտոնեանին հետ: — Բա- նական և ձայնական չէշտերու իրարմէ տար- բերութիւնը: — Նմանութիւններ վերոյի- շխալ երկու չափերուն	35
— ԺԱ. Հակառակ առարկութիւն և անոր լուծումը: — Եզրակացութիւն	45

2.

- Ասորական, Եբրայական և Հայկական տաղաչափու-
թիւն 51
- Ա. Նմանութիւնք ասորական և հայկական չա-
փերու: — Ասորական աղգեցութիւնք. յու-
նական հակաղգեցութիւնք և զուր փորձեր:
— Ասորական չափի անհամաձայնութիւնք
հայկականին հետ: — Ասորաց չափական
դրութիւնն ըստ Հ. Գրիմմէի. տարբերու-
թիւնք և համաձայնութիւնք երկու աղգաց
չափերուն միջեւ 51
- Բ. Ասորիներէն փոխառեալ հայկական չափեր:
— Եբրայեցիներէն փոխ առնուած հայկա-
կան չափեր: — Եբրայեցոց չափական ա-
րուեստն ըստ Հ. Գրիմմէի: — Երկու էա-
կան զանազանութիւնք ասորի և հայ չափե-
րու միջեւ: — Հանդիստ և չեչտ: — Հայ-
կական չափին չեչտաւորութիւնն հանդէպ Ի-
տալական չափին: — Վերջնական հետեանք
ասորական և հայկական չափերու բաղդա-
տութեան 63
- Գ. Հայկական հնգավանկ անգամներ՝ եբրայա-
կան չափէն փոխ առնուած: — Սաղմոսնե-
րու հայերէն թարգմանութիւնն և անոնց չա-
փական կազմութիւնք. օրինակներ: — Հա-
կառակ առարկութիւն և անոր լուծումը.
քանի մը Սաղմոսներ չափական տողերու
վերածուած: — Չափական զարաուղութիւնք
և Նախնեաց չափերուն տարբերութիւնը ներ-
գայնակ արձակ գրութեան: — Հակառակ
փաստ ժամանակագրական. Գողթան երգեր. 76

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՉԱՓԻՆ ԳՐԱԽԱՅ ՏԵՂԸ

Ա. Բնութեան լեզուն և անոր կապը բանաս-
տեղծութեան և երաժշտութեան հետ: — Տաղաչա-
փութիւն. զանազան չափերու ծնունդը: — Բ. Բա-
նաստեղծութեան տեսակներ և անոնց համապատ-
շաճ չափեր: — Պարզ կամ տարրական տողեր: —
Գ. Բարդ կամ զարգացած չափեր: — Դ. Խառն
չափերով քերթուածներ. անոնց նպատակը: — Ե.
Խմաստներու տողանցումներ. անոնց նպատակն և
արդասիւքը: — Զ. Հայկական չափ: — Է. Հայ-
կական չափին կազմութիւնը: — Ը. Շեչտ. չեչ-
տերու տեսակներ և զանազանութիւններ. անոնց
զործածութեան կերպերը: — Թ. Նոր առաջար-
կուած չափ մը. Հայկական մետատանտեան: —
Ժ. Բաղդատութիւն հայկական չափին՝ Իտալական
մետասանտեանին հետ: — Բանական և ձայնա-
կան չեչտերու իրարմէ տարբերութիւնը: — Նմա-
նութիւններ երկու վերոյիշեալ չափերուն մէջ: —
ԻԱ. Հակառակ առարկութիւն և անոր լուծումը: —
Եղրակացութիւն:

Ա. — Բանաստեղծութիւնը բնութեան
լեզուն է:

Բնութիւնը կազմող ամէն մէկ տարերք
ուռին իրենց յատուկ հմայքը: Օղը՝ որ կը
սօսափէ ծառերու տերեւները, առուակը՝
որ կարկաջահոս կը նողոսկի քարերու

միջէն, թռչնիկները՝ որ կը գայլալեն ճղիկներու վրայ՝ բնութեան լեզուն կը խօսին, բայց ոչ այն լեզուն՝ զոր կը հնչեցընեն կայծակներու ճայթիւններն, և ամպերու զոռզոռալը, հեղեղներու վիժելն և առիւծներու մոնչելն, թէպէտ և վերջիններս ալ՝ առաջիններէն ոչինչ ընդհատ՝ մի և նոյն բնութեան լեզուով կը խօսին։ Բնութեան մէջ ամէն մէկ առարկայ, ամէն մէկ երեւոյթ՝ ունի խօսելու յատուկ ձեւեր ու ձայներ, որոնց միութիւնը կը կազմէ տիեզերական ներդաշնակութիւնը՝ բնութեան գրկին մէջ։

Մարդն ալ բնութեան մէջ առարկայ մ'է, և անոր վրայ տեսնուած երեւոյթներն ալ՝ բնութեան երեւոյթներու շարքին մէջ են։ Այդ երեւոյթներէն մէկն ալ լեզուն կամ խօսքն է, որով մարդը կը բացատրէ իր միտքն և զգացումը։ Բայց ոչ ամէն միտք և ոչ ամէն զգացումն կարելի է միեւնոյն լեզուով բացատրել. վախն և արիութիւնը, տրտմութիւնն և ուրախութիւնը, սէրն և ատելութիւնը, և ուրիշ ամէն ընդդիմակ զգացումներ՝ լեզուի մէկ-մէկէ տարբեր յատկութիւններ կը պահանջեն։ — Եւ եթէ այսպէս է սովորական խօսելու կամ գրելու մէջ, որչափ աւելի բնութեան գերագոյն լեզուին՝ բանաստեղծութեան մէջ։

Բնութիւնը ներդաշնակութիւն մ'է. անոր անվիճելի լեզուն երաժշտութիւնն է, և բանաստեղծութիւնը մաս մ'է երաժշտութեան, անոր մէկ կերպն է։ Բանաստեղծութիւնը կրնայ գրուիլ թէ՛ արձակ և թէ՛ չափուած տողերով, բայց թէ՛ մէկուն և թէ՛ միւսին մէջ՝ սովորական կամ ընթացիկ լեզուէն տարբեր լեզու մը կը գործածէ, որ իրեն յատուկ ներդաշնակութեամբ՝ երաժշտական եղանակ մը կը ստեղծէ։ Այո՛, արձակ տողերով ալ կարելի է բանաստեղծել, բայց Մուսաներու սիրած լեզուն տաղաչափոքիւնն եղած է, և այս վերջինս՝ բանաստեղծութեան մէջ երաժշտական գործիքի պաշտօնը կը վարէ։

Ինչպէս երաժշտութեան մէջ այլեւայլ գործիներ՝ այլեւայլ կիրքեր բացատրելու յատկութիւնն ունին, այսպէս ալ տաղաչափութեան մէջ զանազան չափեր՝ զանազան զգացումներ ցուցադրելու սահմանուած են։ Այդ սահմանումը յառաջ կուգայ չափին և զգացման՝ իրարու հետ ունեցած հոգեկան և ձայնական ներդաշնակ յարաբերութենէն։

Ամէն չափ՝ ամէն զգացումների հետ չի ներդաշնակիր. երբ կիրքը կամ զգացումը փոխուի և կամ աստիճանաւորութիւններ արտայայտէ, պէտք է որ չափն ալ կամ

տողն ալ անոնց համեմատ փոփոխուի
կամ աստիճանաւորի, նման՝ գործիքի մը
մեղմ, միջակ և զօրաւոր լարերու թրթռա-
ցումներուն:

*
* *

Բ. — Մարդկային կիրքերու այս զա-
նազան փոփոխութենէն յառաջ եկած են
ուրեմն երգելու կամ տաղաչափելու զա-
նազանութիւնները, որոնք երգուելիք նիւ-
թին կամ առարկային և կամ գործիքին
անուններով՝ այլեւայլ կոչումներ ստացեր
են բանաստեղծներէն, զոր օրինակ, պար-
երգութիւն, հովուերգութիւն, բամբուկ-
գութիւն, քնարերգութիւն, եղերերգութիւն,
ողերերգութիւն, թատրերգութիւն, հագներ-
գութիւն կամ դիւցազներգութիւն, և այլն:

Այս տեսակ տեսակ երգչարիւնները՝ ոչ
միայն կը պահանջեն որ իւրաքանչիւրին
համար երգիչները գործածեն համապատ-
շած լեզու և ոճ, այլ նաեւ յատուկ եղա-
նակ կամ երգի ելեւէջներ, որոնք կա-
խումն ունին բառերու յատուկ շարուած-
ներէ, սեփական զասաւորութիւններէ:

Բառերու այս յատուկ զասաւորութիւն-
ները կամ հիւսուածքը՝ ծնունդ տուած են
չափական այլեւայլ տողերու, սկսեալ
եռափանկէն մինչեւ տասնըվեց վանկերով
տողերու:

Կարճ տողերը, զոր օրինակ, եռափան-
կը, քառափանկը, հնգափանկը, կրնան
ծառայել զողտրիկ, քնքոյշ բացատրու-
թիւններու, որոնց ներդաշնակութենէն՝
ականջը մտքէն շատ աւելի գոհ կը մնայ:
Այսպիսի տողերը բանաստեղծութեան մաս-
կախ և պատանկաւ քայլերն են, աւելի
տղայոց մտքին հետ խօսող՝ քան զարգա-
ցած սիրտերու. անոնք անմեղութեան ա-
ւաչներն են, բնութեան մէջ ճճուող թրուչ-
նիկներու ճոռուղիւններուն արձագանգներն
են: — Այս տեսակ չափերու մէկ մէկ օրի-
նակ մէջ բերենք:

ԵՌԱՎԱՆԿ

ՓԱՌԱՎԱՆԿ

Ոչ պարոյդ	Այո՛, հանգոյն
Լուսաղեղ	Առոյդդ հասակ
Փաշտոյդ՝	Է զարնայնոյն,
Ի կանթեղ	Ո՛ւ պատանեակ.
Պահի լոյց,	Այլ նա ծանի
Թե բոցոյն	Վերակենցաղ
Սպառի բոյժ	Ամի ամի
Յանկարծոյն,	Պերճ և չըքնող.
Ոչ սրբոյ	Իսկ փախուտեայ
Էւ զըւարթ	Քոյդ մանկութիւն
Փայլեցի	Ոչ եւս դառնայ
Չըքնող վարդ,	Ի տիւ ի նոյն:
Եթե ոչ	
Կենսաբեր	
Ի հոգւոյ	
Յօդէ սէր:	

Ասանց քայլերոյ	Ձուրկ էր նա յօգոյ,
Ընթացաւ ընդ ծով,	Մեռեալ ոչ գոլով,
Եւ չունէր նաւակ.	Եւ չընէր յըստակ:
Անողոյ ի ջրոյ՝	Ո՞վ էր է այս մարդ,
Թաղկցաւ ընդ ջրով	Ասա՛ գու ինձ արդ.
Ի ծովուն յատակ.	Եւ առասպելիս
	Իսկ զխտակ վնիս:

Այսպիսի կարճ տողիկներու մէջ անշուք լեզուով՝ կտրուկ իմաստներ միայն կրնան պարունակուել, բարոյական վճիռներ, ամենապարզ նկարագիրներ, առածներ, առակներ, հանելուկներ. բարդ զգացումներու կամ կիրքերու յարմար չեն, նման գողտրիկ հասակի սիրտերուն. բառախաղեր են մանաւանդ քան թէ իսկապէս բանաստեղծութիւններ:

*
* *

Գ. — Բայց այս փոքրագոյն չափերը՝ տարերք են մեծագոյններուն: Այս տողիկներուն կրկնուելով՝ կը ձեւանան վեցոտնեան, ութոտնեան և տասնոտնեան չափերը, և երեքկնելով՝ կը կազմուին իննոտնեան, երկոտասանոտնեան և հնգետասանոտնեան չափերը. ինչպէս նոյներն իրարու հետ ձուլուելով՝ կը ծնանին եօթնոտնեան և մետասանոտնեան տողերը:

Հետեւաբար՝ առաջինները կրնանք կոչել տարրական կամ պարզ չափեր, իսկ վերոյիշեալ երկրորդ խումբիները՝ զարդուն կամ յարդ չափեր:

Բարդ չափերը կամ տողերը՝ բանաստեղծական լեզուի երիտասարդութեան կը ներկայացընեն. ընդունակ են աւելի կամ պակաս կերպով մարդկութեան նոյն հասակին մէջ զգացած կիրքերու բացատրութեան. յարմար են յատկապէս պարերգութեան, հովուերգութեան, քնարերգութեան, եղերերգութեան, կատակերգութեան և ընդհանրապէս այն ամէն նիւթերու՝ որոնք հեռի են ծայրագոյն կիրքերէ: Չեմ ըսեր թէ անոնք բացարձակ կարող չեն՝ տարրական չափերու պէս՝ կրից սաստկագոյն աստիճաններն ալ բացատրելու, այլ ըսել կ'ուզեմ որ ամենայարմարը չեն, մանաւանդ վեցոտնեանէն մինչեւ իննոտնեանները:

Այս չափերէն մաս մը զուգավակ են, այսինքն՝ վեցոտնեան, ութոտնեան, տասնոտնեան և երկոտասանոտնեան, իսկ մաս մ'ալ անզուգավակ, որ են՝ եօթնոտնեան, իննոտնեան և մետասանոտնեան: Անզուգավանկները աւելի ներդաշնակ են քան զուգավանկները: Այս վերջիններէս՝ վեցոտնեան և ութոտնեանը աւելի սահուն և

քաղցր են քան տասնոտնեանն և երկու-
տասնոտնեանն. իսկ անզուգավանկնե-
րէն՝ գերազանց կերպով ներդաշնակներն
են եօթնոտնեանն և մետասանոտնեանն, իսկ
իննոտնեանն և հնգետասանոտնեանն՝ տաղա-
կալի:

*
* *

Դ. — Զգայուն ականջի տէր տաղա-
չափները շատ անգամ քերթուածներու
մէջ փոփոխութիւն կը մտցընեն այլեւայլ
չափերով տողերու. զոր օրինակ հետեւեալ-
ներն և անոնց նմանները:

4 ոտնեան և 7 ոտնեան

Աստուածատունկ
Ի յարեւելս էր պարտէզ,
Էին ծաղկունք
Անդ և ծառոց ազգ պէսպէս:
Ի նմա աղբիւր
Որպէս հողի ի մարմնի
Հուրջ համասփիւս
Բըխէր ըզջուր կենդանի:
Մանեկաւոր
Էր արծաթեաւ անդ լարիւ
Կապեալ սափոր
Մըշտահոլով ի յանիւ.
Էւ յողնախումբ
Ի նմանէ ծառք և բուսակք
Յուշիկ ի յումպ
Առնուին բոյժ և ճարակ:

6 ոտնեան և 7 ոտնեան

Ծընաւ Տէր ի մըսուր
Ծընաւ Աստուածն յախտեանց.
Զօն բերցուք սիրտ մաքուր,
Խոնարհ հողիս հեղ անձանց:
Ընդ հրեշտակս երգեսցուք
Ըզհաշտութեանն աւետիս.
ԸզՅիսուս օրհնեսցուք
Զեկեալ փրկիչն աշխարհիս:

7 ոտնեան և 8 ոտնեան

Գեղեցիկ է՝ լուրջ առաւօտ
Յոր արուսեակըն ծագեաց.
Վայելուչ են՝ ի մարդ յարօտ
Գառինք ճեմեալք ընդ մաքեաց.
Վայելուչ է՝ հասուն ողկոյլ
Յարմաւենի գերաբուն,
Վարդ գեղեցիկ աչաց ի յոյլ
Ի թուփ դալար ցօղասուն:

5 ոտնեան և 11 ոտնեան

Գալարին լարք, խուսափէ քնար ի դըրկաց
Էւ սիրտ նըւաղի
Յորժամ ըզքեզ իշխէ հընչիւ ամօթիսած,
Ո՛վ մայր քաղցրաղի:
Մայր, ո՛հ, մայր, և յառաջ Ի՛րբը խաղալ
Թէ ոչ պընդես դիս,
Զիս՝ յոյր ճակատ ծըղի զըթոյդ կարկառեալ
Գըրեաց յՈրդեգիրս:

7 ոտնեւան և 11 ոտնեւան

Եհաս զարուն, զըզուէ դմարմանդ մեր և ծառս,
Ծաղկէ խընձորն և մամիտի.

Ուրք արտասուեն և ուռնեայ կաղմի վարս,
Սարեակ սիրով կըղկղի.

Շողան ալիքը, Իջանէ ցօղ հանդարտիկ,
Բոյր և դալար արձակի.

Համայն դարձեալ ի կարգն անկեալ դայ ծաղիկ.
Մեղ մէն Բուժիկ չըծաղկի...

Ո՛հ, եկ բացի՛ր Բուժիկ, բացի՛ր մեր ծաղիկ,
Այլ մի՛, ո՛հ, մի՛ 'նդ վայր յերկիր.

Բացի՛ր փթըթեայ նորարողութ՛յն ուրը ծղիկ
Յօդեալ ի տունն իսկակիր:

Եղած են քերթողներ ալ՝ որ իրենց
գրածին իւրաքանչիւր տողերը յօրիներ են
այլեւայլ չափերով՝ աւելի փոփոխութիւն
տալու համար քերթուածին:

Այսպիսի խառն տողերը՝ միաչափ և
միայար տողերու հետ բաղդատելով՝ քայլ
մը կրնան համարուիլ ներդաշնակութեան
զարգացման և տաղաչափական արուեստի,
և անշուշտ ծնունդ պիտի չունենային՝
թէ որ միաչափ տողերու արտասանութիւնները
փափուկ լսելեայ տաղտուկ ազդած չըլլային:
Երգ մը որչափ ալ ներդաշնակ խաղերէ կամ
ձայնի ելեւէջներէ կազմուած ըլլայ,
սակայն երբ հարկ ըլլայ միշտ
միեւնոյն եղանակի կրկնութիւնը

լսել՝ ներդաշնակութիւնը ձանձրոյթի կը
փոխուի: Հիանալի են դեղձանիկին աշխոյժ
գեղգեղները, բայց կարելի չէ երկար
ատեն ախորժով մտիկ ընել, որովհետեւ
յարատեւ եղանակին փոփոխութիւնները
սակաւաւթիւ են. բայց աշխարհիս վրայ
կարծեմ եղած չէ անձ մը՝ որ ձանձրոյթ
զգացած ըլլայ սոխակին երգելէն և անոր
հազար տեսակ ձայնի ելեւէջներէն ու
սուլոցներէն: — Ախորժելով կը լսենք
քնարի կամ սրընգի մը քաղցրածայնութիւնը,
բայց չափ մը ժամանակի, որովհետեւ անոնց
լարերուն և կամ բըլթակներուն միակերպ
թըթոռները՝ քիչ փոփոխութիւններով կ'ազգեն
ականջի վարագուրին նեարդներուն վրայ,
որոնք օդոյ ալիքներու միատեսակ բախումներէ
կը յոգնին, կը թմբին և հուսկ ուրեմն
կը նեղուին. բայց շատ աւելի ախորժով
և երկարատեւ կրնանք մտիկ ընել զուգարաշն
զանազան գործիներու միաժամանակ
ազգած ելեւէջներուն համերգութիւնը:

Սակայն կարելի չէ ամէն նիւթ խառն
տողերու բաղադրութեամբ գրել՝ տաղտկա-
ծայնութենէ ազատելու համար: Որքան
ալ՝ եռաժանկէն սկսած մինչեւ ութաժանկ
տողերը խառնելով տապնոտնեանի և մե-

տասանոտնեանի հետ՝ կ'ունենանք աւելի ներդաշնակութիւն, բայց այդ կարճ տողերը, ինչպէս վերն ըսի, չեն կրնար յարմար չափեր համարուիլ լուրջ և ծայրագոյն զգացումներու համար. եթէ մէկ կողմէ ներդաշնակութիւնը կ'աւելցնեն, միւս կողմէն կ'իրքերու բացատրութեան ոյժը կը նուազեցնեն:

*
* *

Ե. — Այս վերջին անպատեհութեան առաջն առնելու նպատակաւ՝ շատ անգամ ստիպուել են քերթողները՝ կամայ կամ ակամայ՝ իմաստ մը մէկ տողէն յաջորդին մէջ շարունակել և լմնցնել, որպէս զի նախ՝ միակերպութիւնը կոտորեն, և երկրորդ՝ իմաստին ոյժը չտկարացնեն: — Այս հնարքը իրաւցնէ միջոց մ'է այդ բարի նպատակներուն հասնելու, բայց այդ միջոցն ալ իր կարգին կը ծնանի ուրիշ անպատեհութիւններ, ուրիշ խանգարումներ ներդաշնակութեան, մանաւանդ երբ ստէպ գործադրուի և անարուեստ կերպով: — Միտքս լաւագոյն բացատրելու համար՝ ըսածս օրինակներով պարզեմ: — Իբր նմոյշ այս տեսակ տողերու՝ բարդ չափերու մէջէն առնենք ամենէն աւելի ներդաշնակները, եօթնոտնեանն և մետասանոտնեանն: — Օրինակ եօթնոտնեանի:

Անծանօթից հանդիպեալ
ինձ, և ասեն. Ողջոյն քեզ,
Ողջոյն, պանդուխտ տառապեալ,
Աստ. Զխարդ դու կայցես:
Ահ, պանդուխտի ողջոյն մի՛
Տայք, մի՛ յարեան ըզտիրա իւր
Ողողեալք. ոչ կամի
Ըզմաղթանաց ձերոց դիւր:

Արդ, այս և ասոնց նման տողերն արտասանողը՝ պէտք է որ իմաստին համեմատ արտասանէ, ապա թէ ոչ՝ իւրաքանչիւր տողի վերջը ընդհատելով ձայնը՝ իմաստները կը խանգարուին: Ուստի առողանութեան մէջ՝ համաձայն ուղիղ արտասանութեան՝ վերոյգրեալ եօթնոտնեանները պիտի վերածուին հետեւեալ բաժանումներուն.

Անծանօթից հանդիպեալ ինձ և ասեն.	11	ոտնեան
Ողջոյն քեզ		եռափակ
Ողջոյն, պանդուխտ տառապեալ		7
Աստ. Զխարդ դու կայցես		7
Ահ, պանդուխտի ողջոյն մի՛ տայք		8
Մի՛ յարեան ըզտիրա իւր ողողեալք		արձակ
Ոչ կամի զմաղթանաց ձերոց դիւր		9

Արդ, երբ իմաստը կը պահանջէ այս բնական բաժանմունքով բառերն արտասանել, անդին ականջը կը զգայ որ ներդաշնակութիւնը կը խանգարուի, և կը

Տնանին այնպիսի տողեր՝ որ կամ իրա-
րու հետ զուգադաշն չեն և կամ աւելի
արձակ քան չափական բաժանումներ են:
Որով հարկ է կամ ներդաշնակութիւնը
իմաստին զոհել, կամ իմաստը ներդաշ-
նակութեան: Այո՛, միակերպութիւնը կը
դադրի, իմաստին ոյժը չի տկարանար,
բայց ներդաշնակութիւնը կը տուժէ և կամ
կ'անհետանայ:

Օրինակ մ'ալ մետասանոտնեանէն.

Զանգատուելի ըզլիշտս իմ, ո՛վ թաղուհի,
ինձ հրաման տաս նորոգել, թէ սրպէս
կործանեցին Դանայեցիք ըզՏրովեան
Հարբատութիւնն և զպետութիւնն եղիելի...
Բայց եթէ այդքան մեծ փափաք քեզ իցեն
Զանցս աղետից մերոց զխտել, և լրակել
Զհուակ աւերումն Տրոյիոյ կարճ ի կարճոյ,
թէ և սոսկայ հոգիս յիշել զայնոսիկ
Եւ ի ցաւոց խոյս տայ, սակայն ըսկըսայց:

Սրբ, գրենք ըստ ուղիղ առոգանութեան
իմաստներուն՝ այս տողերը, և պիտի ու-
նենանք.

Զանգատուելի (ըզլիշտս իմ,
ո՛վ թաղուհի 11 ոտեան
ինձ հ(ը)րաման տաս նորոգել. 8 ոտեան
Թէ սրպէս կործանեցին Դա-
նայեցիք արձակաբան ոճ
ԸզՏրովեան հարբատութիւնն
և զպետութիւնն եղիելի. 15 ոտեան, հայկ. չափ.

Բայց եթէ այդքան մեծ փա-
փաք քեզ իցեն 11 ոտեան
Զանցս աղետից մերոց զխտել. 8 ոտեան
Եւ լրակել զհուակ աւերումն
Տրոյիոյ կարճ ի կարճոյ. 15 ոտեան, հայկ. չափ.
Թէ և սոսկայ հոգիս յիշել
զայնոսիկ 11 ոտեան
Եւ ի ցաւոց խոյս տայ, սա-
կայն ըսկըսայց 11 ոտեան

Կայ իրացնէ փոփոխութիւն չափերու,
բայց ոչ ներդաշնակութիւն, ոչ զիւցազն-
երգութեան մը (ենէական) պատշաճ տա-
ղաչափութիւն, այլ անզուգադաշն տողեր
և արձակ ըստաճներ: Աչքը ոտանաւոր
կը տեսնէ, բայց ականջը կը խայթի և
կը բողբոջէ, եթէ պակասաւոր և կամ
անզգայ ականջ մը չէ:

*
* *

2. — Ուստի, թէ՛ միաչափ տողերու
ազդած տաղտուկին առջեւն առնելու, և
թէ՛ իմաստի մը տողէ տող անցնելով՝ ան-
ներդաշնակ չափերով քերթուած մը յօրի-
նելու անպատեհութիւններէն խոյս տալու
համար՝ լաւագոյն միջոցն է զործածել
հայկական չափը, որ բանաստեղծական լե-
զուին արբուն հասակը կը ներկայացընէ.
անոր գերագոյն զարգացման աստիճանն

է, որ իր մէջ կը պարունակէ բանաստեղծութեան պատանեկան եռանդը, միանգամայն և երիտասարդ տարիքին կորովը:

Հայկական չափը՝ զոր միակ ճանչցեր և գործածեր են մեր հին նախնիք¹, (հայ լեզուի ներդաշնակութեան անվիճելի զգացողներն և ուսուցիչները), ժամանակ մը գրեթէ մոռցուած, արաբական չափերու ողորման մէջ խեղդուած, կարօտ եղած է Բագրատունիի մը փափուկ ականջներուն՝ խորասոյզ անդունդէն վեր բարձրանալու և դարձեալ իր փառաշուք գահոյքին վրայ բազմելու համար:

Հայկական չափը մեր լեզուին սեփականութիւնն է, հայ ականջներու սիրած ներդաշնակութիւնը: Կը պարունակէ համագոր տողերու՝ այլազան ներդաշնակութիւն, որով տաղտկութիւն չի բերեր լսելեաց. կը պարունակէ միանգամայն իւրաքանչիւր տողի մէջ իմաստից ամբողջութիւն, որով ծնունդ չի տար տողէ տող օտար բաժանումներու և կամ խառն և աններդաշնակ չափերու:

Հայկական չափը ամենայարմարն է

1. Ուրիշ տեղ ցոյց տուեր եմ թէ՛ նախնիք ուրբան օգուտներ են երբայական և ասորական չափերէն՝ հայկական չափը կազմելու համար. (Բաղմ. 1899. Հայկական Ասորական Տաղաչափութիւնն):

նկարագրութեանց բոլոր գեղեցկութիւնները դուրս ցատքեցնելու, կըքերու ամէն շարժումները, ամէն աստիճանի յուզումները քանդակելու. իր ծանր և վսեմ ներդաշնակութեամբ՝ թառերական և դիւցազնական գործերու վեհութիւնը կը պատկերացնէ և արտասանողին միտքը կը դիւթէ. կը զեղու ընթերցողին սիրտը ուրախութեան, զթոյ, մոլեգնութեան, ցաւոց, և ուրիշ բոլոր ծայրագոյն կիրքերու զգացումներով, որոնցմէ ներշնչուած է բանաստեղծը:

Հայկական չափը՝ իր ներդաշնակ և յարափոփոխ, բայց միանգամայն զուգամանակ անդամներու և համագոր տողերու կազմութիւնով՝ երաժշտական բարձրագոյն զարգացումը կը ներկայացնէ տաղաչափութեան մէջ. բանաստեղծական գործիքներուն երգեհոնն է, որ իր մէջ կը բովանդակէ դաշնակի, ջութակի, քնարի, սրնգի, զանազան գալարափողերու քաղցրութիւնները միանգամայն:

Հայկական չափին գերազանց յատկութիւնները կազմողները չեն՝ ո՛չ գրաբար լեզուին բառերն ու հոլովները, բայերն ու խոնարհումները, ո՛չ շարադրութեան ետեւ առաջ դասաւորութիւնը, ո՛չ քերականական և տրամաբանական ձեւերը: Այս ա-

մէն ձիրքերն ալ լեզուին սեփականու-
թիւններն են, և կրնան՝ զրոզին հմտու-
թեան և ճարտարութեան համեմատ՝ կո-
րովութիւն տալ թէ՛ հայկական չափով
գրուած տողերուն և թէ՛ նաեւ ուրիշ ո՞ր
և իցէ չափով գրուածներուն:

※
※ ※

Ի. — Հայկական չափին սեփական
ձիրքերը տուողներն են նախ՝ իր տողե-
րուն կազմութիւնը, և երկրորդ՝ շեշտա-
ւորութիւնը:

Հայկական չափն իր մէջ կը բովան-
դակէ՝ բաց ի հնգոտնեանէն՝ մնացած բո-
լոր չափերու քանակները: Քառանդամ
են տողերը, իրարու համազօր՝ բայց ոչ
համավանկ, վասն զի անոր անդամները
զուգամանակ են՝ այլ ոչ միշտ հաւասար
բավանկ:

Առաջին անդամը կրնայ մէկ վանկէ մին-
չեւ չորս փոփոխուիլ:

— Մէկ վանկ կրնայ ըլլալ՝ երբ յա-
ջորդ անդամը քառավանկ բարէ մը կազ-
մուած ըլլայ. զոր օրինակ.

Ո՛վ / լուսադայծառ / վեհ գերարփիք / տիեզերաց:
Ե՛հ, / դադարիցես / ուրեմն այսրէն / հեղափոխ:
Քեզ / աստուածազորմըն մանկան տո՛ւրբս բերցեն:

Մե՛ / դարձուցաներ / յինէն զերեսդ / յապաշնորհէս:
Չէր / ոք ընդդիմակ / կարօղ նորա / կալ երեսացն:
Ո՛ն, / քաջալերեաց, / չէք մեզ երկիւղ / ինչ ուստեք:
Հինգ / են զօրավարք / իշխանակիցք / համապատիւք:

— Երկու վանկ կրնայ ըլլալ՝ երբ յա-
ջորդ անդամը եռավանկ և կամ քառավանկ
ըլլայ. զոր օրինակ.

Հանին / կացուցին / ջոկատ ընտիր / հաստարազուկ:
Անկուք / յանկարծակի / յեղակարծում / պահու զնքօք:
Լրեամ՝ / զի հեծես. / բայց այս ևն իմ / թըշուառանք:
Խօսեւ / միանգամ՝ / առաջին նուազ / և վերջին:
Անկեալ / ես ուրեմն / ի՛ նոյն ազմուկ / խոռովութեան՝
Որ ա՛յնչափ արտասուս / ի ցոյնս ի քէն / կաթեցոյց:
Ի նո՛յնպէս եղկելի, / որպէս եւ Էսքս թըշուառ:
Յերեսս / իւր նըկարեալ / երեւեցոյց / զիւր զայրոյթ-
Եւ սիրտ / իմ գուշակեաց / ըզնառանել / աղետից:

— Եռավանկ և քառավանկ կրնայ ըլ-
լալ՝ երբ յաջորդ անդամն ալ եռավանկ և
կամ քառավանկ ըլլայ. զոր օրինակ.

Փըրփըրեալ / մոլի Բաբ, / վարազաբար / ցիւրաքն զուէ:
Ժամ է արդ / առէք առ իս, / աղէ առէք / զոր կազմն
կայ
Հուր և ջահ / նաւթիւ ձիթով / եւ ի ժրժան / բոց բոր-
բոքեալ:
Զուր գիւցազունք / զործեն զուն / սաստիկ՝ զերկիրն /
ըմբռնելոյ:
Հեղեղասաստ / փոթորեալ / զերփեալ ըզչէն / զանդ և
զայգի:

Անդ. ելանէր / նըմին դիպան / քաջն Աթթինեաւ / մուկաւ
Վարչիւ:

Այսպէս ատիւծ / դարանակաւ / ըզլի դաւթիւ / սովալը-
լուկ:

Երկրորդ անդամը կրնայ կամ երեք և կամ չորս վանկէ բաղկանալ, ինչպէս վերի օրինակներէն կը տեսնուի. բայց երբ առաջին անդամը մէկ վանկ է՝ երկրորդը չի կրնար քառավանկէն պակաս ըլլալ, որովհետեւ առաջին միավանկ անդամին հետ կցուելով՝ տողը եռանդամ կը մնայ:

— Երկրորդ անդամը չի կրնար նոյնպէս եռավանկ ըլլալ, երբ առաջին անդամը քառավանկ և չորրորդ անդամն ալ եռավանկ ըլլայ, որովհետեւ այդ պարագային՝ երկու եօթնոտեան հաւասարական տողեր կը ձեւանան՝ հայկական չափին մէկ տողին մէջ, ինչ որ հակառակ է այս չափին կազմութեան:

Երրորդ անդամը անփոփոխ կերպով միշտ քառավանկ կ'ըլլայ, ինչպէս վերի օրինակներէն կը տեսնուի. իսկ չորրորդ անդամը կրնայ ըլլալ քառավանկ և կամ եռավանկ. բայց երբ առաջին անդամը քառավանկ և երկրորդն եռավանկ է՝ չորրորդը պէտք է քառավանկ ըլլայ, որ տողը երկու հաւասարական եօթնոտեաններու չվերածուի: — Երբ ամբողջ քերթուած մը

կազմուի միշտ եռավանկ առաջին և չորրորդ անդամով՝ քատերակաւ տող կոչումը կու տանք, որովհետեւ Բագրատունին այդ չափով թարգմաներ է թատերական քերթուածները. բայց նոյնը կարելի է հաւասարապէս գործածել նաեւ ուրիշ տեսակ քերթութեանց և նաեւ զիւցազներգութեանց համար, առաջին անդամը 1—4 վանկերու փոփոխութեամբ:

Մինչեւ հիմայ ըսածներէս՝ հայկական չափին մէջ կ'ունենանք ուրեմն հետեւեալ փոփոխութիւնները վանկերու և անդամներու.

1 — 4 — 4 — 4	կամ	3
2 — 4 — 4 — 4	»	3
3 — 4 — 4 — 4	»	3
4 — 4 — 4 — 4	»	3
2 — 3 — 4 — 4	»	3
3 — 3 — 4 — 4	»	3
4 — 3 — 4 — 4	—	

Անդամներու այս զանազան բաժանումները կը կատարուին ոչ թէ վանկերու համրանքով, այլ շեշտով:



Ը. — Շեշտը երկու տեսակ է. առ' որ ձայնն երկարելու կը ծառայէ, և բոռ' որ ձայնն իջեցնելու և հանգիստ առնելու նշանն է. ոչ մէկը և ոչ միւսը՝ սովորաբար նիւթապէս չեն գրուիր, այլ բնական առողանութեամբ կ'արտասանուին:

Շեշտը՝ տաղաչափութեան կեանքն և հոգին է. առանց շեշտի՝ տաղտկութիւն և մեռելութիւն կը տիրէ:

Տաղաչափական շեշտը պէտք չէ շփոթել քերականական կոչուած շեշտին հետ, որ վանկերու սղութիւնն և երկարութիւնը կ'որոշէ. ինչպէս է յունական և հռովմէական լեզուներուն մէջ, որուն ձեռքով կը կազմուին անոնց ոտանաւորները: Այս տեսակ շեշտէ հայ լեզուն բոլորովին զուրկ է, չնայելով Ե. և Զ. դարերուն մէջ ոմանց ըրած ջանքերուն, որ կ'ուզէին նոյնը նաեւ հայերենի վանկերուն յարմարցնել. ապարդիւն ջանք, քանի որ լեզուին բնական կազմութիւնը և ժողովրդեան ականջը չէին համապատասխաներ քերականագէտներու տեսական վարդապետութիւններուն:

Տաղաչափական շեշտը պէտք չէ շփոթել նմանապէս անյական շեշտին հետ, որ վանկի մը սրութիւնը կամ բթութիւնը կը ցուցնէ, ինչպէս են Յունաց, Լատինաց, Իտալացւոց, Սլաւոնացւոց և ուրիշ ազգաց լեզուներու վանկերուն մէջ, որով այս վերջիններս կը ձեւացընեն հատույ, յարաշեշտ, նախաշեշտ, և այլն, բառեր: — Հայերէնն այսպիսի շեշտէ գրեթէ զուրկ է, եթէ հաշուի չառնենք քանի մը բարդ բառերու շեշտեր. զոր օրինակ. այգապէս, այսքան, որչափ, նոյնքան, այսօր, յայսկոյս, և այլն:

Տաղաչափական շեշտն է՝ բանական կամ առնչական կոչուած շեշտը, որ ցոյց կու տայ գաղափարներու կամ զանոնք բացատրող երկու կամ աւելի բառերու իրար հետ ունեցած սերտ յարաբերութիւնը. և այս բանական շեշտն է բանալին հայկական տաղաչափութեան:

Վերն ըսինք որ տաղաչափական շեշտը կրնայ առ' և կամ բոռ' ըլլալ: Բոռը կը կոչուի նաեւ հանգիստ. հետեւաբար պարզապէս շեշտ բառով կը հասկըցուի ընդհանրապէս առ' շեշտը:

Շեշտը կրնայ գտնուիլ տողի մը ամէն մէկ անդամին վերջին վանկին վրայ, և կը ծառայէ անդամներն իրարմէ բաժնելու:

լու, առանց բացառութեան նաեւ վերջին անդամին՝ յաջորդ տողին առաջին անդամէն: — Օրինակներ.

[ւաղան

Բերեալ վաղիւ մատուցէ՝ կրկին ի ձեռս իմ զախշտանութեան՝ բանական զօրապետի՝ պատերազմաւ: Եւ երկիր թընդեալ ի դո՛ւի երկաթակո՛ւտ սրմբականց Բոցաշո՛ւնչն երթվարաց, գոռք և խըրխինջք, զինուց փայլք:

Ինչպէս այս օրինակներու՝ այսպէս ալ ուրիշ նման տողերու մէջ՝ շեշտին թանական ըլլալը յառաջ կու գայ բառերու դասաւորութենէն, որով նախընթաց անդամի մը վերջին բառը այնպիսի սերտ կերպով կապուած է յաջորդ անդամին կամ անդամներուն հետ, որ ուղիղ առագանութիւնը կը պահանջէ ձայնը այնպէս բարձրացնել կամ երկարել՝ իրրեւ թէ նոյն վանկը օժտուած ըլլար ձայնական շեշտով:

Եւ յիրաւի, ի՞նչպէս կարելի է մակբայը բայէն զատել, գոյականը իր ստացական դերանունէն, յատկացուցիչը իր յատկացեալէն, ածականը գոյականէն, և այլն: Չէ կարելի առանց իմաստին խանգարումն պատճառելու՝ վերոյգրեալ և անոնց նման տողերու մէջ՝ հանգիստ տալ ձայնի՝ ուր որ բնական շեշտ կայ. չէ կարելի մէկէ աւելի շնչառութեամբ ար-

տասանել Բերեալ վաղի՛ւ մատուցե՛կ կըրկին ի ձեռս իմ գաւազանն իշխանութեան, և կամ Եւ երկիրը թընդեալ ի դո՛ւի երկաթակո՛ւտ սրմբականց բոցաշո՛ւնչն երթվարաց:

Բայց թէ որ միշտ այսպէս սուր շեշտով բաժնուին տողերու անդամները, արտասանութիւնը՝ թէ և կորովի՝ բայց պարտասեցուցիչ կը դառնայ, և շեշտերու միակերպութիւնն ալ գուցէ աւելի տաղաւալի պիտոր ըլլայ՝ քան թուաչափ վանկերով անդամատութիւնը: Ուստի ներդաշնակութիւնը կը պահանջէ որ չափական տողերը կազմուին ընդհանրապէս փոփոխակի սուր և թուր շեշտերով օժտուած անդամներէ, որոնց սուր շեշտերը՝ տողին կորով կ'ընծայեն, իսկ բութերը՝ սահունութիւն և հանգիստ:

Բութ շեշտը կամ հանգիստը կը գրտնուի տփորաբար տողերու երկրորդ և չորրորդ անդամներուն վերջը. զոր օրինակ.

Ամենայն կորեալ ի քէն. յաղթող են քո՛ բռնաւորք. Պատուանքո՛ւ պատրաստ. թէ չփախնուցու՛ մեռանիս. Երթ, մի լինիր ժամավաճառ, կալ ըզգինուորդ առաջնորդ:

Անդամներու վերջը գտնուած առգանութեան նշանները՝ թուր, ստորակիտ, միջակիտ և վերջակիտ, միշտ հանգստի կը ծառայեն. բայց անոնք կրնան գտնուիլ

Նաեւ անդամներուն մէջերը՝ առանց տա-
ղաչափական հանգիստ ցուցնելու. զոր
օրինակ.

Դիք, որ զսէն / իմ և զո՛րս տեսնէք / աստանօր,
Սակայն չէ՛ / նա, տիկին, / ի հասարակ սիրողաց,
Տեսանեմ՝ / զի ստոյգ պատմեմ / են ինձ. նախանձն /
իմ արգար,
Ամէն՛ / քո թընամիքդ / առ գուրս քո՛ / են, Հըռովմ:

Հանգիստը սովորաբար, ըսի, երկրորդ և
չորրորդ անդամներուն վերջը կը գտնուի,
բայց արգելք մը չկայ՝ իմաստին պահան-
ջելուն համեմատ՝ նաեւ առաջին և եր-
րորդ անդամներն ալ հանգիստով վերջա-
ցընելու. զոր օրինակ.

Լաւ գիտէ Յովիդայէ քան զոր ասէն՝ զազգ նորս.
Զինչ և է, գուշակեմ ըզնա նոցո՛ւն մահաբեր,
Զըրասցին, իսկ որ յետ ա՛յնրբ դայցէ՛ յի՛մ պարանոց,
Ան ունիմ թէ հուր և սուր՝ յաչաց իմոց հուսկ յետոյ
Բզտածարս այս ասուլի՛ բնաջինջ ի բաց սրբեհոցն:

Այս տողերուն մէջ զինչ և է, զըրաւ-
ցին, ակն ունիմ առաջին անդամները՝ հան-
գիստով կը բաժնուին երկրորդներէն, իսկ
քան զոր ասէն, յաչաց իմոց երրորդ ան-
դամները՝ չորրորդներէն:

Բաց ի այն շեշտերէն՝ որոնք անդամ-
ներուն վերջին վանկին վրայ գտնուելով՝

զանոնք իրարմէ կը բաժնեն, տող մը կըր-
նայ պարունակել նաեւ ուրիշ շեշտեր՝ ան-
դամներուն մէջ, ձայնական և կամ բա-
նական. զոր օրինակ.

Զայն շըրուկ / և դրենդին / լըսէ՛ և կոյ / սըն Հայկա-
նոյչ,
Փոթորկին / ի թափ շընչոյն / յարեզականն / ի լոյս շող-
շողք,
Հարցանել զինչ / իրք իցեն, / յորմէ կուտէ / չենքն դայցէ,
Թափուր / և ամայի / դտանէ գտեղին / յարի՛ արանց,
Աստուած հօրն / իմոյ Հայկայ, / ցոյց ինձ, հորդեմ /
զլաւեղին ուղ,
Այ՛ նենգաժող / դաւաճանք, / զիշերազնաց / աղուեսոյց
ջոկ,

Սակայն տող մը պակասաւոր և աններ-
դաշնակ կ'ըլլայ, եթէ շեշտով վերջացող
քառավանկ անդամի մը երրորդ վանկին
վրայ գտնուի աւելի զօրեղ շեշտ մը. զոր
օրինակ.

Այրեպին, թո՛ղ / յաճին գիցին / տունք և տաճարք /
ամբարըշտաց,
Եւ ի դաշտի / մանդաղ մի՛ խո՛տ / չընձեսցէ բնաւ / դա-
լարագեղ:

Այս երկու տողերուն մէջ այրեպին
աւելի զօրաւոր շեշտ ունի քան թող (գի-
ցին), և մի՛ հրամայականը քան խոտ
(չնձել). ուստի անդամատուրիւնը կը կա-

դայ: Իսկ եթէ աւելի պատշաճ և բնական
կերպով շարենք բառերը՝ կ'ունենանք լաւ
շեշտաւորուած ընտիր տողեր. այսպէս.

Թող այրեացին, / յաճին զիցին / տունք և տաճարք /
ամբարըշտաց:

Եւ մանդաղ մի / ընաւ հընձեսցէ / ի դաշտի խոտ / դա-
լարագեղ:

Նմանապէս տող մը ներդաշնակ չ'ըլ-
լար, մանաւանդ թէ տաղաչափական թե-
րութիւն մը կը համարուի, եթէ հանգիս-
տով վերջացած քառավանկ անդամի մը՝
երրորդ վանկին վրայ գտնուի շեշտ մը.
զոր օրինակ.

Մի՛ քեզ, այր դու, / տաղնապէլ զօրն / ի բուն ըղզունդ /
քաջացդ ի չու:

Մըրկածով ծով / բախե ալեօքն / ըզվիմաձօնձ / ավա-
փայա:

Այս երկու տողերն ալ պակասաւոր են,
առաջին անդամները բնական շեշտով կը
բաժնուին յաջորդներէն այր և ծուփ վան-
կերուն մէջ, և դու և ծով պէտք է անցնին
երկրորդ անդամին, որով մնացած ան-
դամներուն շեշտերն ու կարգն ալ կը
խանգարուին, և արտասանողը անգամ մը
սխալելէ վերջը՝ պիտի ստիպուի ետ դառ-
նալ և կարդալ անբնական և թերի շեշ-

տաւորութեամբ անդամներու, ինչպէս որ
վերը բաժնուած են ուղղագիծներով:

Նոյնպիսի անպատեհութիւն և թերու-
թիւն կը ներկայացընէ տող մը՝ եթէ քա-
ռավանկէ պակաս անդամի՝ յաջորդէ ան-
դամ մը՝ շեշտուած առաջին վանկին վը-
րայ, երբ այդ վանկը կրնայ նախընթա-
ցին կցուիլ բնական ընթերցումով. զոր
օրինակ.

Ասէին / այր ցընկեր. / Սա թալացեալ / եհան զողի:

Տողը կը կաղայ, վասն զի բնական ըն-
թերցմամբ այր կրնայ կարդացուիլ առէինի
հետ: — Ուրիշ օրինակ.

Նա խուսէր / յայտնոյս և յայն, / մերթ երեւեալ / և
մերթ ծածկեալ:

Կաղ է տողը, վասն զի կրնայ կար-
դացուիլ՝ Նա խուսէր յայտ / կոյս և յայն,
մերթ / երեւեալ... և ընթերցողը հոս պիտի
անդրադառնայ՝ որ տողին անդամները
պէտք էր վերը դրուած թերի բաժան-
մունքով կարդար: — Ուրիշ օրինակ, որուն
մէջ երրորդ անդամը կրնայ կաղալ.

Ո՛վ ժամ յետին / տեսութեանս, / ո՛հ սիրահուր / բա-
զուկք և թաթք:

Ուր ո՛ր՝ բնական առողջանութեամբ կըր-
նայ տեսարեալսին հետ միանալ, քանի
որ ստորակէտը (ինչպէս միւս կէտերն ալ)
անպատճառ նշան չեն անդամներու բա-
ժանումի, ինչպէս վերը ցոյց տուինք:

Կրնայ նաեւ մթին և աններդաշնակ ըլ-
լալ տող մը, եթէ անդամները շեշտաւոր
վերջացնելու նպատակով՝ անբնական կեր-
պով ետեւառաջ շարուին բառերը, մինչ-
դեռ շեշտին գեղեցկութիւնը պէտք է բնա-
կան շարքին մէջ զուրս ցատքէ: — Այս-
պէս, օրինակ իմն, քիչ մը բռնազբօս և
անբնական են հետեւեալ տողերը.

Յարձանըս կըճեայս Աստուած ըզվրէժս իւր դրօշմէ.
Եւ փղըշտացոյն հանդոյն՝ ըղնոյն խորայելի աւանդէ:
Սոսկա, ո՛վ Սաւուղ, ի վեր ի թուխ ամպրոտս աւասիկ
Լզմահուն հրեշտակ հրեղէն թիւօք հայիմ սաւառնեալ:

Ընդհակառակն ո՛րքան աւելի բնական
և սահուն են շեշտերը և հանգիստները,
երբ նոյն բառերը պարզագոյն շարադա-
սութեամբ հիւսուին ճարտար գրչէ մը՝
հետեւեալ կերպով.

Ըզվրէժս իւր Աստուած զըրէ յարձանըս կըճեայս,
Եւ որպէս ի փղըշտացին՝ նոյն յիսրայէլ աւանդէ:
Սոսկացիւր, Սաւուղ. ահա ի թուխ ամպրոտ ի բարձունս
Սաւառնեալ հրեղէն թիւօք հայիմ զհրեշտակն մահու:

Ո՛րքան շարադրութիւնը պարզ և բնա-
կան ըլլայ՝ այնքան ալ շեշտերու գեղեց-
կութիւնը ներդաշնակ պիտի հնչէ: Բազ-
մաթիւ ճարտարներու բիւրաւոր տողերէն՝
իրրեւ օրինակ մը պարզ շարուածքի և
սահուն ու բնական շեշտերու յիշեմ հե-
տեւեալները.

Հաւատարիմ քեզ թըխցին աղէ երազք կանացի,
Եւ չընենոց ահիւ՝ վեհազն հողիդ նըկուն եղիցի.
Սիրտ՝ որ ընդ փորձ անց անսասան բազմահաղէս
մըրցանաց,
Զարհուրեցի՛ արդ ի վտանգէն՝ զոր կին ի ցնորս երա-
զեաց:

Սահունութիւնը կը կաղայ միայն եր-
րորդ տողին մէջ անց անսասան քաղմա-
հանդէս՝ ա ձայնաւորով ձեւացած անընդ-
հատ վանկերու դժուարահնչութենէն: Փո-
խէ անսասանն անվեհերի՝ տողը կ'անուշ-
նայ, թէպէտ և աւաստիլ և վեհերիլ նոյն
իմաստը չունին:

Կարելի էր անշուշտ շարունակել դեռ
նմանօրինակ ղիտողութեանց շարք մ'ալ,
և խօսիլ բառերու ընտրութեան, ձայնա-
ւորներու սըղման, վանկերու անախորժ
նմանաձայն յաջորդութեան և ուրիշ պատ-
շաճութեանց և անպատշաճութեանց վը-
րայ, եթէ յօդուածս՝ տաղաչափական ա-

ըրուեստի դասագիրքը մ'ընել ուզէի, ինչ որ նպատակէս դուրս է: Ուստի կը փութամ անցնելու ուրիշ խնդրի մը:

*
* *

Թ. — Ինչպէս տեսանք մինչեւ հիմայ ըսածներէս՝ Նախնեաց տաղաչափութեան արուեստն և ոգին կը կայանայ՝ համազօր բայց ոչ համալմանի անդամներու շարքին, և շեշտերու բնական կիրառութեան մէջ: — Առանց այս սկզբունքէն շեղելու՝ ընթերցողներուս նորութիւն մը պիտի առաջարկեմ, որ թէպէտեւ մինչեւ օրս չէ գործածուած (գէթ ինծի ծանօթ եղած քերթուածներէ), սակայն ոչ միայն հետեւանք մ'է Նախնեաց գործադրած սկզբունքին, այլ և ինքիրեն մէջ կարծեմ ներդաշնակ է, և ազատ՝ ձանձրոյթ պատճառող միակերպութենէ: Այս առաջարկած չափս է մետաստետիկանը, բայց հայկական չափով մեծացանոտնեան մը, որուն անդամներուն փոփոխութիւնները կ'ըլլան խառն գործածութեամբ հետեւեալ տողերուն.

1 — 4 — 3
2 — 4 — 3
3 — 4 — 3
4 — 4 — 3

Այս տողերուն վանկերու թիւը կը փոփոխուի ընդ մէջ 8ի և 11ի, բայց 8, 9, 10 վանկեր պարունակող տողերն ալ համազօր եռանդամ բաժանմունք կ'ունենան 11 վանկեր պարունակողներուն հետ. ինչպէս հայկական մեծ չափը՝ քառանդամի կը բաժնուի՝ 13—16 վանկեր պարունակող խառն տողերով:

Օրինակ մը (ինծմէ մէջ բերուած) թող վկայէ այս հայկական մետաստետիկան ներդաշնակութեան: Եթէ հաճոյ անցնի տաղաչափներու՝ գոհ պիտի մնամ. հակառակ պարագային՝ տհաճութիւննին զիս տոգոհ պիտի չթողու:

Մինչեւ հիմայ յատուկ նպատակով մը մէջ բերած գրաբար օրինակներուս հակառակ՝ առաջարկութեանս ճաշակիկ մը կ'ուզեմ տալ աշխարհաբարով, յուսով որ ապագային այս տեսակ տողերէ խնորժ զգացողին ճաշակիկէ մ'աւելին յաջողիմ ընծայելու:

Նկարագիր պատերազմի դաշտի մը
մարտակռիւէ մը վերջը:

Այսպէս երբու զեմ կրօն
Յառաջ կը տանէին, և բախտին
կռիւքն անորոշ կը տատանէր զուգամէտ
կրկիւզի և յուսովը զգացման մէջ,
Արուեստ Տաղաչափ.

Դաշար ծածկեր են խորտակուած բիւր տէգեր,
Ջախջախուած վահաններ, զէնք ու զրահներ,
Եւ սուրեր՝ կուրծքի լանջի մէջ մըխուած,
Կամ դեմնի վրայ ցիրուցան տարածուն:
Բերընքսիւկեր փրուուեր են շատ գիւղիներ,
Եւ շատէր աս երեսնին զէպ ի հող՝
Կարծես գետինը կը խածնեն մոլեգլին:

Ինկած է երիւարն իր տիրոջ՝
Ինկած է զինակցին քով զինուորն,
Պառկած է ոսոխին մօտ ոսոխն,
Եւ շատ տեղ մեռածին վրայ փրուուած
Կիսակենդանն, և յաղթուածին վրան յաղթողն:
Ոչ մեռելական լրուութիւն
Եւ ոչ ալ քաջորոշ վանդիւններ,
Այլ խրժաճայն խուլ խրդուրտին մ'ամէն կողմ՝
Կը տարածուի, կատաղութեան կառանջիւնք
Եւ բարկ մոլեղնութեան մոլնիւններ,
Թառանջներ հեծեծազին կուրծքերու՝
Որ խոցուած են մահացու վերքերէ:

Առաջ աշխարհ լուսացող պաղպաղուն
Չէնքեր ու զրահներ՝ արդ քրտառնիւ
Երեսոյթ մը կ'ընծայեն տխրատեսիլ:
Ձի փայլիւ երկաթն, ոսկին չի շողար,
Գեղանընդլ գոյներուն հետքն իսկ չըկայ:
Բոլոր զարդերն այն՝ որ առաջ աշխարհ ճօխ
Ճաճանջներով կը պըճնէին ցոլացայտ
Բիւր սաղաւարտներ ու շիւղիւր,
Արդ տանակտիս գեանաթաւալ են փրուուած.
Եւ ինչ որ չաղախած չէ արիւնն՝
Ապականեր է դայն փոշին աղտեղի:
Այսքան փոխուեր էին երկու բանակներն:

ՏԱՍՍՈՑ. Ազատութեն Երուսաղեմի

Երգ Թ. Ուրիակի 50-52

Այս չափը սակայն զիւցազներգութենէ
աւելի յարմար կը համարիմք քնարերգա-
կան նիւթերու, գեղօններու, նկարագիր-
ներու, իմաստասիրական կամ բարոյա-
խօսական բերթուածներու, ինչպէս է ընդ-
հանրապէս զուգավանկ տողերով մետա-
սանոտնեանն:

✱
✱ ✱

Ժ. — Մինչեւ հիմայ ըսածներս կը
վերաբերին պարզապէս հայերէն լեզուի և
հայկական տաղաչափութեան արուեստին.
ուստի չէ կարելի նոյները յատկացնել
նաեւ ուրիշ լեզուներու. վասն զի ամէն
մէկ լեզու՝ իրեն սեփական բնադրոշմն
ունի և ամէն ժողովուրդ՝ իրեն յատուկ
ճաշակը. հետեւաբար այս ինչ լեզուի մէջ
գեղեցկութիւն, վսեմութիւն, ներդաշնա-
կութիւն և չափակցութիւն համարուածը՝
կրնայ այն ինչ լեզուի մէջ նոյնպէս չըլ-
լալ, մանաւանդ եթէ բաղդատութեան կը-
շիռքին մէջ դրուին հին լեզու մը՝ նորի
հետ, յարեթական մը՝ սեմականի հետ,
և այլն:

Խօսքս տաղաչափութեան արուեստին
ամփոփելով, ինչպէս կանխաւ զուրցեցի,
քուստր վանկերու չափը հայերենի սեփա-

կանութիւն չէ, այլ որոշ ժամանակամիջոցի մէջ արաբականէն փոխ առնուած եկամուտ արուեստ մ'է, որ ունի իրեն յատուկ ներդաշնակութիւնը՝ հաւասար ուրիշ շատ մը ժողովուրդներու նոյնպիսի թուական չափերով գործածած արուեստին: Իսկ հայկական ջութիւ կրնայ Հայ ազգիս սեփականութիւնն համարուիլ, որքան ալ հետեւութիւն կամ նմանութիւն ունենայ ասորական և մանաւանդ երբայական չափերուն հետ. նմանութիւն մը՝ որ կը կայանայ պարզաբար անդամներու բաժանման մէջ, բայց ոչ շեշտաւորութեան, որովհետեւ անոնց քառանգամ տողերուն անդամներն ալ վանկերու համրանքով կը հաշուին և կ'անդամատուին:

Շեշտի անդամատուութեամբ կը բաժնուին տողերը նաեւ եւրոպական քանի մը նոր լեզուներու մէջ, բայց ոչ թէ հայերենի նման բանական՝ այլ ճայնական շեշտով: Սակայն արտասանութեան մէջ թէ՛ բանական և թէ՛ ճայնական շեշտերը՝ մի և նոյն ելեւէջի արդիւնքը կ'ընծայեն, մի և նոյն ներդաշնակութիւնը կը հնչեցնեն, այս տարբերութեամբ սակայն՝ որ մինչդեռ ճայնական շեշտը վանկերու վրայ՝ միայն ճայնի կշիռէ կը ծնունդ տայ, բանական շեշտը՝ ճայնի ելեւէջէն զատ՝ մուտքա-

կան պաշտօն մ'ալ կը կատարէ՝ երկու զանազան գաղափարներու սերտ միաշարժումը ցոյց տալով, և մտաւոր կապին իբրեւ արտաքին նշան՝ ճայնի կապով ալ զանոնք իրարու հետ կը ձուլէ:

Միտքս օրինակներով աւելի պարզեմ: — Իբրեւ օրինակ առնունք իտալական լեզուն, որուն տաղաչափութիւնը՝ հայկական չափին նման՝ շեշտաւոր հատածներէ կամ անդամներէ կը կազմուի, և իր բազմակերպ փոփոխութիւններով և լեզուական քաղցրութեամբ գերազանցը կը համարուի՝ եւրոպական ուրիշ ազգերու տաղաչափական արուեստներուն մէջ: — Սրբ, երբ իտալացին, օրինակ իմն, զուրցէ *umile preghiéra* (խոնարհ խնդրուած), *puro sacrificio* (անարատ զոհ), *terreno fecondo* (արգասաւէտ երկիր), *cheta notte* (հանդարտ գիշեր), *corre veloce* (երագ կը վազէ), *ingiustamente si lagna* (անիրաւ կը զանգատի), և այլն, և այլն. իւրաքանչիւրը այս զուգեակ բառերէն՝ իրար հետ մտաւորական սերտ միութիւն ունին, բայց այդ մտաւորական միութիւնը նշանակող՝ ճայնական կապով մը զօդուած չեն իրարու հետ, այլ իւրաքանչիւր բառ ունի իրեն յատուկ ճայնի ելեւէջը, իրեն յատուկ շեշտը. ընդհակա-

ռակն անոնց համապատասխան հայերէն բառերը՝ խոնարհ խնդրում, անարատ զոն, արգասառէտ երկիր, հանդարտ գիշեր, երանգ կը վազէ, անիրաւ կը գանգատի, բաց ի գաղափարական միութենէն՝ հիւսուած են իրարու հետ նաեւ սուր շեշտի (բանական շեշտի) կապերով, որով կարծես երկու բառերը մէկ բառ կը կազմեն. շեշտ մը՝ որ ճիշդ նոյն պաշտօնը կը վարէ՝ ինչ որ ունին մեր բաղադրեալ բառերուն մէջ աւելեւ յօդակապները, երկու գաղափարներէ խառն՝ մէկ գաղափար մը կազմելով, զոր օրինակ, արդար — ա — դատ, բար — ե — տեւիլ, և այլն:

Արդ, այս բունական և ձայնական շեշտերու իմացական տարբերութենէն դուրս՝ իտալական դիւցազնական տողը, որ է մետասանավանկ (endecasillabo) չափը, իր կազմութեամբ և ներդաշնակութեամբ շատ նման է հայկական չափին, հետեւեալ կերպերով.

Ա. — իտալական տողի մ'անդամները կամ հատածները կը բաժնուին իրարմէ ձայնական սուր շեշտերով: — Հայկական չափի տողին անդամներն ալ կը բաժնուին սուր և բութ բանական շեշտերով: — Երկուքին ալ ձայնական արգասիքը կամ ելեւէջի եղանակը մի և նոյնն է:

Բ. — իտալական մետասանոտնեան տողը կրնայ երեք տեսակ վերջաւորութիւն ունենալ, այսինքն՝ հատու (tronco), համբոյր (piano), սահուն (sdrucchiolo): — Հատու կ'ըսուի վերջաւորութիւնը՝ երբ տասներորդ վանկին շեշտովը կ'աւարտի տողը՝ առանց վերջին հատածին, (որով տողը 10 վանկի կը վերածուի). համբոյր կը վերջանայ տող մը՝ երբ վերջին հատածը (11 երորդ վանկը) միավանկ ըլլայ. իսկ սահուն կ'ըսուի՝ երբ վերջին հատածը երկավանկ ըլլայ, (որով տողը 12 վանկ կ'ունենայ). զոր օրինակ.

Հատու տող.

In quèsta per gran colpe orrida età.

Համբոյր տող.

Canto l'armi pietose e'l Capitano.

Սահուն տող.

Célebre l'acqua e se la bea pur Pindaro.

Այսպէս ուրեմն իտալական մետասանոտնեանին տողի մը վանկերը 10-12 կը փոփոխուին՝ տաղաչափական վանկերով,

այսինքն՝ սղելով մէկ վանկի՝ քովէ քով եկած ոչ — երկրարբառ ձայնաւորները, որոնք եթէ քերականական վանկեր համբուրին՝ տող մը 13-16 վանկեր կրնայ ունենալ:

Այսպէս ալ հայկական չափին մէջ՝ տողերն հաւասարավանկ չեն, այլ կը փոփոխուին 13-16 քերականական վանկերով:

Գ. — Իտալական մետասանտոնեան տողը երեք տեսակ անդամատիչ շեշտերու փոփոխութիւններ ունի. այսինքն, հատած ձեւացնող շեշտը պէտք է գտնուի

1. կամ վեցերորդ և տասներորդ վանկերուն վրայ.
2. կամ չորրորդ, ութերորդ և տասներորդ վանկերուն վրայ.
3. կամ չորրորդ, եօթներորդ և տասներորդ վանկերուն վրայ:

Որով հայկական չափին պէս՝ իտալական 11 տոնեան տողն ալ չորս հատածներու կամ անդամներու կը վերածուի. և թէպէտ առաջին տեսակին մէջ երեք հատածներէ կը ձեւանայ տողը, բայց որովհետեւ բաց ի վեցերորդ և տասներորդ վանկերուն անդամատող շեշտերէն, անհրաժեշտ երրորդ շեշտ մ'ալ կը գըտնուի առաջին հատածին կամ առաջին, կամ երկրորդ, կամ երրորդ և կամ չոր-

րորդ վանկին վրայ, ուստի տողին առաջին հատածը՝ փոփոխական վանկերով՝ երկու անդամի կը վերածուի նիւթապէս, չորս անդամի կամ հատածի բաժնելով տողը. զոր օրինակ.

Súrgono innumerábili faville.
Dipinte di mirábil primavéra.
Impedíva la vista e lo splendóre.
Seminatór di scándalo e di scisma.

Գ. — Ինչպէս որ հայկական չափին մէջ տեսանք թէ տող մը անդամատող սովորական երեք հատ շեշտերէն զատ՝ իւրաքանչիւր անդամի մէջ ալ կրնան երկրորդական շեշտեր գտնուիլ, այսպէս է նաեւ իտալական մետասանտոնեանին մէջ: — Հետեւեալ օրինակներուն մէջ բութի ձեւով կը նշանակեմ երկրորդական շեշտերը.

Le donne, i cavaliér, l'arme, gli amóri.
Amòr, virtù, pietà nel còr m'accénde.
Ch'ì mi sia tårdi al soccorso levàta.
Che mòrte tánta n'avésse disfátta.

Ե. — Վերը յիշուած իտալական մետասանտոնեանին առաջին տեսակին մէջ (շեշտը վեցերորդ և տասներորդ վանկերուն վրայ), առաջին հատածին շեշտը

կրնայ առաջին վանկէն մինչեւ չորրորդին վրայ փոխուիլ (ինչպէս վերը օրինակներով ցոյց տուի Súrgono, Dipinte, Impediva, Seminatór), կազմելով այս կերպով առաջին հատած մը՝ յար և նման հայկական չափին առաջին անգամին, որ շեշտին դիրքին համեմատ՝ կրնայ ըլլալ միավանկ, կամ երկավանկ, կամ եռավանկ և կամ քառավանկ:

Չ. — Դարձեալ նոյն տեսակ իտալական մետասանոտեանին մէջ՝ վերջընթեր անդամը՝ հայկական չափին վերջընթեր անդամին պէս անփոփոխ քառավանկ կը մնայ:

Խ. — Երկու լեզուներուն դիւցազնական չափին մէջ վերջին անգամին քանակի տարբերութիւնը՝ էական զանազանութիւն մը կը կազմէ, իտալականը մէկ-վանկէն երկուքի փոխուելով (համըոյր և սահուն վերջաւորութիւններով) և երբեմն ալ անհետանալով (հատու վերջաւորութեամբ)։ մինչդեռ հայկական չափին մէջ վերջին անգամը երբեքն չորս վանկի միայն փոփոխութեան ենթակայ է, և ոչ նուազ քանակի։ — Սակայն այս տարբերութեան մէջ ալ՝ երկու լեզուաց չափերուն նմանութիւնը կամ համեմատութիւնը պահուած է, ըստ որում թէ՛ հայկականին և թէ՛ իտալականին մէջ ալ վանկի մը պակասը

կը լրանայ տողին վերջի բնական հանգիստովը։ — Բաց ասկէց՝ իտալական վերջին անգամը ըստ ինքեան օրենքի դէպքէ հայկականին պէս նաեւ երեք կամ նոյն իսկ չորս վանկերէ կազմել, թէպէտ և իտալական տաղաչափութեան մէջ այդպիսի արտօնութիւն մը շատ աններդաշնակ կը հնչէ և խոտելի է. ինչպէս են, օրինակ իմն հետեւեալ տողերը.

Infiammati sospir dal pètto ròmponmisi.
A tòrto gli èmpì de' lor guàì rammàricanosì.

Ը. — Իտալական մետասանոտեանին և հայկական չափին այս նմանութիւններուն վրայ՝ կրնանք աւելցնել պատահական նմանութիւն մ'ալ՝ յանգերու (rime) նրկատմամբ։ — Ինչպէս յայտնի է Գր. Մագիստրոսի և ուրիշներու քերթուածներէն, հայկական չափը կրնայ թէ՛ յանգաւոր և թէ՛ անյանգ յօրինուիլ։ Սակայն անյանգ տողը իրաւամբ գերընտրեր են թէ՛ նախնի և թէ՛ նոր տաղաչափները, քանի որ յանգը (որ ըստ ինքեան գրեթէ տղայական և ականջ միայն զուարճացնող տառախաղ մ'է) ոչ միայն պատճառ կը դառնայ շատ անգամ բռնազբօս տողերու, այլ նաեւ անպէտ արգելք մ'է բանաստեղծին սլացքներուն:

Նոյն դրութիւնը կը տեսնենք նաեւ իտալական մետասանտոնեանին համար, զոր կարելի է թէ՛ անյանգ և թէ՛ յանգաւոր շինել. այս տարբերութեամբ միայն՝ որ իտալական տողը հայկականէն կարճագոյն և յանգերն ալ հայերենէն աւելի ճոխ և քաղցրահնչիւն ըլլալով, իտալացի բերթողներէն շատերը յանգաւոր գրեր են իրենց բանաստեղծութիւնները. մինչդեռ ուրիշներ ալ, մանաւանդ թարգմանութեանց մէջ, իրրեւ աւելորդ բեռ և մանկական խաղ՝ զանց ըրեր են յանգի գործածութիւնը:

Յանգի գործածութիւնը՝ որ արեւելեան ժողովուրդներու միջէն այնքան սիրելի է Պարսից, Արաբացոց և Թուրքերու, Հայերն ի սկզբան չունէին (ինչպէս ցոյց կու տան Գոդրան Երգերն և Ս. Գրոց Օրննոշրիւններն ու Սարմունները), և նաեւ արաբական տաղաչափութեան ազդեցութենէն վերջն ալ՝ Շնորհալին անգամ (որ յանգաւոր տողերու ջերմագոյն կիրարկողն եղած է) շատ բերթուածներ անյանգ տողերով շինած է, ինչպէս յայտնի է քանի մը շարականներէ և ժամագրքի Առաջօր յաջոյ և Այստրն առնկայն հնգավանկ տողերով անգամ բերթուածիկներէն:

Իտալացիք ալ նմանապէս անյանգ ոտա-

նաւորը (զոր verso sciolto, արձակ չափ կը կոչեն), ոչ միայն իրենց դիւցազնական տողին՝ այսինքն՝ մետասանտոնեանին մէջ գործածեր են, այլ նաեւ ուրիշ կարճագոյն անյանգ տողերու (versi sciolti) մէջ. օրինակ իմն եօթնոտեանի և ութոտեանի մէջ, ինչպէս Պետրարկա, Փ. Բալլի և ուրիշներ, կոչելով զանոնք settenari և ottonari sciolti, նոյն չափերով rimati (յանգաւոր) կոչուածներէն զանազանելու համար:

*
* *

ԺԱ. — Արդ, այսքան նմանութիւնները հայկական չափին և իտալական մետասանտոնեանին միջեւ՝ կարծեմ իրաւամբ կ'արդարացընեն համոզում մը՝ զոր ուրիշ տեղ ալ յայտնած եմ (Ազատուն Երուսաղեմի դիւցազներգութեան թարգմանութեան Յառաջաբանին մէջ), այսինքն՝ թէ իտալական մետասանտոնեանի թարգմանութեան համար՝ հայերենի մէջ յարմարագոյն չափն է հայկական չափը, որ կը պահէ բնագրին ոչ միայն շեշտաւորութիւնը, այլ և անոր ներդաշնակութեան հոգին, անոր արուեստին գաղտնիքը, անոր տողերուն բնաղրոշմը՝ թէ շեշտերու դա-

սաւորութեան և թէ՛ անդամները կամ հասարակական կազմելու կերպին մէջ:

Սակայն այս կարծիքին աննպաստ դիտողութիւն մը պիտի երեւնայ՝ եթէ ըսուի թէ իտալական մետասանոտեանին վերջին հատածին միավանկութիւնը (համարյոք տողերու մէջ՝ որով զրուած են դիւցազններգութիւնը և թատերգութիւնը), բաղդատելով հայկական չափին վերջին անդամին եռավանկութեան և քառավանկութեան հետ, կը տեսնենք որ վերջինիս տողերն՝ իտալական տողերուն երկարութեան հետ համեմատական չեն. որով թարգմանիչը պիտի պարտաւորի ստէպ բառեր աւելցընել և՛ կամ պարզ ածական մը՝ հայերէն բարդ ածականով և կամ բայ մը՝ հայերէն երկու հոմանիշ բայերով բացատրել, և այլն, որպէս զի կարելի ըլլայ տող առ տող թարգմանել:

Այս իրաւացի տեսնուած առարկութեան և առերեւոյթ դժուարութեան հանդէպ՝ նախ պիտի դիտել տամ ես ալ՝ որ իտալական մետասանոտեան մը հայկականի թարգմանած ժամանակ՝ հարկ չկայ որ երկու լեզուաց տողերուն մէջ գտնուած իւրաքանչիւր անդամներն ալ փոխադարձաբար իրարու համապատասխանեն, այլ բաւական է որ տողը տողին համապատասխանի:

Երկրորդ, դիտել կու տամ որ իտալական տողին 11 վանկերուն և հայկական չափին 15 կամ 16 վանկերուն մէջ համեմատութիւն ընող մը՝ պէտք չէ մոռնայ որ Ա. հայկական չափին տողի մը վանկերը 13էն 16 փոփոխական են, և թէ այդ փոփոխութիւնն եական պայմանն է հայկական չափին, որով երկու լեզուաց տողերուն վանկերուն թիւերը չեն մնար 11 և 16 համեմատութեան մէջ, այլ միշտ հաշուով 11 և 14ի: -- Բ. Երկու լեզուաց չափերուն այսպիսի վանկական համեմատութիւն ընող մը՝ կը մոռնայ անշուշտ որ իտալական մետասանոտեանը 11 վանկ կը համրուի տաղաչափական և ոչ թէ քերականական վանկերով, ինչպէս կը համրուին 13-16 հայկական չափին վանկերը: Իբր օրինակ մ'առնենք Տասսոյի գրած ութեակներէն մէկը, որուն պէս են նաեւ ամբողջ քերթուածին (Ազատունի Երուսաղեմի) ութեակները:

	Քերթ. Վանկ
Così nel cavo rame umor che bolle	12
Per troppo foco, entro gorgoglia e fuma;	13
Nè capendo in sè stesso, alfin s'estolle	13
Sovra gli orli del vaso, e inonda e spuma.	15
Non bastano a frenare il vulgo folle	13
Que' pochi a cui la mente il vero alluma:	15
E Tancredi e Camillo eran lontani,	13
Guglielmo, e gli altri in podestà soprani.	14

Արդ, մինչդեռ այս ութը տողերն ալ
11 տաղաչափական վանկերէ կազմուած
են, ընդհակառակն իրարմէ տարբեր թուով
և 11է աւելի քերականական վանկեր կը
պարունակեն, հաշուի չառնելով բառերու
վերջին ձայնաւորներու կրճատումներն.
օրինակ իմն, umor, alfin, eran. — Ու
րիշ ութեակներու մէջ կը գտնուին նաեւ
տողեր՝ քերականական 16 վանկերէ բաղ-
կացած. զոր օրինակ.

Gli erano sempre, ovunque in guer-
ra ei fösse (IX. 27)

Ch'ei fa degli altri, in voi l'usato
ardire (IX. 28)

Tien salda in contra ai ferri e in
contra all'aste (IX. 31)

Ահաւասիկ ուրեմն այս և ասոնց նման
բիւրաւոր օրինակներէ յայտնի կը տես-
նուի՝ որ ինչպէս հայկական չափին տողը
կը փոփոխուի քերականական 13-16 վան-
կերու մէջ, նոյնպէս ալ իտալական մե-
տասանոտնեանին տողին մէջ կրնան պա-
րունակուիլ 13-16 քերականական վան-
կեր, որով երկու լեզուաց չափերն ալ
փոխադարձաբար հաւասարազօր տողեր
կ'ունենան:

Այս ըսածներէս սակայն չի հետեւիր
թէ ուրեմն թարգմանիչ մը պարտաւորեալ
է իտալերէն մետասանոտեան քերթուած
մը հայերենի դարձուցած ժամանակ՝ ան-
պատճառ հայկական չափով թարգմանե-
լու, և կամ այս վերջին չափով թարգ-
մանած ժամանակ՝ անհրաժեշտ կերպով
տողը տողին համապատասխան վերածե-
լու: Կուռ և սեղմ ոճ գործածող թարգ-
մանիչ մը կրնայ, մանաւանդ թէ լաւ
կ'ընէ՝ ամփոփել քերթուածը (ի հարկէ
առանց կրճատելու հեղինակին խօսքերը)
քնազրէն նուազագոյն հայկական տողերու
մէջ, երբ յատուկ նպատակ չունենայ՝ հա-
յերենի մէջ ալ անփոփոխ պահելու իտա-
լական քերթուածին երբեակը (terzina),
քառեակը (quartina), վեցեակը (sestina)
և կամ ութեակը (ottava): — Ըսածնե-
րուս հետեւանքն այս միայն կ'ըլլայ՝ որ
իմ կարծիքովս՝ հայկական չափը ոչ միայն
յարմար, այլ և ամենայարմարն է իտա-
լական մետասանոտնեանը թարգմանելու,
մանաւանդ եթէ մէջ բերած պատճառնե-
րէս զատ՝ բաղդատութեան առնենք նաեւ
իտալական բառերուն ընդհանրապէս կար-
ճութիւնն և սահունութիւնը, և ընդհակա-
ռակն՝ հայերենի (մանաւանդ աշխարհա-
բարին) բառերու և հոլովներու, բայերու,

յետադիր հոլովառուներու և յաւիտենական ոչրիւն վերջացող գոյականներու երկարութիւնները:

Այս է ահաւասիկ այն համոզումը զոր ունիմ այս խնդրոյս նկատմամբ՝ վերոյգրեալ ապացոյցներով, որոնք կարծեմ լիովին կը բաւեն արդարացնելու ունեցած համոզմանս տրամաբանական ըլլալը:

1912

ԱՍՈՐԱԿԱՆ, ԵՐՐԱՅԱԿԱՆ

ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱԶԱՓՈՒԹԻՒՆ



Ա.

Պրոֆ. Տեղայ կարգաւով Հ. Գրիմմէի և Ռ. Դիւվալի ասորական ոտանաւորի կազմութեան վրայ գրած ուսումնասիրութիւնները, և տեսնելով անոնց տաղաչափութեան կանոններուն և հայկականին մէջ եղած նմանութիւնները, կը հարցնէ՝ թէ արդեօք մինչեւ այսօր Հայուն սեփական համարուած ոտանաւորի կազմութեան արուեստը Ասորիներէն օգտուած չէ՞. հարցմունք մը որ գրեթէ հաստատութիւն մ'է, կամ թէ ըսեմ հաստատութիւն մ'է՝ զրոյին զգուշաւորութեամբ՝ հարցման ձեւի ներքեւ ներկայացուած. այնքան շօշափելի է ստուգութեան հետեւանքը՝ երբ ուզենք

* Տե՛ս Բաղմ. 1899, էջ 12-15.

երկու լեզուաց տաղաչափական կազմու-
թեան բաղդատութիւն մ'ընեւ:

Եւ յերաւի, երբ դիտենք՝

1. որ հայկական տողի նման՝ ասորական տողն ալ քառանգամ չափերու բաժ-
նուած է.
2. որ հայկական անդամներու նման՝ ասորական անդամներն ալ կրնան պարունակել իւրաքանչիւրն երկու և կամ երեք և կամ չորս վանկեր, բայց ոչ աւելի.
3. որ հայկական անդամներու նման՝ ասորական անդամներն ալ կը կազմուին ամբողջական թուերի, և ոչ թէ թուերու հատածներէ՝, ինչպէս են իտալական, սպանիական, անգլիական, և այլն, լեզուաց մէջ.
4. որ ասորական տաղաչափութեան ա-

1. Նշանակեց մէջ կը գտնուին նաեւ այդ տեսակ հատածներ ըստերու, որք ի հարկէ կարգէ դուրս դարձու-
ղութիւնք են, որք միշտ հայ ականջաց խորշումն կ'ազ-
դեն, ուստի հետեւելի չեն Այսպէս են յաջորդ տողերը,
զորս իբր օրինակ զգուշանալու՝ մէջ կը բերեմ.

Խորհրդոց / ոչ խոտորումն / և ոչ փոխ / գրութիւն
բարուց.

Յորմէ օրնու / թիւնք նմա / ի փրկելոցս / արեամբ
նորա.

ԶԳրիւրիւս / սուրբ հայրապետն / եկայք վերա / պա-
տուեսցուք.

Եւ եղեր / վերնկալ / աստուածա / յին բանին (եռա-
վանկ քառանգամ տող), և այլն:

րուեստը, ըստ Ս. Եփրեմի աւանդու-
թեան, Բարդեժան¹ գնոստիկեանին
ձեռքով գտնուած է, որ կ'ապրէր քրիս-
տոնէութեան երկրորդ դարուն մէջ,
մինչդեռ հայկական տաղաչափութեան
օրինակներ՝ չորրորդ և կամ հինգերորդ
դարեւ առաջ չենք գտներ, բաց ի
Գողթան երկրորդ քանի մը հատակ-
տորներէ, որոց վրայ յօդուածիս ըն-
թացքին մէջ պիտի խորհրդածեմ.

երբ այս պարագաներս, կ'ըսեմ, աչքի
տակ ունենանք, բնականաբար պիտի հե-
տեցնենք, առանց սխալանաց մէջ ինկնա-
լու վախի, թէ ուրեմն Հայք իրենց տա-
ղաչափական արուեստն ալ գէթ մասամբ
մը Ասորիներէն առեր են². ինչպէս որ

1. Բարդեժան ասորի հերետիկոսապետը՝ նախ Վա-
ղեսիանաց մոլորութեան հետեւեալ. բայց յետոյ
իրեն սեփական վարդապետութիւն մը հաստատեց, որ
աւելի Մանիքեոց աղանդին կը մօտենայ. յատա՛ջ քան
իւր մոլորիլը՝ երկար ատեն քրիստոնէութեան պարծանք-
ներէն մին եղած էր:

2. Պրոֆ. Տեղա՝ (Բզմ. Ննդիս. 1897, յուլիս. Հոր-
տն. էջ 331) հայկական ոտանաւորին ընդհատութիւն
ընելով Տեղեւոց (Թաթարաց) տաղաչափութեան հետ,
կը գրէր. «Առ Հայս ուղղած միակ հարցումս այս է.
Միթէ (թաթար) ոտանաւորաց մէջ իւրաքանչիւր ան-
դամոյ պարունակած վանկերու թուոյն զանազանու-
թիւնը՝ տարօրինակ նմանութիւն մը չի՞ յիշեցընէր հայ-
կական հին արուեստին կամ տաղաչափութեան հետ, որ
նաեւ այսօր ալ դեռ գործածութեան մէջ է... Պէտք չէ
ուշագրութենէ վրիպի նաեւ այս դիպուածական նման-

անոնցմէ առեր և երկար ժամանակ կը գործածէին նաեւ գրանշանները կամ այլ ուրենից տառերը, և ոչ սակաւ լեզուական յատկութիւններ, որոնք այժմ սովորաբար ասորաբանութիւնը բառով կը բացատրուին հայերէն քերականութեանց մէջ:

Այս հետեւանքը շատ բնական պիտի ըլլայ մեզ Հայերու համար, և բնաւ նորութեան զարմանք յառաջ պիտի չբերէ, քանի որ մեր ազգին պատմութիւնը կը վկայէ թէ Ասորոց եկեղեցական մատենագրութիւնն որքան մեծ ազդեցութիւն ունեցեր է Հայաստանի մէջ, յառաջ քան հայկական սեփական տառից գիւտն և կամ գործածութիւնն, և թէ Աթէնքէն և Բիւզանդիոնէ շատ առաջ՝ Եղեսիոյ ուսումնական շտեմարանք բացեր էին իրենց դռները հայազգի ուսումնասիրաց առջեւ՝ ասոնց մտաւորական յաջուրդ մատակարարելու,

ձայնոքիւնը»: — Կրնամ ես ազգայնիկ դիտման ըսելով՝ որ հայերէն տաղաչափութեան արուեստը որչափ հաւանական կամ զրեթէ ստույգ է՝ որ ասորերէնի հետ սերտ կապակցութիւն ունեցած ըլլայ, այնքան ալ անհաւանական և հեռի է ստուգութենէ՝ անոր թափաբերենի հետ որ և իցէ ազգակցութիւն ունենալը, կամ երկուքին իբրեւ մի միակ հասարակաց աղբիւրի մը ծնունդ ըլլալը. և և՛ ի՛նչ ուզենք ալ փնտռել դիպուածութեան համաձայնութեան մը աղբիւրը, զայն անշուշտ մի միայն բնութեան ծոցին մէջ պիտի գտնենք, իբրեւ առհասարակ ամենայն իրաց և չափոց ներդաշնակութեան մօր ծոցին մէջ:

և թէ մինչեւ յունական դպրութեան և լեզուի վայելչաբանութեանց Հայոց մէջ մոտոք գտնեն ու ծաւալիլը՝ ասորականն արդէն աւանդ թողեր էր անոնց մօտ իր լեզուէն շատ մը ոճեր և բառեր և զրուածոց թարգմանութիւններ. ինչ զարմանք ուրեմն որ նոյնն այդ ժամանակամիջոցին աւանդած ըլլայ Հայոց լեզուին՝ նաեւ իր տաղաչափութեան արուեստը:

Արդարեւ մեր պատմութեան մէջ կը տեսնենք՝ որ Հայք թէպէտ և յունական մատենագրութեան ամէն յատկութեանց ջանացին և քիչ շատ յաջողեցան հետեւիլ, բայց նոյն ազգին տաղից կազմութեան արուեստը չուզեցին և կամ չկրցան հայերենի մէջ փոխադրել: — Չկրնալը յառաջ կու գար մեր լեզուին կազմութենէն, որ Յունաց ձայներու նման զգալի կերպով՝¹ սուղ և երկար վանկեր չունէր, որոնք ներդաշնակութիւն կազմէին որոշեալ կանոնի մը ներքեւ իրարու յաջորդելով: Այսու հանդերձ եղան ոմանք՝ որ ջանացին ընդհանրութեան այդ չուզածն և չկրցածն ալ՝ ուզել և կարենալ, թէպէտ և իբր ան-

1. Գիտմամբ զգալի կերպով կ'ըսեմ, որպէս զի խժրժող քննադատը յանկարծ առջեւս ցուցակ մը շնորհայեցուններ և՛ ի և է, ո և ա, ը (նշուած) և ը (սղուած), և այլն, ձայնաւորներու համեմատութեան:

հատական և անյաջող փորձ մը մնաց իրենց ձեռնարկած այդ գործը: Այդ ումանց ուզելն ու ջանալն ալ զարմանք չի ազդեր մեզի, քանի որ գիտենք թէ հայ ազգն՝ յետ միանգամ յունական մատենագրութեան ճաշակն առնելու, իբրեւ հակառակ ուժգին հովէ մը բախուած՝ հողմացուցի նման յանկարծաթափ շուտափոյթ պտոյտ մ'ըրաւ երեսը դէպ ի Յունաստան դարձնելով. և ուզելով իրեն քամակը թողած Ասորւոյն (ուսկից արդէն բնական բարքով և պատմական պարագաներով միշտ խորշումն կրած էր) ամէն աւանդածը միանգամայն բնաջինջ ընել, ջանաց (այդ ասորատելութեան և յունամոլութեան բերման մղումով, նոյն իսկ հայկական լեզուի կազմութեան հակառակ վարմամբ) յունական տաղաչափութեան արուեստ կազմող երկար և սոյն ոտքերը և կամ վանկերը՝ քաշքշելով յարմարցնել հայերէն բառերու և տառերու. ուսկից յառաջ եկած են այն քանի մը ծաղրական տաղաչափութիւնք, որք հոմերական տաղը ու տողը¹ անուամբ կը յիշուին սո-

1. Կան նաեւ հոմերական բառք ըստածներն, որք պէտք չէ շփոթուին մեր հոս յիշած և մէջ բերած տողերուն հետ: Առաջնոց վրայ գրած է հմտաբար Հ. Արսէն Սուքրեան ի Բազմավիպի 1877 ամին (Հտր. 1, 6

վորաբար մեր բանասէրներէն, և որոց բանահիւսութեան իբր օրինակ մէջ կը բերէ (անշուշտ ինքնին յերկրելով) հին քերականի (Գրոնիսի թրակացւոյ) թարգմանիչն, իւրաստեղծ սուղ և երկար հայերէն վանկերու բաղադրութեամբ, հետեւեալ կերպով.

Ինձ բնաւ ես ոչ դու իրիք պատճառք, արեւ, այլ աստուածքն:

Զնեստոր ոչ խարեաց խօշին թէպէտ և յունպ էր: Պատրովդէ ինձ հէքիս կարի յոյժ սիրեցեալ անձին:

Այս և ասոնց նման տողերու մէջ հայականներն ոչ միայն չափ և կամ աղաքեալ և կրկարեալ զանազանութիւն և ամանակներ չեն անդրադառնար, այլ ընդհակառակն կ'իմանան որ բառերու շարադասութիւնն իսկ շատ խորթ և օտար է մայրենի լեզուին վայելչաբանութենէն, և հեռի ներդաշնակութենէ, մանաւանդ երբ բաղդատենք զանոնք իրենց յոյն բնագրին հետ, ուսկից թարգմանուած են.

Ὅστι μοι αἰτίη ἐσσι, θεοί νύ μοι αἵτιοι εἰσιν.

էջ 15). — Հոմերական տողերու գրութեամբ ոտանաւոր յօրինած է նաեւ Գրիգոր Մագիստրոս, որուն համար կը վկայուի նաեւ հին քերականին մեկնութիւն մը շինած ըլլալը. (Հ. Գ. Զարբ. — Պատմ. հին հայկ. դպր. — 1897, էջ 582, 583).

Νέστορα δ'οὐκ ἔλαθεν ἰαχῇ, πίνοντά περ ἔμ-
πηξ.
Πάτροκλέ, μοι δειλῇ πλεῖστον κεχαρισμένε
Φυμῶ.

Ինչպէս Դաւիթ Անյաղթի և նմանեաց
հելլենաբանութիւնք և արական ու իգա-
կան դերանուանց վերջաւորութեանց զա-
նազանութիւնք՝ անընդունելի եղան ազգին
ընդհանրութեան, այսպէս ալ այս սակա-
ւուց տաղաչափական երկարաւմանի և սղա-
վանի դրութեան նորաձեւութիւնն՝ անհաս-
կանալի և անգործադրելի դատուեցան նոյն
ազգէն, և հին գրականական պատմութեան
մէջ այս գործոյս նկատմամբ լռութիւնն՝
եղած փորձին արդէն ճարտասանական
մերժումն է. որուն հակառակ՝ ընտիր մա-
տենագիրք ասորահայկական արուեստին
ձեռքով յօրինեցին իրենց աննման ներ-
դաշնակութեամբ զանգուած մեղեդիներն
ու շարականները:

Իմ նպատակս չէ խօսիլ այս տողերուս
մէջ հայկական տաղաչափութեան՝ սեփա-
կան կանոնաց, յատկութեանց և վայելչու-
թեանց վրայ, և կամ մէջ բերել անոր
կրած այլ և այլ ձեւափոխութիւնները՝ զա-
նազան դարերու ընթացքի մէջ. գուցէ
ուրիշ անգամ առիթ ունենամ այդ մասին
գրելու: Իսկ այժմ հայերէն ստանաւորի

արուեստն ասորական չափին հետ բաղ-
դատելու ատեն՝ կ'ուզեմ միայն անդրա-
դարձրնել որ վերոյիշեալ նմանութեանց
հետ՝ հայկականն ունի նաեւ իւր տարա-
ձայնութիւնները, որոնք սեփականք են
միայն Հային՝ օտար Ասորւոց բանաստեղ-
ծական արուեստէն: Այս տարաձայնու-
թիւնք, ըստ իս, կը կայանան՝ նախ՝ ան-
շաւոց շարունակի և անոնց պարունակած
վանկերու քիւերուն տարբերութեան մէջ, և
երկրորդ՝ անշաւկերու իրարմէ քաժմուելու
կերպիւ մէջ:

Հուրերտ Գրիմմէի վերոյիշեալ տեղեկու-
թեանց համեմատ՝ ասորական ոտանաւորի
տող մը կրնայ պարունակել երկալանկ,
եռալանկ և քառալանկ բառեր, որոց բա-
ղադրութեամբ միայն կը ձեւանայ տողը.
նախընթաց և հետեւորդ միալանկ բառերը
կը միանան գլխաւոր բառին հետ՝ առանց
կարենալու առանձին անդամ ձեւացնել:
Ահա այս կերպով կը կազմուին հետեւեալ
երկանդամներն. (թուանշանք ցոյց կու տան
իւրաքանչիւր անդամոյ մէջ պարունա-
կուած վանկերու թիւը, իսկ + նշանն՝ ան-
դամներու բաժանմունքն ու կարգն):

$$\begin{array}{r|l}
 2+2 & 3+4 \\
 3+3 & 4+3 \\
 2+3 & 3+2 \\
 2+4 & 4+4 \\
 4+2 & \hline
 \end{array}
 \left. \vphantom{\begin{array}{r|l} 2+2 \\ 3+3 \\ 2+3 \\ 2+4 \\ 4+2 \end{array}} \right\} \begin{array}{l} \text{Այս բաղադրութիւնները (ի} \\ \text{բաց առեալ վերջին երկուքը) մէջ} \\ \text{կը բերէ Գրիմմէ, բազմաթիւ օրի-} \\ \text{նակներով:} \end{array}$$

Արդ, հայկական երկանդամ տող մը չի կրնար այս ամէն բաղադրութիւններով կազմուիլ՝ թէ՛ անդամոց շարուածքին և թէ՛ անոնց վանկերու թուոց տարբերութեամբ, օտար ըլլալով իրեն $4+2$ և $2+2$ բաղադրութիւններն. իսկ $2+4$ կամ $3+2$ հայերենի մէջ կը ձեւացնեն միանդամ (հնգավանկ) տող մը, որ երբեք չի կրնար տեղի ունենալ ասորական տաղաչափութեան մէջ. ուստի կը մնան ասորերենի մէջ հայկականին համաձայն $3+3$ և $3+4$ կամ $4+3$ և $4+4$ երկանդամներն, որոնք յաճախ են աւելի արաբական թուաւոր և յանգաւոր ոտանաւորի կազմութեան մէջ: Դիտելի է դարձեալ, հակառակ ասորական ոտանաւորին օրինաց, որ հայկականին մէջ երկավանկ անդամ մը երբեք չի կրնար քառավանկ անդամի յաջորդել:

Նկատողութեան առնելով նաեւ ասորական եռանդամ տաղաչափութեան կերպը, կը տեսնենք որ կը կայանայ հետեւեալ դրութեան մէջ.

$$\begin{array}{r|l}
 ա... & 2+2+2 \\
 բ... & 3+3+3 \\
 գ... & 2+2+3 \\
 դ... & 2+3+2 \\
 ե... & 3+2+2 \\
 զ... & 2+2+4 \\
 է... & 4+2+2 \\
 ը... & 4+3+3 \\
 \hline
 &
 \end{array}
 \left. \vphantom{\begin{array}{r|l} ա... \\ բ... \\ գ... \\ դ... \\ ե... \\ զ... \\ է... \\ ը... \end{array}} \right\} \begin{array}{l}
 ր... & 2+3+4 \\
 ժ... & 3+2+4 \\
 ժա... & 4+2+3 \\
 ժբ... & 4+3+2 \\
 ժգ... & 3+2+3 \\
 ժդ... & 3+3+2 \\
 ժե... & 2+3+3 \\
 & \hline
 \end{array}$$

Այս ամէն չափերը կը յիշուին Հ. Գրիմմէի հետազօտութեան մէջ բազմաթիւ օրինակներով:

Հետեւեալ եռանդամ տողերու օրինակներ չի յիշեր Հ. Գրիմմէ, որք անշուշտ կարելի պիտի համարուին.

$$\begin{array}{l}
 2+4+2, 3+3+4, 3+4+3, \\
 2+4+3, 3+4+2:
 \end{array}$$

Դիտելի է՝ որ մետասանավանկ եռանդամ չափը չկար հին Ասորեաց քով, և վերջէն հնարուած է, որք են $3+4+4$, $4+4+3$, $4+3+4$, չափ մը, որ հին հայկական ոտանաւորի մէջ շատ յաճախ է:

Բաց ի վերոյիշեալ չափերէն՝ կայ նաեւ եռանդամ չափն Յակովբայ Սրճեցւոյ, և կը բաղկանայ երեք քառավանկ անդամներէ, այսինքն՝ $4+4+4$, և որուն իսկապէս հետեւած կը համարիմ մեր նախնիք:

Արդ, ինչպէս կը տեսնեն բանագէտ ընթերցողը, բաց ի վերջին յիշուած չափէն և մետասանավանկ տողէն (որ Ասորւոց մէջ կը պակսի), մնացած բոլոր ասորական եռանդամ չափերն հակառակ են բոլորովին հայկական հիւսկամ դիւցազնական ըսուած չափին անդամներու կազմութեան, թէ՛ շարքով և թէ՛ վանկերու թիւով:

Իսկ իբր քառանդամ տողի կազմութիւն մէջ կը բերէ Հ. Գրիմիէ հետեւեալները.

$$\begin{array}{c|c} 2+2+3+2 & 3+2+2+2 \\ 2+3+2+2 & 2+2+3+3 \\ 3+2+2+3 & 2+2+2+3 \\ 3+3+2+2 & \text{-----} \end{array}$$

Այս տեսակ կազմութեան օրինակներէ դուրս՝ ուրիշ բաղադրութիւն չգտնելով վերոյիշեալ գերմանացւոյն ուսումնասիրութեան մէջ՝ կը համարիմ որ ասոնք միայն գործածական ըլլան. որոնց մէջ դիտելու կէտ է քառավանկ անդամին բացակայութիւնն, մինչդեռ հայերենի մէջ քառանդամ տողին ամենառատ տարրը կը կազմէ քառավանկ անդամն: Թէ՛ վերը գրուածներն և թէ՛ անոնց կարելի համարուած բաղադրութիւններն օտար են բոլորովին հայկական չափէն՝ թէ՛ շարքով և թէ՛ անդամներու վանկերուն թիւով:

Բ

Ինչ է ուրեմն մինչև հիմայ ըրած բաղադրութիւններու հետեւեալն: — Ինձ օրինաւոր կը թուի այս հետեւութիւնս հանել, որ Հայք թէպէտ և իբր գաղափար ընդունած են Ասորիներէն՝ երկանդամ և քառանդամ ոտանաւորի կազմութեան զրութիւնը, բայց ասորական չափերէն զանոնք միայն ընտրած և գործածեք են հայերենի մէջ՝ որ մեր լեզուին կազմութեան և ներդաշնակութեան յարմարաւոր են տեսնել. որպիսիք են.

երկանդամ $3+3$, $3+4$, $4+3$, $4+4$
տողերն, որոնց վրայ աւելցուցեք են իրենք նաեւ $5+5$, որ հայերենի սեփական է, կամ գուցէ եբրայեցիներէն փոխ առնուած, ինչպէս յետոյ դիտել պիտի տանք:

եռանդամ $4+4+4$ (Յակովբայ Սրճեցոյ կոչուած տողը) միայն: Իսկ Հայոց սեփական և Ասորւոց մէջ չգտնուած չափեր են $3+4+4$, $4+4+3$, $4+3+4$

այսպէս դարձեալ $5 + 2 + 5$
և $5 + 5 + 5$, որոց գոյութիւնը
նոյնպէս երբայերեսի մէջ
կը նկատենք:

քառանդամ հայկական չափն՝ իրեն զանազան տեսակ փոփոխութիւններով¹, քաց ի քառանդամ

1. Չափական ոտանաւորի տողն, ըստ վարդապետութեան Հ. Արսենի Բաղրատունայ (Հմտ. թրգմ. Վիրգ. Մշակ. էջ 17-18), ոչ 13 վանկէն նուազ պիտի ունենայ և ոչ ալ 16 վանկէն աւելի. որով կը ձևանան հետեւեալ տասը տեսակ փոփոխութիւնք տողից.

ա... 4—4—4—4	գ... 3—3—4—4
բ... 3—4—4—4	ե... 2—3—4—4
դ... 2—4—4—4	ը... 4—4—4—3
շ... 1—4—4—4	ր... 3—4—4—3
ե... 4—3—4—4	ծ... 2—4—4—3

Միայն այս տասը տեսակ փոփոխութեանց օրինաւոր ըլլալուն պատճառներն ալ կը դնէ, եւայն՝ մնացած փոփոխութեանց աններդաշնակ ըլլալին յիշուածներուն հետ, երկրորդ՝ որ կրնան երկու հաւասար տողերու վերածուիլ, և երրորդ՝ որ 12 երկար վանկից չափէն պակաս կու գան, համարելով որ առ նուազն զէթ մէկ սուղ վանկ գտնուի տողին մէջ, որ (կ'ըսէ) անհնարին է թէ չգտնուի:

Բաղրատունի քերթողահօր հեղինակութիւնը մեծապէս յարգողներէն մէկն եմ նաեւ ես. բայց թէ՛ բուն Նախնեաց գործնական օրէնքն և թէ՛ Բաղրատունայ մէջ բերած պատճառներուն անբաւականութիւնն զիս կը համոզեն՝ որ 12 վանկ ունեցող տող մ'ալ կրնայ խառն գործածուիլ վայելչապէս վերոյիշեալներուն հետ, առանց վախճալու որ աններդաշնակ լուի. քանի որ մեզմէ աւելի փափուկ և դաշնակաւոր ասիանշ ունեցող ընտրելագոյն նախնիք գործածեր են 12 վանկով տողը, որուն մէջ վերջի անդամին հանդիսար կրնայ վանկի մը տեղ

բաժանմունքէ տողին՝ ուրիշ նմանութիւն չունի ասորականին հետ. իսկ երբայեցւոց մէջ կը գտնուին քառավանկ քառանդամ չափին շատ տեսակներ, որ համաձայն են հայերէն ոտանաւորի կազմութեան օրինաց, ինչպէս քիչ վերջը մէջ պիտի բերեմ:

բունի, ինչպէս կ'ընդունի նաեւ Բաղրատունին և գործադրած է իր (Թատերական թարգմանութեանց մէջ) իսկ միայն մէկ պարագայի մէջ երկու հաւասար տողերու վերածուիլը (երբ ըլլայ $4 + 3 + 4 + 3$, որ կը բաժնուի երկու եօթնավանկ հաւասար տողերու), միւս տողերու հետ ունեցած ներդաշնակութիւնը չի կրնար խանդարել. իսկ Բաղրատունայ մէջ բերած երրորդ պատճառը, (որ կայացեալ է երկար և սուղ վանկերու զանազանութեան վրայ), բոլորովին անզօր է, քանի որ Հայոց լեզուի գոյցէ ոչ անցելուն մէջ, և ոչ ալ ներկայ ժամանակս՝ վանկերու այգպիսի յատկութիւն կրցեր են կամ կրնան զգալ — Հեաւաբար ըստ իս՝ համաձայն Նախնեաց կերպարութեան՝ վերոյիշեալներուն կրնան չառնանակութիւն ըլլալ հետեւեալ չափերն ալ.

ժա... 1+4+4+3	ժգ... 3+3+4+3
ժբ... 4+3+4+3	ժդ... 2+3+4+3

որով կ'ունենանք ընդ ամենն 14 տեսակ փոփոխումներ, ուղելով անխախտ պահել միշտ չորրորդ անդամին քառավանկ կազմութիւնը, որուն հակառակը Նախնեաց թով շատ կը գտնուի, ինչպէս նաեւ ուրիշ շատ զարուստ զութիւններ, որոնք հիմայ իրաւամբ գործածութենէ դուրս մնացեր են, իբրեւ աններդաշնակ չափեր:

Իբրեւ օրինակք վերոյիշեալ վերջին չորս չափական տողերու՝ առ այժմ բաւական համարուն հետեւեալները, որ քաղուած են Շարականներէն.

Արդեօք այս ամէն բաղդատութիւններս
չեն առաջնորդեր հաւաստելու, որ Հայք
ոչ թէ միայն Ասորիներէն օգտուեր են
իրենց տաղաչափական արուեստի կազմու-
թեան մէջ, այլ նաև Եբրայեցիներէն: —
Անշուշտ՝ իբր հակառակ այս հետեւու-
թեանս՝ պիտի առարկեն ոչ սակաւ բա-
նագէտք՝ որ դեռ մինչև հիմայ յայտնի չէ
թէ ինչ արուեստով շինուած են եբրայա-

$$1 + 4 + 4 + 3$$

Հուր փայլակնացեալ և ի մարմնի բնակեցաւ.
Ջանք հընչեցին սանդարամետք անդընդոց.
Փառք քեզ, Աստուած, փառաւորեալ յաւիտեան. ևն:

$$4 + 3 + 4 + 3$$

Համբանալով զաչրս մերկարգամք առ քեզ մարդասէր.
Ուրախացիր, սրբբունի, Գարբիկի աւետեօք.
Ըզյարութիւն Բրիտանի ամենեքեան օրհնեսցուք.
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս. տան աւետիս աշխարհի.
Եւ զհողեղէն բնութիւնս ազատեցեր ի մեղաց.
Ի հարաշարժ աղբերէն անհատաճուրդ վրտակ.
Այսօր աղբիւր գիտութեան բրիւեալ ի սուրբ վերնա-
(տունն.)
Առաւօտեան սուրբ կանայքն՝ հանդերձ իւղովք և խըն-
(կովք.)

Եկին ի սուրբ գերեզմանն և ողբալով խընդրէին.
Վասն մերոյ փրկութեան խոնարհեցար ի յերկնից.
Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նրմա.
Այսօր անմեղ սուրբ մանկունքն ի տղայական հասակի.
Մատաղատունի նահատակք ի տղայական երամոց.
Երբորդութեանն սիրող անձինք յաղթող վրկայից. ևն:

$$3 + 3 + 4 + 3$$

Եւ Աշամ վերբստին աստուածակերպ ճոխանայ.

կան բանաստեղծութիւնք, և եղածներն ալ
(սուղ և երկար ձայնաւորներու կանոննե-
րով հիւստեած) աւելի բանասիրաց երեւ-
կայութեան համեմատ չափեր են քան թէ
իսկական և կանոնաւոր ոտանաւորք: Սա-
կայն այս յայտնի է որ այսպէս խորհըր-
դածողք ալ բնաւ չեն մերժեր՝ որ Եբրայե-
ցոց մատենագրութեան մէջ՝ յունական բա-
ռով ստիւքիրուն (ոտանաւոր) անուանուած-
ներն՝ ունին այնպիսի ներդաշնակութիւն
մը՝ որ արձակ գրուածներու մէջ կը պակ-
սի, այնպիսի դասաւորութիւն մը վանկե-
րու և բառերու՝ որ սովորական չեն հե-
տեակ ոճոյ գրութեան: — Բայց ինչ բանէ
յառաջ եկած և ինչ է արդեօք ոտանա-
ւորն, եթէ ոչ կանոնաւորեալ ներդաշնա-

Բերելով մեզ պըտուղ գերանելին Հոփսիմէ.
Կուտութեամբ ընդ մահու պատերազմեալք յաղթեցին.
Ձի ուրախ լինիլք անմահական բաժակուն.
Միարան քաջացան, առհասարակ ցընծացին.
Յընծութեամբ տօնեսցուք ըզլիշատակըս նոցունց.
Եւ կանայք վեհազինք գերազանցեալ յաղթեցին.
Արեւելք գերարփին և օթարան լուսածին.
Բանին Հօր մարմնարան և առաջատ ընակութեան. ևն:

$$2 + 3 + 4 + 3$$

Դարձեալ վերբստին արարչագործ գօրութիւն.
Տեսեալ ըզլոյս մեծ հայրապետին Գրիգորի.
Պատմէր ցընծութեամբ հաւատացեալ արքային.
Եկայք շինեսցուք սուրբ ըզխորանն լուսոյ.
Սոքս են քարինք սուրբք՝ հիմնացեալք ի յերկրի. ևն:

կութիւն մը բառերու և վանկերու և տառերու. և եթէ հնոց կանոնները դեռ բոլորովին ձեւակերպեալ չէին, և զարտուղութիւնը կամ ազատութիւնը ընդարձակագոյն ասպարէզ ունէին, միթէ կարելի է այդկից հետեցընել թէ ուրեմն ոտանաւոր չունէին, այլ միայն արձակ գրութիւն:

Հուրերտ Գրիմմէ ընդարձակ կը խօսի¹ Երբայեցոց ոտանաւորի կազմութեան արուեստին վրայօք, և շատ ու շատ օրինակներ Ս. Գրքէն քաղելով մէջ կը բերէ՝ ըսածներն հաւաստելու համար: — Օրինակ բերածներուն մէջ կը գտնենք հայկական չափերուն համաձայն միայն հետեւեալները.

Երկանդամք

3 + 3, 3 + 4, 4 + 3, 4 + 4, 5 + 5. (հայկականին նման երբայականն ալ ունի նաև միանդամ հնգավանկ տողը):

Յոսանդամք

3 + 3 + 3, 3 + 4 + 4,
4 + 4 + 3, 4 + 4 + 4,
5 + 5 + 5, 5 + 2 + 5:

1. Hubert Grimme, Abriss der biblisch-hebraischen Metrik. — (Zeitschrift der deut. Morgenl. Gesellschaft, Leipzig, 1896, 529-534, 683-712).

3 + 3 + 3 + 3, 3 + 3 + 4 + 4,
4 + 3 + 4 + 4, 3 + 4 + 4 + 4,
3 + 3 + 4 + 3, 4 + 4 + 4 + 4,
4 + 4 + 4 + 3, 4 + 3 + 4 + 3:

Այս և ասոնց մերձաւորագոյն չափերով գրուած են երբայերենի մէջ Մարգարէութիւնը, Օրհնութիւնը և Սաղմոսը. և գրեթէ կրնամ ըսել որ այս չափերով թարգմանուած են նաեւ հայերենի մէջ վերոյիշեալ գրքերը և մանաւանդ Սաղմոսաբանն:

Հայկական և ասորական տաղաչափութեան արուեստին մէջ մեծ զանազանութիւն մ'ալ կը կազմէ, ըսի, անդամներու իրարմէ թաժնուելու կերպը: — Նախ դիտելու ենք՝ որ ասորերենի մէջ, ինչպէս կ'ըսէ Ռ. Դիւվալ, նախադար (proclitique) և վերջադար (enclitique) միավանկ մասնիկներն, որոնք գլխաւոր բառին հետ սերտ կապուած են, չեն կրնար նոյն բառին անդամէն զատուիլ և ուրիշ անդամի մէջ մտնել. երեւոյթ մը՝ որուն բոլորովին հակապատկերը կը ներկայացընէ հայերէն ոտանաւորի կազմութիւնն, որ կը պահանջէ յաջորդ անդամին անցընել բառերու որ,

խն, ինչ՝ վերայար մասնիկներն, ինչպէս նաև դերանուններն և ոչ սակաւ նախայար մակըայներ ու հոլովառու միավանկ բառեր, որոց օրինակ բերելն՝ այստեղ աւելորդ երկարաբանութիւն կը համարիմ, և համոզուելու համար բաւական է հին և նոր ընտիր հեղինակներէ հայկական չափերով յօրինուած որ և իցէ ոտանաւոր գրուած մը աչքի առջև ունենալ:

Անդամներու իրարմէ բաժնուելու կերպը՝ երկրորդ տարբերութիւն մ'ալ կը կրէ երկու լեզուաց ոտանաւորին մէջ հետեւեալ տեսակէտով: Ասորական ոտանաւորի մէջ իւրաքանչիւր անգամ պիտի պարունակէ մէկ և կամ աւելի տմբողջական բառեր միայն, այսինքն՝ բառի մը մէկ կտորը չի կրնար նախընթաց անգամին մասն կազմել և միւս կտորը յաջորդին մէջ անցնիլ, վասն զի ամէն մէկ անգամի վերջը պիտի յաջորդէ ձայնի րեքն հանգիստ մը: Արդ, թէպէտ և հայկական ոտանաւորն ալ ամբողջական բառեր պարունակող անդամներով կը յօրինուի¹, բայց յաճախ կը հանդիպի (նախընթաց՝ բաղաձայնով սկսած

1. Համեմատէ նախընթացաբար յիշուած (էջ 52, ծանօթ. 1) նաեւ այս կանոնիս զարտուղութիւնն, որ այստեղ հանելիք հետեւեալիս աւելի հաստատութիւն կուտայ:

վանկի) որ երբ ամբողջական բառն ըն վերջացած վանկով աւարտի՝ ամբողջական բառին մեծ կէսը կը մնայ նախընթաց անգամին մէջ և վերջին վանկը մըն կամ ըն կամ սըն, և այլն, կ'անցնի մասն կազմելու յաջորդ անգամին. զոր օրինակ.

Ի պատկեր / աստուածութեա / նըդ. քոյ ստեղծեր / մարդ
ի հողոյ.

Ի միւսանգամ / քո զալըստեա / նըն յորժամ դաս / դաս
տէկ դերկիր.

Ժողովեալ / Հըրէի / ցըն կըշոհցին / արծաթ բազում, ևն:

Այս տեսակ տողերու մէջ բնական ընթացումը կը պահանջէ՝ որ առանց ձայնի խնկարտ տարո՝ ըս, ըդ, ըն, ըր, ըրդ, և այլն, վանկերէն առաջ զարնուի շեշտը նշանակիչ բաժանման անգամին: Արդ, այս կերպ շեշտով և առանց հանգրստի բաժանումը՝ բոլորովին հակառակ է ասորական ոտանաւորի կազմութեան, որ ինչպէս տեսանք՝ ըստ Հ. Գրիմմէի, իւրաքանչիւր անգամէ վերջը ձայնի գէթ թեթև հանգիստ մը կը պահանջէ: Ուստի կրնամ ես ալ համաձայն բոլորովին Բազրատունի Քերթոզհօր՝ ըսել. « Մեր ոտանաւորն ոչ է լոկ անդամատութեամբ առ հանգիստ տալոյ ի վերջս անդամոցն և այնպէս զչափան յօրինելոյ, այլ մանաւանդ շեշտիւ՝ որպէս գիտալացւոցն և

զանգղիացւոց: Եւ քանզի առ մեզ սովորաբար ի վերջս բառից կայ շեշտն, անդ հատանի և անդամն... Իսկ ուր ուրեք և ի մէջ բառից կամ ի սկիզբն գտանիցի շեշտն՝ անդանօր հատանի անդամն » . (Բագր. Քերկ. գաղղ. էջ 561). զոր օրինակ.

Ես այս / պէս հաւանիմ / աստուածութեան / հակառակին.
Յետ այ / սորիկ եղեալ / ջրասոյգ ի վայր / կործանէին.
Զոր յայ / նրմ գէշերի / բիւրս բերոց / սատակէին.
Ո՞ր / պէս սիրելի / են յարկք .քո, Տէր / զօրութեանց.
և այլն:

Հայերէն լեզուի մէջ շարք մը բառերու կան՝ զոր օրինակ, ո՛յիւն (մակբայ), ա՛յսւ պէս, ա՛յնչափ, ո՛րքան, վասն ա՛յստրիկ, ա՛յսմիկ, ահա՛առիկ, յա՛յնժամ, և այլն, որ յարաշեշտք և նախադարձեշտք են, և ըստ այնմ ալ երկու մասանց կը բաժնուին հատածով ոտանաւորի մէջ, ինչպէս վերը դրուած օրինակներուն մէջ կը տեսնուի, շեշտ ունեցող վանկը վերջին վանկ մնալով նախընթաց անդամին, իսկ շեշտին յաջորդող վանկերը կ'անցնին յաջորդ անդամին մասն կազմելու: — Զուր է առարկել թէ վերոյիշեալ բառերն և իրենց նմանները ապացոյց չեն կազմեր հայերենի մէջ հատածով շինուած ոտանաւորի գոյութեան, որովհետեւ կամ բարդ և կամ ածանցեալ

բառեր են: — Այդպիսի առարկութիւնն ոյժ չունի՝ քանի որ կը զարտուղին ուրիշ բազմաթիւ բարդ և ածանցեալ բառերու շեշտելու օրէնքէն. զոր օրինակ, բարդ և ածանցեալ են նաև հետեւեալներն, բայց չեն շեշտուիր աստուածատեաց, բագնձուդորմ, ծնէլայիկ, սկըզբնական, հիշանդագին, օրէնտաւոյց, և այլն, և այլն:

Բայց հայերենի առողանութեան կանոններով՝ ոտանաւորի մէջ իսկապէս հատած կամ շեշտաւոր անդամատութիւն կազմողն է իրարու ըով շարուած բառից այն սերտ կապակցութիւնը, որ չի ներեր երկու անդամներու բաժանման կէտին մէջ ձայնի հանգիստ տալ, այլ առանց ընդհատման՝ կը պահանջէ շեշտել անդամատող վանկին վրայ և անցնիլ յաջորդ անդամին, իբր թէ այն երկու սերտ կապակցեալ բառերը՝ մի միակ բառ մ'ըլլային՝ իրենց շեշտ ունենալով բառին մարմնոյն մէջը և ոչ թէ վերջը: Ահա այս կերպ անդամատուած տողը բնաւ չի տարբերի ներդաշնակութեամբ իտալական կամ սպանիական հատածաւոր տողէն. վասն զի ինչպէս վերջիններուն մէջ չէ կարելի առանց շեշտելու, այլ ձայնի հանգիստ տալով՝ այս կերպ արտասանել, օրինակ իմն, հետեւեալ տողերը՝ լեզուին առողանութեան հակառակ.

Canto l'armi pieto - se e'l Capitano
 Che'l gran sepol - cro liberò - di Cristo:
 Molto egli oprò col sen - no e con la mano,
 Molto soffrì - nel glorìo - so acquisto:

այսպէս նաև չէ կարելի, առանց ուղիղ
 արտասանութեան դէմ գործելու, հայերենի
 մէջ առանց շեշտի՝ այլ ձայնի հսկողութեամբ տա-
 լով՝ կարգաւ հետեւեալ տողերը.

Եւ մընասցես - տէր, յոքնարուն - ամբ, յաթո - սրդ
 սրբութեան.

Այլ ոչ - զբտեալ՝ հընդիւ - չափ ի նոսա - մաղթականին.
 Աստ չէ - պարտ - քեզ ասկ - ոհով՝ զեղեալ - ըսքանչելին.
 Անդ կարմիր - ծովըն հերձեալ - լինէր, դիզան - ջուրքըն
 կային, են:

Այս տեսակ հանգիստով ընթերցումն
 արդէն իսկ խանգարումն է բոլորովին թէ՛
 ներդաշնակութեան և թէ՛ առողջանութեան
 և թէ՛ իմաստից. վասն զի այդ պայման-
 ները կը պահուին վերոյիշեալ տողերու
 հետեւեալ ընթերցման մէջ միայն: — Ա-
 ռողանութեան կերպը բացատրելու համար՝
 կը գործածենք վերոյիշեալ և յաջորդ տո-
 ղերու մէջ շեշտաշանն (') իբրև զարկուած
 ձայնի՝ առանց հանգիստ տալու ընթերց-
 ման, իսկ զծիկն (—) իբրև նշան հանգիստ
 կամ դադար տալու ձայնին, ինչպէս բութն
 (') ալ՝ թեթև հանգիստ ցուցնելու հա-
 մար:

Եւ մընասցես, Տէր, - յոքնարուն ամբ - յաթոսրդ սըր-
 թեան.

Այլ ոչ զբտեալ՝ հընդիւ չափ՝ ի նոսա մաղթականին.
 Աստ չէ պարտ - քեզ ասկ ոհով՝ - զեղեալ ըսքանչելին.
 Անդ՝ կարմիր ծովըն՝ հերձեալ լինէր, - դիզան ջուրքըն
 կային, են:

Այսչափ ուրեմն խօսք և օրինակք բա-
 ւական կը համարիմ մինչև հիմայ ապա-
 ցուցած ըլլալու որ հայկական ոտանաւորի
 կազմութիւնը կը տարբերի ասորականէն
 թէ՛ անդամներու շարաւարտով, թէ՛ անոնց
 պարտնակած վանկերու քառով և թէ՛ ան-
 ջամներու իրարմէ բաժնուերու կանոնով. ի
 հարկէ առանց ժըխտելու որ տեղ տեղ (ուր
 որ իմաստն և ուղիղ արտասանութիւնը կը
 պահանջեն) անդամներու բաժանմունքը կը
 կատարուի նաև հսկաստեամբ ձայնի. որով
 մեր ոտանաւորի արուեստին կազմութիւնը
 կրնայ նոյն համարուիլ գերմանականին
 հետ, որ անդամներու բաժանման համար
 մերթ շեշտ կամ հատած կը գործածէ և
 մերթ ալ հանգիստ:

Մինչև հիմայ ըսածներէս հետեւանք
 կ'ելլէ ուրեմն, որ թէպէտ և մեր Նախ-
 նիք հետեւեր են ասորական ոտանաւորի
 արուեստին, բայց մի և նոյն ժամանակ
 գիտցեր են, Պրոֆ. Տեղալի ըսածին պէս
 « իրենց օգտաւէտ և պատուարեր կերպով
 հետեւիլ, և կէս ի կէս ծառայականութեան

մէջ՝ պահպանել այն կէս ի կէս ազատութիւնը, որ ծնունդ կու տայ մտաւորական եռանդուն երկանց»։ Կամ թէ ուրիշ բառերով ըսեմ՝ տաղաչափութեան արուեստին գաղափարն և գլխաւոր կանոնները (տողերու, անդամներու, վանկերու բաժանումն) և ինչ որ ընտիրն է՝ Ասորիներէն առնելով, զգուշացեր են Նախնիք հայերենի վերածելու ինչ որ մեր լեզուին ներդաշնակութեան համաձայն չէ, և ինչ որ արարական կամ թուաւոր ոտանաւորին մէջ տաղտկալի միակերպութիւն կը պատճառէ։

Գ

Ասորւոց նման նաև Հայք քառանգամ չափի բաժանման մէջ, ըսինք, հնգավանկ կամ աւելի վանկերէ կազմուած բառեր չեն ընդունիր, և թէ՛ մինչդեռ ասորական ոտանաւորի մէջ ամենեւին հնգավանկ անգամ կամ չափ չի գտնուիր, բայց հայկականին մէջ ստէպ ստէպ թէ՛ միանգամ, թէ՛ երկանգամ և երբեմն նաև եռանգամ տողեր իսկ կը գործածուին՝ հնգավանկ անդամներէ բաղկացեալ։ Զոր օրինակ.

Միանգամ հնգավանկ.

Առաւօտ լուսոյ,	Աւիսարճ ամենայն,
Արեգակն արդար,	Առ իս նայեցեալ,
Առ իս լոյս ծագեալ, և այլն,	Ախտակից լերուք, և այլն:

Երկանգամ հնգավանկ.

Որ յահագակերպ / ամբողջ նըստիս.
 Որ յանմարմնական / զօրացըդ գովիս.
 Դատակցեալք ընդ զօր / անմարմնականաց.
 Անձինք նըւիրեալք / սիրոյն փրիստոսի.
 Ի պարծանք ձեր / բարձրացեալ տօնէ.
 Յիս մարդասիրեա / բազմադուլթ փրկիչ,
 Եւ փարատեցո՞ / զցաւս անձին իմոյ, և այլն:

Եռանգամ հնգավանկ.

Ասաց անըզգամն / ի սրբաի իւրում / թէ ոչ գոյ Աստուած.
 Յիշեա, Տէր՝ զորդիսն / Եդովմայ յաւուրսն / Երուսաղէմի.
 Վասն թընամեաց / իմոց մի՛ մատներ / զիս ի ձեռս նեղաց.
 Եւ ի մէջ ուռեաց / նոցա կախեցաք / զկտակարանքս մեր, ևն:

Այս հնգավանկ անդամներն ու տողերն Նախնիք խառն կը գործածեն ուրիշ չափով տողերու հետ թէ՛ շարականաց և թէ՛ մեղեդեաց ու տաղից մէջ, ինչպէս և Սուրբ Գրոց երգերու կամ օրհնութեանց ու Սաղմոսաց մէջ։ Եթէ հայկական յատուկ չափ մը չհամարինք զայն, անշուշտ պէտք ենք զուրցել որ փոխառութիւն մ'է եբրայական տաղաչափութենէն, յորում շատ ստէպ

կը գործածուին հնգավանկ անդամները, ըստ Պր. Հուրերտ Գրիմմէի ուսումնասիրութեան: Բաղդատելով քանի մը Սաղմոսներ և Օրհնութիւններ Աստուածաշնչի հայկական թարգմանութեան՝ երրայական բընագրին չափերուն հետ (ըստ վերոյիշեալ գերմանացի գիտնականին ըրած անդամատութեան), տեսայ որ այն տեղերը՝ ուր երրայեցւոյն մէջ աւելի առատութեամբ գործածուած են եռավանկ կամ քառավանկ անդամներով չափեր, նոյնները ջանացուած է ըստ կարելւոյն ստէպ գործածել նաև հայկականին մէջ. իսկ ուր երրայեքներ մէջ հանգավանկ անդամներով յօրինուած են՝ հայերէն թարգմանութեան մէջ ընդհանրապէս եռավանկ ու հնգավանկ և կամ քառավանկ և երկավանկ ու հնգավանկ խառն անդամներով են կազմուած: Էւ որովհետև Սաղմոսաց թարգմանութիւնն հնագոյն կը համարուի Ս. Գրոց միւս մասերու թարգմանութենէն՝ և մեր Նախնեաց շարականներէն, ուստի կը հետեցնեմ որ հնգավանկ չափն երրայականին հետեւութեամբ մուտք գտեր է առաջին անգամ Սաղմոսաց մէջ:

1. Հ. Գար. Զարբ. Մատենադարան հայկ. թարգմ. Նախնեաց, էջ 215-220.

Բայց անշուշտ շատերը պիտի զարմանան և առարկեն թէ Սաղմոսներն հայերէն արձակ գրուիւնք են և ոչ թէ ոտանաւոր: — Իսկ ես ընդհակառակն կը կրկնեմ՝ որ զրեթէ ծայրէ ծայր Սաղմոսներն խառն արձակ տողերով յօրինուած ոտանաւոր կամ չափական թարգմանութիւնք են. և համոզելու համար բաւական կը համարիմ քաղել զանազան Սաղմոսներէ հետեւալ չափերը.

$$4 + 3, \quad 4 + 4, \quad 3 + 4, \quad 3 + 3$$

- Էս առ Աստուած կարգացի,
Էւ Տէր լրաւ ինձ յերկրոյս (ԾԳ. 17):
Պատրաստ է սիրտ իմ, Աստուած,
Պատրաստ է սիրտ իմ օրհնել. (ԾԶ. 8):
Կամ իսպառ արգելցէ
Զողորմութիւն իւր յինէն. (ՀԶ. 9):
Աջ Տեառն արար զօրութիւն,
Աջ Տեառն բարձր արար զիս. (ՃԺԷ. 16):
Յոյս իմ ի ստեանց մօր խոյ.
Ի քեզ անկայ ես յարգանդէ. (ԻԱ. 10, 11):
Բոլորց զընծութիւն ըզկեցին,
Էւ ըզկեցին խոյք մաքեաց. (ԿԳ. 14):
Միթէ ի գո՛ր ինչ բտեղծեր
Զամենայն որդիս մարդկան. (ԶԲ. 48):
Ոչ թաքեաւ ոսկր իմ ի քէն
Զոր արարեր ի ծածուկ. (ԺԼԸ. 15):

$$3 + 3 + 3$$

- Ոչ նրառայց ես յաթուրս նանրաց. (ԻԵ. 4):
Լըւացայց սըբբութեամբ ըզձեռս իմ. (ԽԵ. 6):
Ո արար ըզհրէշտակս իւր հոգիս,

Զպաշտօնեայ իւր ի հոր կիզելոյ. (ՃԳ. 4),
 Անդ թրուռնք երկնից բոյնս զիցեն. (ՃԳ. 12),
 Եղէ ևս որպէս տիկ ի պարզի. (ՃԺԸ. 83),
 Երթալով երթալին և լային
 Այբ բարձեալ տանէին զսերմանիս. (ՃԻԵ. 6)

$$\begin{array}{cc} 3+4+3, & 3+4+4 \\ 4+4+3, & 3+3+4 \end{array}$$

Եղիցին նոքա որպէս խոտ տանեաց,
 Որ մինչև և ի բունն եկեալ՝ չորացաւ.
 Աստի ոչ էլից ըզբունն իւր հընձողն,
 Ոչ ըզգիբիս իւր՝ որ զորպն ժողովէր. (ՃԻԸ. 6, 7),
 Ի կարգալ իմում լրար ինձ, Աստուած. (Գ. 2),
 Եւ ընձամուռն զէն պալատեաց մինչ իսպառ. (Թ. 7),
 Մինչև յեբբ, Տէր, մոռնաւս զիս իսպառ. (ԺԲ. 1),
 Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ոչ էլցէ երկիւղ. (ԺԳ. 5,
 ԾԲ. 6),

Որ զընայ ամբիժ՝ զործէ զարդարութիւն (ԺԳ. 2),
 Յերեսաց քոց իրաւունք ինձ էլցեն (ԺԶ. 2),
 Մինչև ի ծագս աշխարհի ևս խօսք նոցա (ԺԸ. 5),
 Այլ ի կարգալ իմում առ նա՝ լրաւ ինձ. (ԻԱ. 25),
 Մէ համարիբ ընդ ամբարիշտոս զանձն իմ (ԻԷ. 3),
 Մէ լինիք որպէս ըզձիս և ըզճորիս,
 Զի ոչ զոյ ի նոսա իմաստութիւն (ԼԱ. 9),
 Խորհուրդ սրբախ նորա յաղգէ մինչև յաղգ (ԼԲ. 11),
 Ողորմութեամբ Տեառն լի է կղև երկիր,
 Եւ բանիս նորա երկիրք հաստատեցան (ԼԲ. 6),
 Եւ հեծութիւն իմ ի բէն ոչ ծածկեցաւ (ԼԷ. 10),
 Եղէն ինձ արտասուք իմ կերակուր (ԽԱ. 4),
 Սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ (ԿԳ. 6),
 Եւ սուրբ արար ըզյաճիս իւր Բարձրեան (ԽԵ. 5),
 Ընդունելի է մեր Աստուած Յակովբայ (ԽԵ. 8),
 Մինչև յեբբ, Տէր, բարկանաս զու ի սպառ (ՀԸ. 5),
 Իսկ արդ յիշեա և տես թէ ով է իմ հանգիստ (ԶԸ. 48),
 Ի բուսանել մեղաւորաց որպէս խոտ. (ՂԱ. 8),
 Ոչ երկիցես զու յերկիւղէ զիշերի (Ղ. 6),
 Ոչ մերձեցաւ առ իս՝ որ թիւրն էր սրբախ (Ճ. 3),
 Եւ զըմպելին իմ արտասուք խոնկեցի (ՃԱ. 10),
 Նորոգեցի որպէս արծուոյ մանկութիւն քո (ՃԲ. 5),
 Սահման եղեր, և ոչ անցանն (ՃԳ. 9),

Եւ խոնարհ եղէ, և Տէր կեցոյց զիս (ՃԺԳ. 6),
 Այս զուրն Տեառն է, և արդարք մըտանեն (ՃԺԻ. 20),
 Այնպէս ևս աչք մեր առ քեզ, Տէր, Աստուած մեր
 (ՃԻԲ. 2),
 Այս լրաբ ըզբմանէ յեփրաթա,
 Եւ զըտաք ըզնա ի զաշարս մայրեաց (ՃԼԱ. 6),
 Երեցունք քո զկեցցին զարդարութիւն,
 Եւ սուրբք քո ցընծալով ցընծասցեն (ՃԼԱ. 9),
 Լուր, Տէր, ձայնի իմում, առ քեզ կարգացի (ԻԶ. 7),
 Օգտեցաւ և զուարճացաւ մարմին իմ (ԻԷ. 7),

$$\bar{5} + \bar{5} + \bar{5}, \quad \bar{5} + \bar{5}$$

Ասաց անբղգամն ի սրբախ իւրում՝ թէ ոչ զոյ Աստուած
 (ԺԳ. ԾԲ. 1),
 Օրհնեալ տէր Աստուած, որ ուսոյց ըզձեռս իմ ի պա-
 տերազմ (ՃԽԳ. 1),
 Կարգացի առ քեզ բոլորով սրբախ իմով, լուր ինձ,
 Տէր (ՃԺԸ. 145),
 Սերկեցի ըզքեզ, Տէր, զօրութիւն իմ, Տէր հաստատիչ
 իմ (ԺԷ. 2),
 Ի կարգալ իմում լրար ինձ, Աստուած, ըստ արգա-
 րութեան (Գ. 2),
 Բազումք ասէին թէ ոչ ցուցցէ մեզ ըզբարութիւն Տեառն
 (Գ. 6),
 Զայր արինանհեղ և ըզննգաւոր պիղծ առնես զու, Տէր.
 Այլ ևս ըստ բազում ողորմութեան քում մտախ ի տուն
 քո (Ե. 7),
 Զարթիւր տէր Աստուած իմ ի հրամանս քո, զոր պա-
 տուրեցեք (Ե. 7),
 Դու, Տէր, պահեցիք զիս, ասրկեցուցիք յաղգէ յայս-
 ման (ԺԱ. 8),
 Եւ ըստ բարձրութեան քում՝ մեծ արասցես զու զոր-
 դիս մարդկան (ԺԱ. 9)

Զի զի զարդարութիւնք քո խնդրեցի (ՃԺԸ. 145),
 Ըզմեղս ասեցի և անարկեցի (ՃԺԸ. 163),
 Զի զօրէնքս քո ևս ոչ մոռացայ (ՃԺԸ. 153),
 Բըզկեցան շրթմունք իմ զօրհմութիւնս քո (ՃԺԸ. 171),
 Կարգային առ Տէր, և նա լսէր նոցա,
 Եւ ի սին ամպոյ՝ խօսէր ընդ նոսա (ՂԸ. 7),

Տէր թագաւորեաց, ցընծասցէ երկիր (ՂԶ. 1):
 Զխորհուրդ աղքատի յամօթ արարին (ժԳ. 6):
 Հալածեսց'ապա թընծամին զանձն իմ,
 Հասցէ կոխեացէ յերկիր ըզկեանս իմ,
 Եւ զփառս իմ ի հոգ ընծակեցուցէ (Է. 6):
 Ժամանեցին ինձ որովայնք մահու,
 Եւ վիշտք զբոխսոց պաշարեցին զիս (ժԷ. 6):

3 + 3 + 3 + 3

Իսկ ընդէն բարկացոյց մեղաւորն զԱստուած (Թ. 4):
 Զի ահա մեղաւորք լարեցին զաղեղունս (ժ. 3):
 Որպէս կաւ զրոհնաց կոխեցիք ըզնոսս (ժԷ. 43):
 Որ աւուր բըզխէ զբան,
 Եւ գիշեր գիշերի ցուցանէ զգիտութիւն (ժԸ. 4):
 Ոչ երկեայց ի չարէ, զի դու, Տէր, ընդ իս ես (ԻԲ. 4):
 Պատրաստ արարեր առաջի իմ սեղան,
 Բաժակ քո որպէս անապակ արբեցոյց (ԻԲ. 5)
 Վաստակեալ յախտեանս և կեցցես մինչ խաղառ (ԽԸ):
 Բայց միայն Աստուծոյ հրնազանդ լիւր, անձն իմ (ԿԱ):
 Մէ' ես եղիցին քեզ աստուածք ատժամայնք (Զ. 10):
 Եւ բոյն արագլի ապաւէն է նոցա (ՃԳ. 17):
 Որպէս զի քաղցր են ի քիմս իմ բանք քո (ՃԺԸ):
 Եւ խորք խոտիկցան ի ձայնէ ջութից բազմաց (ՀԶ. 18):

4 + 4 + 4 + 4

(Եւ բազմազգի փոփոխութիւնք վանկերու՝
 այս դիշտագնակն չափիս անդամներուն)

Երանեալ է այր՝ որ ոչ զնաց ի խորհուրդս ամբարըշ-
 տաց (Ա. 1):
 Երանի՛ ամենեցուն՝ որք յուսացեալ են ի Տէր (Ա. 13):
 Զովոճեսցես ըզնոսս զաւազանաւ երկաթեալ (Բ. 9):
 Ամաչեացեն և խոտիկացին յոյժ ամենայն թընծամիք իմ
 (Զ. 11):
 Ըզսո՛ր իւր սըրեալ է և զաղեղն իւր լարեալ (Է. 13):
 Ըզլուսին և զաստեղըս՝ զորքս զու հաստատեցիք (Ը. 4):
 Ի խընդրել զարինս նոցա՝ յիշեաց և ոչ մոռացաւ Տէր
 (Թ. 13):

Զի զովի մեղաւոր ի ցանկութիւն անձին իւրոյ (Թ.
 կրկ. 3):
 Վարանի ի զաղանիս՝ որպէս զառիւծ ի մարտի (Թ.
 կրկ. 9):
 Ի քեզ թողեալ է աղքատն, և որբոյն զո՛ւ ես օգնա-
 կան (Թ. կրկ. 14):
 Շըրթամբք նենգաւորքք սըրտէ ի սիրտ խօսեցաւ (ժԱ):
 Պահեա՛ դիս, Աստուած, զի ես ի քեզ յուսացայ (ժԷ):
 Ըջանչելի արարեր զամենայն կամս ի նոսս (ժԵ. 3)
 Ոչ մողովեցայց ի մողովս նոցա (ժԷ. 4):
 Զի է՛ ընդ աջմէ՛ իմմէ՛ զի մի՛ սասանեցայց (ժԷ. 8):
 Ո Վերկես զայնոսիկ՝ ոչք յուսացեալ են ի քեզ (ժԶ):
 Խոնարհեցոյց զերկինս և Էջ՝ մեզ ի ներքոյ ոտից նորա,
 Եւ ի քրովէս և թընծաւ, սըլացաւ նա ի թեմս հոգմոց
 (ժԷ. 10):
 Երկինք պատմեն զփառս Աստուծոյ,
 Եւ զարարածքս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն
 (ժԸ. 2):
 Եւ ինքն որպէս փեսայ՝ զի երանէ յառազատեւ (ժԸ. 6):
 Աստուած, Աստուած իմ, նայեաց առ իս, ընդէն թո-
 զիւր զիս (ԻԱ. 2):
 Գու ի սո՛ւրբոս ընծակեալ ես, և զովեալ յիսրայելի
 (ԻԱ. 4):
 Մի՛ ի բացեալ առնիք յինէն, զի նեղութիւնք մերձեալ
 են (ԻԱ. 12):
 Եւ եղև սիրտ իմ որպէս մոմ հալեալ ի մէջ որովայնի
 (ԻԱ. 15):
 Եւ ի վերայ պատմաւանի խմոյ վիճակս արկանէին
 (ԻԱ. 19):
 Աստուած իմ, ի քեզ յուսացայ մի՛ ամաչեցից (ԻԳ. 3):
 Տէր ի կամոս քո ետուր զեղոյ խմոյ զօրութիւն (ԻԹ):
 Յերկինից նայեցաւ Տէր յամենայն որդիս մարդկան
 (ԼԲ. 13):
 Յամենայն նեղութեանէ նոցա փըրկեաց ըզնոսս (ԼԳ. 18):
 Ա՛ս ըզդէն և զասպար քո, և արի՛ յօգնել ինձ (ԼԴ. 2):
 Որպէս զեղալոր և զընկեր՝ այնպէս հաճոյ լինէի.
 Որպէս սգաւոր և տըրտում՝ այնպէս խոնարհ առնէի
 (ԼԴ. 14):
 Արգ ընդէն տըրտում ես, անձն իմ, կամ ընդէն խոռ-
 վես զիս (ԽԱ. 6, 12. ԽԲ. 5):
 Խորք ի խորոց կարգացին առ քեզ՝ ի ձայն սահանայ
 (ԽԱ. 8):

ի մարդոյ մեղաւորէ նենդաւորէ փրկեալ զիս (ԽԲ. 1): Ահանջօք մերովք լուաք, զոր հարքն մեր պատմեցին մեզ (ԽԳ. 2):

Կոչեաց զերկիր յարեւելից մինչև ի մուսս արեւու (ԽԺ. 2):

Այս այր է՝ որ ոչ արար զԱստուած իւր օգնական (ԾԱ. 9):

Պանդոխտք եղեցին և թաքթաքունք շրջեցին (ԾԵ. 7): Այն և զողումն եկն ի վերայ իմ, և ծածկեաց զիս խաւար (ԾԳ. 6):

Ձի մի՛ լռեցէ՛ նա զձայն թովի՛ ճարտարի,
Էւ մի՛ առցէ՛ դեղ ի գեղատուէ իմաստնոյ (ԾԼ. 6):
Յայնցանէ՛ որ յարուցեալ են ի վերայ իմ՝ ազրեցո՛ (ԾԸ. 2):

Սովեցին որպէս շունք և շրջեցին դադաքաւ (ԾՐ. 1): Բւուրք ցնծութիւն ըզկեցցին, և ըզկեցցին խոյք մաքեաց (ԿԴ. 14):

Ձողակէզս ուղղալեցս մատուցից քեզ խոյովք (ԿԵ. 1): Էւ ըզձեւս նորա՝ յորթ և ի թի ծառայելոյ (Ձ. 7): Էւ մի՛ երկիր պազանիցս զու աստուծոյ օտարի (Ձ. 10): Աստուած, ո՞ քեզ նմանիցէ. մի՛ լսէր և մի՛ դադարէր (ՁԲ. 2):

Որպէս սիրելի՛ են յարկք քո, Տէր զօրութեանց (ՁԳ. 2): Տէր Աստուած փրկութեամբ իմոյ, ի սուսէ կարգացի (ՁԴ. 2):

Ասացեր՝ թէ աշխարհս ողորմութեամբ շինեցի (ՁԵ. 1): Մինչև ի թրինք հաստատեալ էին, մինչև ստեղծեալ զերկիր (ՁԺ. 2):

Հուր առաջի նորա ցնացէ, այրեցէ շուրջ լրվընա միս (ՂԶ. 3):

Դատի զաշխարհս արդարութեամբ և զժողովուրդս իւր ուղղութեամբ (ՂԷ. 9):

Խոստովան եղերուք Տեառն և օրհնեցէք զանուն նորա (ՂԺ. 4):

Մոտացայ ուռել ըզհայ իմ ի ձայնէ հեծութեան (ՃԱ. 1): Ելանին լեռնանան և իջանին դաշտանան (ՃԳ. 8):

Էւ ի վաստակս ձեռաց իւրոց՝ մինչև յերեկոյ (ՃԳ. 1): Այս զործ է աշնոցիկ՝ որ չարախօս կային զինէն (ՃԸ. 1): Ծով ետես և փախեալ, և Յորգանան անդրէն դարձաւ (ՃԺԳ. 3):

Դարձ, անձն իմ, ի հանդիսս քո, զի Տէր օգնեաց քեզ (ՃԺԳ. 7):

Ի մերթէլն զրրգուեցայ, և եղէ մերձ ի զլորել (ՃԺԷ. 1): Երկուդածք քո տեսցեն զիս և ուրախ եղեցին (ՃԺԸ. 1): Որպէս նետք հրգօրի՝ զի մըխեալ են կայծակամբք (ՃԺԹ. 4):

Անձի՛նք մեր ասրեցան որպէս ճընճողով յորդայթէ (ՃԻԳ. 7):

Վասն անուան քո՝ համբերի, Տէր, համբեր անձն իմ բանի քում (ՃԻԹ. 4):

Որպէս երգուաւ Տեառն, և ուխտս եդ Աստուծոյ Յալովբայ (ՃԼԱ. 2):

Թէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտեանաց (ՃԼԱ. 4):

Աւ. այս է հանդիսս իմ յաւիտեանս յաւիտենից (ՃԼԱ. 14):

Ըղլուսին և դատեղս՝ իշխանական զիշերոյ (ՃԼԵ. 9): Որ աստեաց ըզհեշտակ իւր և ամբարձ զիս ի հօտէ (Վերլիմ):

Այսքան բազմաթիւ օրինակներ յաճախելս այն պատճառաւ է՝ որպէս զի չկարծէ մէկը որ ձրի խօսք մ՝ ըսած եմ՝ գրեթէ ամբողջ Սաղմոսարանը ոտանաւոր գրուած հռչակելով, և կամ չհամարուի թէ դիպուածական սակաւաթիւ տողեր ըլլան ասդիս անդին ցրուած, որոնց ո՛ր և իցէ ներդաշնակ արձակարան նախնի գրուածոց մէջ ալ կարելի ըլլայ հանդիպել: Մէջ բերած օրինակներուս նայելով՝ շատ տեղ կը նշմարուի տաղաչափին արուեստական ճիգը՝ որով կը ջանայ շեշտերու և հանգիստներու փոփոխակի և գեղեցիկ դասաւորութիւն տալ, տեղ տեղ բառից կրկնութեամբ, տեղ տեղ շարադրութեան արտուղութեամբ և տեղ տեղ ալ դերանուանց զարգարանութիւններով:

Սակայն կարծես դժուարաւ համոզուող առարկողի մը ձայնն ականջիս մէջ կը հնչէ, ըսելով՝ թէ վերոյիշեալ տողերն, թէ և գեղեցիկ յօրինուած տողեր, բայց ասդիէն անդիէն ծաղկաքաղ հաւաքուած են, և ուրիշ բան չեն ցուցնեն, բայց միայն այս՝ թէ Սաղմոսարանն իրաւցնէ շատ ներզաշնակ շարադրութեամբ թարգմանուած է հայերենի մէջ, սակայն շատ հեռի է այդ յատկութիւնն այն աստիճանէն՝ որով մենք կարենանք Սաղմոսները ոտանաւոր գրութեանց կարգը դասելու վասն զի եթէ ուզենք փորձել ոտանաւորի տողերու բաժնելու ծայրէ ի ծայր ամբողջ սաղմոս մը, պիտի տեսնենք որ չափական գրութենէ շատ օտար են, թէպէտ և բաժնելիք տողերնիս խառն չափերով տողեր ըլլան:

Այսպիսի առարկողներու կարճ և համոզիչ պատասխան տուած կը համարիմ՝ Սաղմոսներէն մէկ քանին, ըստ զիպաց առնելով, վերածել չափական տողերու ձևի ներքեւ, և այստեղ ներկայացնել:

Ս Ա Ղ Մ Ո Ս Բ.

- 3.3.3 Ընդէր խոռովեցան հեթանոսք
4.3.3 Եւ ժողովուրդք խորհեցան ի սնտիս:
5.5 Յանգիման եղին թաղաւորք երկրի.
3.4.4 Եւ իշխանք ժողովեցան ի միասին

- 5.5 Վարն Տեան և վասն օծելոյ նորա:
3.3.3 Խրդեցուք ըզկապանս նոցա,
4.(2).4 Եւ ընկեցուք ի մէնջ՝ ըզլուծ նոցա:
4.4.3 Բնակեալն յերկինս՝ ծիծաղեացի ըզնոքօք,
5.5 Եւ Տէր ըզնոսա արամարհեցէ:
1.4.3 Յայնժամ խօսեցի ընդ նոսա
5.5 Բարկովեամբ խորով, և սրտաբառովեամբ
(2).4.3 (Խորով) խոռվեցուցէ ըզնոսա.
3.3.3 Եւ կացի թաղաւոր ի նմանէ
3.3 Ի վերայ Սիոնի
4.4.4.3 Լերին սրբոյ նորա՝ պատմել ինձ ըզնոսանս
3.3.3 Տէր ասաց ցիս որդի իմ ես դու, (Տեանն,
3.3 Եւ այսօր ծրայ գրեի.
2.4.4 Խրնդրեալ յինէն և տայ քեզ գնեթանոս
5.5 Ի ժամանգութիւն, և իշխանութիւն
4.3 Քեզ դամնայն ծագս երկրի:
3.3.4.3 Հովուեցես ըզնոսա զապազանա երկաթեալ,
4.4 Որդես զանձ ըբրտի փըշրեցես ըզնոսա:
4.5 Արդ, թաղաւորք, զայս ի միս առէք,
4.4 Խրատեցարուք ամենեքեան
5 Ուր դատիք զերկրի:
4.4 Ծառայեցէք Տեանն երկրւոյի,
5.5 (Եւ) Յընծայէք առաջի՝ նորա դողովեամբ.
4.3.4.4 Ընկալարուք ըզխրաա նորա՝ զի մի բարկացի (Տէր,
5.5.5 Եւ կորնչիցիք ի ճանապարհացն արգարու (թեան,
5.5.5 Ի ժամանակի՝ որդես բորբոք(եաց)ի բարկու (թիւն նորա:
3.4.4.3 Երանի՜ ամենեցուն՝ ոչք յուսացեալ են ի Տէր:

Ս Ա Ղ Մ Ո Ս Գ.

- 2.4.3 Տէր, զի՜ բազում եղին նեղիչք իմ,
4.4 Բազումք յարեան ի վերայ իմ.
5.5 Բազումք ասէին զանձնէ իմմէ (թէ) չէք
5.5 Փըրկովեին սորա առ Ասորւած իւր.
2.4.3 Այլ դու՜ Տէր, օշնական իմ, փառք իմ
5.5 Եւ բարձրացուցիւ ես զըլխոյ իմոյ:
2.4.3 Զայնի՜ իմով (եւ) առ Տէր կարգացի,
2.4.4 Լըսաւ ինձ ի լոննէ՜ սրբոյ իւրմէ:

- 4.3.4 Եւ նընջեցի և ի քո՛ն եղէ. զարթեալ,
 4.4 Եւ տէր ընդո՛նելի իմ է:
 3.4.4 Ոչ երկեայց ևս ի բերուոյ զօրաց նոցա,
 5.5.5 Ուր շուրջանակի պատեալ պաշարեալ եւ պա-
 (ձէին զիս:
 2.4.4 Առի՛ Տէր, և փըրկեա զիս, Աստուած իմ:
 4.4.3 Ձի գո՛ւ նարեր զամենեւեան՝ ոյք էին
 5.5 "Ի իս թըշնամութեամբ ի տարապարտուց.
 4.4.3 Եւ դատամունս մեղաւորաց փըշերեսն:
 1.4 Տեառն է փըրկութիւն
 3.4 Ի վերայ ժողովրդեան
 5 Քոյ՛ օրհնութիւն քո՛:

Ս Ա Ղ Մ Ո Ս Ժ.

- 2.4.4.3 Ի Տէր յուսացայ. որպէս ասիցէք ցանձըն իմ,
 5.5 փոխեայ ի լերիննս որպէս ճընճզուկ:
 3.3.3 Ձի ահա մեղաւորք լարեցին
 5 Չաղեղունս իւրեանց,
 5.5.5 Պատարաստ արարին ըզնեստ ի կապարճըն՝ ձը-
 (զեւ նոք խաւար
 3.3.3 Այնոցիկ՝ ոյք ուղիղ են սըրտիւք:
 3.3.4 Ձի զոր գուն չինեցեր՝ աւերեցին.
 3.4 Իսկ արգարըն զի՛ արար:
 4.3 Տէր ի տաճար սուրբ իւրում,
 3.4 Տէր յերկինս՝ յաթոս իւրում:
 3.3.3 Աչք նորա ի արնանկըս հալի,
 4.4.4 Արտեանունք նորա քննեն զորդիս մարդկան:
 4.4 Քննե՛ զարդարն և զամգարիշան.
 3.4.4 Որ սիրէ ըզմեղս՝ ասեալ զանձըն իւր:
 3.3 Տեղացե՛ ի վերայ
 4.4.3 Մեղաւորաց՝ որողայթ, հոր և ծրծուր.
 5.5 Այս մըբբիկ բաժին բաժակի նոցա:
 2.4.4 Արդա՛ր է Տէր, սիրէ զարդարութիւն.
 3.3.4 Չուղղութիւն տեսանին երեսք նորա:

Ս Ա Ղ Մ Ո Ս Ժ Դ.

- 4.4.3 Տէր ո՛վ կացցէ ի խորանի քում, կամ ո՛վ
 4.4 Բընակեցէ ի լեւուրն սուրբ (քո).

- 4.4.4.4 Որ զնայ ամբիժ, զարգարութիւն զործէ, խօսի
 5 Ի սըրտի իւրում, (զճըմարտութիւն
 2.4.4 Որ ոչ նենգաւորեաց լեղուաւ իւրով,
 5.5 Եւ չար բնկերի իւրում ոչ արար:
 3.4 Նախապիս նա ոչ առնու
 5 Ի մերձաւորաց.
 4.4 Արհամարհեալ է առաջի՛
 5 Նորա չարագործ:
 5.5 Չերկիրդածըս Տեառն փառաւոր առնէ.
 5.5 Երդնու ընկերի իւրում, (և) ոչ սըռէ.
 2.4.4 Չարծաթ իւր ի վարձու ոչ տայ. կաշան
 3.3.3 Ի վերայ իրաւանց ոչ առնու.
 2.4.4.3 Որ զայս արասցէ՛ (նա) մի՛ սասանեցի յա-
 (ւիտեան:

Ս Ա Ղ Մ Ո Ս Ի Զ.

- 3.3.3.3 Տէր լոյս իմ և կեանք իմ, յումէ՛ ևս երկեայց.
 4.4 Տէր աղաւէն կենաց իմոց,
 3.3 Եւս յումէ՛ դողացայց:
 4.4 Ի մերձեալ առ իս չարաց
 4.4 Ուսկ զմարմին իմ. նեղիչք իմ
 4.3.4.3 Եւ թըշնամիք իմ նորա տըկարացան և անկան:
 5 Թե՛ պատրաստեցի
 3.4 Ի վերայ իմ պատերազմ,
 5.5 Ոչ երկիցէ սիրտ իմ, թե՛ յարիցէ
 3.5 Ի վերայ իմ ճակատամարտ.
 2.3.3.3 Սակայն և աշուիկ ի քեզ, Տէր, յուսացայ:
 2.3.3 Ըզմի խընդրեցի ի Տեառնէ,
 3.3.3.3 Եւ ըզո՛յն աղաչմա՛ր՝ բնակել ինձ ի տան Տեառն
 5.5 Չամենայն աւուրս կենաց իմոց:
 5.5 Տեսանել ինձ Տեառն ըզվայելութիւն
 3.4.3 Եւ հրաման տալ ի տաճարի նորա:
 2.4.4.3 Ծածկեաց ի խորանի իւրում յաւուր չարի զիս
 5.4.5 Ընդ յարեաւ արար զիս ի ծածկոյթ խորանի
 4.4 Ի վիմէ ընթրճը արարեք զիս (իւրում:
 2.4 Եւ ա՛յծբմ բարձր արա
 5.5 Չուրի իմ ի վերայ թըշնամեաց իմոց:
 3.4 Շուրջ եղէց և մատուցից
 4.4.4 Ի խորանի նորա պատարագս օրհնութեան.
 3.3.4 Որհնեցից և սարմուս սասցից Տեառն:
 4.4.3 Լո՛ւր, Տէր, ձայնի խումբ, առ քեզ կարգացի

- 3.4 Ողորմեա ինձ և լուր ինձ,
 2.4.4.3 Ձեքեզ անասց սիրտ իմ, և խնդրեցին երեսը
 4.4 Չերեսը քո, Տէր, խնդրեցին. (իմ
 1.4.4.4 Մի՛ դարձուցաներ զերեսը քո յինէն, և մի՛
 3.4.4.3 Խոտորիբ բարկութեամբ ի ծառայէ քումեւ,
 3.3 Օգնական իմ լիբ, Տէր. (Տէր,
 5.5.5 Եւ մի՛ անարգեր զիս և մի՛ թողուր, Աստուած
 4.4 Հայր իմ և մայր իմ թողին զիս, (փրկիչ իմ
 3.3 Եւ Տէր զիս ընկալաւ.
 4.4 Օրէնքդէտ արա զիս, Տէր.
 5.5 Ի ճանապարհի քում առաջնորդեա
 4.4 Ինձ ի շաւիղս քո ուղիղս:
 5.5 Վասն թրջնամեաց իմոց մի՛ մատնէր
 3.5 Չիս ի ձեռքս նեղաց իմոց.
 5.5 Յարեան ի վերայ իմ վրայք մեղաց,
 4.4.4 Եւ սրտեցին ինձ յանօրէնութեան իւրեանց:
 4.3 Հաւատացի տեսանիւ
 4.4.3 Ըզբարութիւն Տեսուն յերկիր կենդանեաց.
 3.5 Համբեր Տեսուն և քաջալերեաց.
 4.4 Չօրացի սիրտ քո, (և) համբեր Տեսուն:

Ս Ա Ղ Մ Ո Ս Ճ Ի Բ.

- 3.4.4.4 Աս քեզ, Տէր, համբարձի զաչս իմ որ բնա-
 (կեալդ ես ի յերկինս.
 3.5.5 Որպէս աչք ծառայից ի ձեռքս տերանց իւ-
 (րեանց.
 3.5.5 Որպէս աչք աղանդոյ ի ձեռքս տիկնոջ իւրոյ,
 4.4.3 Այնպէս են աչք մեր առ քեզ, Տէր, Աստուած
 2.4.4 Մինչև ողորմեացիս ի վերայ մեր: (մեր.
 5.5 Ողորմեաց մեզ, Տէր, ողորմեաց մեզ,
 5.5 Ձեք բազում լրցար արամարմանօք.
 5.5.5 Եւս առաւել լրցան անձի՛նք մեր նախատանօք՝
 5.5.5 Որ նախատէին (զմեզ, և) արամարմանօք ամ-
 (բարտաւանից:

Ս Ա Ղ Մ Ո Ս Ճ Լ Զ.

- 3.4.4.3 Աս գետըս Բաբելացոց անդ նըստէաք և լայաք,
 5.5 Որպէս յիշեցաք մեք անդ ըզՍիւն. (մեր,
 5.5.5 Ի մէջ ուռեաց նոցա կախեցաք զկտակարանըս

- 1.4.4.3 Անդ հարցանէին զերէւք մեր զբանս օրհնու-
 (թեան,
 3.4.4 Գերեզմա՛րք մեր ստիպէին զմեզ (և) ասէին.
 4.4.3 Օրհնեցէք մեզ յօրհնութեանէս Սիւնի.
 3.3 Իսկ զհարգ օրհնեցուք
 5.5 Չօրհնութիւնըս Տեսուն յերկիր օտար,
 5.5 Եթէ մտացայց զքեզ կըրուաղէմ,
 3.3.3 Մոռացի զիս աջ իմ. կըցեցի լեզու իմ
 5.5 Ի քիմս իմ, թէ ոչ յիշեցիք ըզքեզ.
 3.3 Թէ ոչ նախ նուազեցից (մոյ),
 5.5 Չքեզ, կըրուաղէմ, սկիզբն ուրախութեան (ի-
 5.5.5 Յիշեա, Տէր, զօրդիմն Եդուփայ՝ յաւուրն Ե-
 4.3 Ուք ասէին. Քակեցէք, (բուաղեմի.
 3.4.3 Քակեցէք, մինչև ի հիմն հասուցէ:
 3.4.4 Դուռաբը Բաբելացոց թըլուռառական.
 3.3 Երանի՛ որ հասուց
 4.4.3 Ըզհատուցումըն՝ զոր գու մեզ հատուցեր.
 3.3 Երանի՛ որ կալաւ
 3.4.3 Ըզմանկունըս քո, ևհար ըզքարի:

Ս Ա Ղ Մ Ո Ս Ճ Խ Թ

- 3.3.4 Ի խորոց կարգացի առ քեզ, Տէր, Տէր.
 5 Լուր ձայնի իմում.
 5.5.5 Եղիցին ականջք քո լրսել ըզձայն աղօթից
 5.5 Չանօրէնութիւնս իմ թէ քըննեա, Տէր, (իմոց,
 5.5 Տէր, իսկ ո՛ կարէ կալ առաջի քո.
 3.4 Ձի ի քէն է քաւութիւնս:
 3.4.4 Վասն անուան քո համբերի, Տէր, համբեր անձն
 4.3 Յուացաւ անձն իմ ի Տէր. (իմ բանի քում,
 3.4 Ի պահէ առաւօտու
 5 Մինչև յերեկոյ,
 3.4.3 Ի պահէ առաւօտու յուացաւ
 5 Խորայէլ ի Տէր:
 3.5 Ի Տեսունէ է ողորմութիւն,
 3.4.4 Եւ բազում ի նըմանէ է փրկութիւն,
 4.3 Եւ նա փրկէ զԽորայէլ
 3.5 Յամենայն նեղութեանց նորա:

ՎԵՐՋԻՆ՝ ԱՐՏԱՔՈՅ ՍԱՂՄՈՍԱՅ

- 3.3.4 Փոքր էի եւ յեղբարս իմ, և կըրտսեր
5 Ի տան հօր իմոյ:
4.4.3 Աբաթէի եւ ըզրեշտակ հօր իմոյ:
1.4.4 Չէոք իմ արարին սաղմոսարան,
3.4 Էւ մատունք իմ կազմեցին
5 Գործի օրհնութեան:
3.4.3 Իսկ արդ, ո՞ր պատմեցէ զայս Տեառն իմում:
3.4 Ինքին Տէր ամենայնի
3.3 Լըւիցէ ամենայն: (Ի հօտէ
4.3.4.4 Որ առաքեաց ըզրեշտակ իւր և ամբարձ զիս
5.5.5 Խաչանց հօր իմոյ, և օծ զիս յօծումն իւրոյ:
2.4.4 Եղբարք իմ զեղեցիկք և մեծամեծք (Իւրոյ:
2.4.3 Էւ ո՞չ հաճեցաւ Տէր ընդ նոսա:
2.4.3 Եւե՛ր եւ ընդ առաջ աշխարհոյն
4.4 Էւ նշովեցի զկուրսս նորս,
4.3 Հանի գտուսերն ի նմանէ,
3.3 Էւ հատի զզուլս նորին,
3.3 Էւ բարձի զնախատինս
2.4 Յորդանոյն խառայելի:

Այսօրինակ խառն տողերով յօրինուած են նաեւ Ելից և Դատաւորաց զըքերուն մէջ գտնուած օրհնութիւնն խառայեալացոց և Բարակայ և Դերովրայ և այլոց վերաբերեալ երգերը: Թէ՛ այս վերջիններուս և թէ՛ վերը մէջ բերուած Սաղմոսներու և մնացածներուն ոտանաւորները՝ (ինչպէս վերը տեսանք անփոփոխ կերպով շարադրութեան) վերածուած են և կամ կրնան վերածուիլ զանազան չափով տողերու, իրենց բնական առողջանութեան օրէնքին հետեւելով: Սակայն ասով ըսել չեմ ու-

զեր թէ Նախնիք այսպիսի ոտանաւորները կը շինէին ճիշդ այն կանոններուն ճշգուծութիւններով՝ որով մենք կը շինենք այսօր հայկական չափին տողերը: Նախնիք շատ աւելի ազատութիւններ գործածեր են. աւստնց բազմաթիւ զատուղութիւնները այսօր սովորութեանէ դուրս են: Չի պահանջուիր ի հարկէ որ արուեստ մը ի սկզբան ամէն կատարելութիւններով օծաւուած ըլլայ. ուստի տաղաչափական արուեստն ալ հետզհետէ կատարելագործուած է, և աններդաշնակ զարտուղութիւնք կամ մերժուած են յաջորդ տաղաչափներէ և կամ ըստ կարելոյն ներդաշնակ կանոնաւորութեան վերածուած: — Աւելորդ է առարկելը թէ վերոյգրեալ Սաղմոսները կամ անոնց նմանները ոտանաւորէ աւելի՝ կրնան ներդաշնակ արձակ շարադրութիւն կոչուիլ, որովհետեւ ոտանաւորն ալ լայն առմամբ ուրիշ բան չէ՝ բայց եթէ ներդաշնակ շարադրութիւն՝ հետզհետէ աւելի ներդաշնակուած՝ դարերու ընթացքին մէջ:

Այսքան և բազմաթիւ համանման օրինակներէ հաստատուած իրողութիւն մը՝ չի կրնար զիպուածական ներդաշնակ շարադրութեան մ'արդիւնք ըլլալ, և հարկ է խոստովանիլ որ մեր Շարականաց մէջ խառն տողերով ի գործ դրուած տաղա-

չափութեան արուեստին կը հանդիպինք նաեւ Սուրբ Գրոց երգերու կամ օրհնութեանց թարգմանութեան մէջ, և եթէ ոչ ծայրէ ի ծայր՝ բայց շատ ու շատ տեղեր Սողովմոնի և Յովբայ գրոց և մանաւանդ Դաւթի Սաղմոսաց մէջ:

Սակայն մինչեւ հիմայ հաստատածնուս ընդառաջ կ'ելլէ ոչ թեթեւ դժուարութիւն մը. այսինքն է, հայկական այս տեսակ խաֆն տողերով և չափերով յօրինուած կ'երեւին նաեւ խորենացիէն մեզի աւանդ մնացած Գողթան երգերու պատառիկները, որոնք՝ ինչպէս ծանօթ են՝ հետեւեալներն են.

Ա.

- 2.5 Երկնէր երկին և երկիր.
2.5 Երկնէր և ծիրանի ծով.
4.4.3 Երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն.
4.4 'Պ' եղեգան փող՝ ծուխ ելանէր.
4.4 'Պ' եղեգան փող՝ բոց ելանէր.
4.4.4.3 Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր. նա հուր հեր.
4.4 Ասա թէ բոց ունէր մորուս, (ունէր.
4.4 Խաչկունքն էին արեգակունք:

Բ.

- 2.4.3 Հեծաւ արի արքայն Արտաշէս
2.4 Ի սեաւն զեղեցիկ.
3.3 Եւ հանեալ զոսկէօդ
5 Շիկափոկ պարանն,
3.4.4 Եւ անցեալ որպէս զարծուի սրբաթեւ ընդ գետն,
3.3 Եւ ձրեալ զոսկէօդ
5 Շիկափոկ պարանն,

- 4.4.3 Ընկեց ի մէջք օրիորդին Ալանաց.
2.3.4.4 Եւ շատ ցաւեցոյց ըզմէջք փափուկ օրիորդին,
5.5 Արազ հասուցեալ ի բանակն իւր:

Գ.

- 5.5.5 Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշէսի,
2.3.4.3 Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթին,
(կանն:

Դ.

- 5.5 Տենչայ Սաթինիկ տիկինըն տենչանս.
5.5 Զարտախոյր խաւարտ և զտից խաւարծի
3.4 Ի բարձիցն Արգաւանայ:

Ե.

- 3.3.3 Ո՛ր տայր ինձ ըզծուի ծրխանի,
4.4 Եւ զառաւօտն Նաւասարդի,
4.4.3 Զվազեն երանց և ըզվազեն եղջերուաց.
4.4.4 Մէք փող հարուաք և թըմբղի հարկանէաք:

Զ.

- 4 Մինչ դու դնացեր
3.3.3 Եւ զերկիրս ամենայն՝ դ քեզ տարար,
5.2.5 Եւ աւերակացիս որպէս թագաւորեմ:

Է.

- 4.4.3 Դու յորս հեծցիս յԱզատ ի վեր ի Մասիս.
4.3.4.3 Ըզքեզ կալցին քաջք, տարցին յԱզատ ի վեր
3.3.3 Անդ կացցիս և ըզլոյս մի՛ տեսցես: (ի Մասիս.

Ը.

- 4.4 Հատուած դնացեալ Վարդգէս մանուկն
3.3 Ի Տուսաց զաւանէն
5 Ըզբասաղ զետով,
4.4 Եկեալ նրստեալ ըզՇրէշ բըլլով
3.3 ԶԱրաթմէզ քաղաքաւ
5 Ըզբասաղ զետով,
4.4.3 Արեւի կոփել զգունն Երուանդայ արքայի:

Մի և նոյն արուեստն է՝ ինչ որ տեսանք Շարականաց, Սաղմոսաց և այլ տաղաչափական գրուածոց մէջ. դժուարութիւնը ժամանակագրութեան կը վերաբերի: Համարելով որ Խորենացւոյն այս յիշածները բառացի կերպով նոյն ըլլան հին գողթան թուեւեաց կամ վիպասանական երգերու հետ, ինչպէս կարելի է հայկական տաղաչափութեան արուեստը՝ Քրիստոսէ հինգ կամ վեց դար առաջ ստեղծուած և գործադրուած չհամարիլ, որով չհամարիլ հայ ազգին սեփական արուեստ մը և կամ հնադարեան ազգերէ առնուած:

Այս դժուարութեան լուծումը՝ եթէ չըկարենամ ուրիշ առիթով մը տալ՝ նոյնը հմտագոյն բանագիտաց ճարտարութենէն կ'ակնկալեմ:

1899



12m - U.B. L. B. 1/2

553

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1605518

